ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՍՄԲԱՏ Բ ՏԻԵԶԵՐԱԿԱԼ
## ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ե 381

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ պատմության ֆակուլտետի*
*գիտական խորհուրդը:*

*Կազմին Հաղպատի վանքի Ս. Նշան եկեղեցու քանդակն է, որտեղ պատկերված են Սմբատ Բ թագավորը (աջից) և նրա եղբայր՝ Տաշրաց թագավոր Գուրգենը:*

**Գրախոսներ՝** պ.գ.դ., պրոֆ. Էդիկ Մինասյան
պ.գ.թ., դոց. Արամ Հովհաննիսյան

Եղիազարյան Ա.
Ե 381 Սմբատ Բ Տիեզերակալ թագավոր Հայոց / Ա. Եղիազարյան.- Եր., ԵՊՀ հրատ., 2021, 142 էջ:

Մենագրության մեջ ներկայացված է Հայոց թագավոր Սմբատ Բ Տիեզերակալի գահակալության շրջանի (978-990 թթ.) պատմությունը: Լուսաբանվել են խնդրո առարկա ժամանակաշրջանի հայոց պատմության բոլոր կարևորագույն հիմնահարցերը, ավատատիրական մասնատվածության խորացման հետևանքով երկրում նոր թագավորությունների ի հայտ գալու գործընթացը, ինչպես նաև Սմբատ Բ արքայի ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական դրսևորումներն ու արդյունքները:

Հասցեագրված է հայագետներին և կովկասագետներին, ինչպես նաև միջնադարով հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2502-6

© ԵՊՀ հրատ., 2021
© Եղիազարյան Ա., 2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ........ 5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՍՄԲԱՏ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ........ 7
1.1. Սմբատ Բ թագավորի գահակալությունը և Անիի պաշտպանական նոր համակարգի ստեղծումը ........ 7
1.2. Սմբատ Բ-ի «տիեզերակալ» տիտղոսը ........ 23
1.3. Հարաբերությունների սրումը Կարսի թագավոր Մուշեղի հետ ........ 33
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ ........ 38
2.1. Տաշիրքի թագավորության հիմնադրումը ........ 38
2.2. Թագավորության հռչակումը Փառիսոսում ........ 51
2.3. Սյունիքի թագավորության ստեղծումը ........ 58
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՄԲԱՏ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ........ 73
3.1. Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանի և հայերի նկատմամբ 970-ական թթ. վերջին և 980-ական թթ. ........ 73
3.2. Սմբատ Բ-ի մասնակցությունը Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին ........ 85
3.3. Բագրատունյաց թագավորությունը և ամիրայությունները Սմբատ Բ-ի օրոք ........ 91
3.4. Թագավորության արտաքին և ներքին դրությունը 980-ական թթ. երկրորդ կեսին ........ 97
3.5. Սմբատ Բ-ի մահվան հանգամանքները ........ 105
ՎԵՐՋԱԲԱՆ ........ 110
Summary ........ 112
Резюме ........ 115
ՑԱՆԿԵՐ ........ 118
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ........ 129

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Հայոց Սմբատ Բ Տիեզերակալ թագավորի գահակալության շրջանը (978-990 թթ.) բեկումնային էր Բագրատունյաց թագավորության պատմության մեջ: Արդեն Աշոտ Գ Ողորմածի (953-978 թթ.) գահակալության վերջին տարիներին Բագրատունյաց թագավորության ներքին ու արտաքին դրությունը մեծապես բարդացել էր: 960-ական թթ. երկրորդ կեսից ի վեր Բյուզանդական կայսրության ծավալապաշտական քաղաքականության թիրախում հայտնված թագավորությունը մեծ դժվարությամբ միայն կարողացավ հաղթահարել ներքին քաղաքական և հոգևոր-կրոնական ճգնաժամը, սակայն կորուստներն անդառնալի էին: Բյուզանդիան տիրել էր Տարոնին, դավադիր քաղաքականությամբ Վասպուրականի տերերի շրջանում վերարթնացրել Գագիկ Արծրունու մահից (943 թ.) հետո կարծես վերացած գահերեցական նկրտումները, իսկ Կարսում ստեղծվել էր Բագրատունիների առանձին թագավորություն (975 թ.), որով էականորեն կրճատվել էին Բագրատունիների՝ Հայաստանում և Այսրկովկասում առաջնակարգ դիրքի հասնելու համար հիմք հանդիսացած տարածքային, նյութական ու մարդկային ռեսուրսները: Այնուհետև Անիի տիրակալն արդեն չուներ այն հզորությունը, որը նրա համար ապահովում էր գերակայություն Հայաստանում և քրիստոնյա Այսրկովկասում: Նման պայմաններում 978 թ. Անիում գահ բարձրացավ Սմբատ Բ Տիեզերակալը, որին վիճակված էր բախվել հայոց թագավորության շրջակա երկրներում տեղի ունեցող փոփոխություններից բխող մարտահրավերներին և ավատատիրական մասնատվածության ծանր հետևանքներին: Այդ ժամանակ զգալիորեն թուլացած Արաբական խալիֆայության միջինարևելյան տիրույթներում տնօրինում էին իրանական ժողովուրդների առաջնորդները, որոնց հաջողվել էր տիրանալ Բաղդադին, նվաճել Միջագետքի ու Ասորիքի մեծ մասը և հարավից ընդհուպ մոտենալ Հայաստանին: Միևնույն ժամանակ հզորության գագաթնակետին էր գտնվում Բյուզանդական կայսրությունը, որը, սակայն, երբեմն-

երբեմն ցնցվում էր գահակալական պայքարից: Կարևոր գործընթացներ էին տեղի ունենում նաև Ատրպատականում, որտեղ աստիճանաբար տիրապետող դիրքի էին հասնում Թավրիզի տիրակալ Ռավվադյանները: Նախկինից լիովին տարբերվող իրավիճակ էր ստեղծվել քրիստոնյա Այսրկովկասում, որտեղ հայտնվել էին այնպիսի ազդեցիկ դերակատարներ, ինչպիսիք էին աբխազաց թագավոր Բագրատ Գ-ն (978-1014 թթ.) և Տայքի կուրապաղատ Դավիթը (961-1000 թթ.):

Սմբատ Բ-ի գահակալության շրջանում Բագրատունյաց Հայաստանում խորանում էր ավատատիրական մասնատվածությունը: 970-ական թթ. վերջին ու 980-ական թթ. սկզբին մեկը մյուսի հետևից հռչակվեցին Տաշիրքի, Փառիսոսի և Սյունյաց թագավորությունները: Նոր թագավորությունների ի հայտ գալն ավարտին հասցրեց Բագրատունյաց թագավորության մասնատման գործընթացը, որի հետևանքով նրա դերակատարությունն տարածաշրջանային հարաբերություններում էապես նվազեց՝ սահմանափակվելով զուտ հարևան տիրակալներին աջակցություն ցուցաբերելով: Սակայն արդեն 980-ական թթ. ավարտին Սմբատ Բ-ն հետևողական ջանքերի շնորհիվ կարողացավ ամրապնդել գերակա դիրքը երկրում՝ իր շուրջը համախմբելով բոլոր ազդեցիկ ավատատերերին: Նրան հիմնականում հաջողվեց հաղթահարել թագավորությանը սպառնացող ներքին ու արտաքին մարտահրավերները, զբաղվել երկրի շենացման աշխատանքներով, կառուցապատել ու ընդարձակել մայրաքաղաք Անին և արդյունավետորեն մասնակցել քրիստոնյա Այսրկովկասի կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձություններին:

Ասվածի ծիրում Սմբատ Բ Տիեզերակալ թագավորի գահակալության շրջանի համակողմանի ուսումնասիրությունը և պատմաքաղաքական գնահատականը արդի հայ պատմագիտության կարևոր խնդիրներից են, առավել ևս, որ նախկինում հետազոտողները դրանցով խորությամբ չեն զբաղվել:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
# ՍՄԲԱՏ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

## 1.1. Սմբատ Բ թագավորի գահակալությունը և Անիի պաշտպանական նոր համակարգի ստեղծումը

Սմբատ Բ-ի գահակալությունը սկիզբ առավ Բագրատունյաց թագավորության համար խիստ դժվարին և ներքին ու արտաքին մարտահրավերներով լեցուն ժամանակաշրջանում:

Ըստ Ասողիկի՝ «Զայսու ժամանակաւ մեռաւ թագաւորն Հայոց՝ աւրհնեալն Աշոտ՝ ի ՆԻԶ (426) թուականին (մարտ, 977 թ.-մարտ, 978 թ. – Ա. Ե.), եւ ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ՝ որդի նորա ամս ԺԳ (13 - Ա.Ե.)»[1]: Արդեն ցույց ենք տվել, որ Աշոտ Ողորմածի մահը վրա է հասել 978 թ. հունվարի 3-ին[2]: «...Ի նոյն աւուր թագաւորեաց» արտահայտությունը ցույց է տալիս, որ Սմբատը Բագրատունյաց գահին է բազմել հոր մահից

---

[1] Տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 760:

[2] Ըստ «Յայսմաւուրքի»՝ Աշոտ Գ-ի հիշատակի (վախճանի) օրը նշվում էր մարերի 13-ին: Տե՛ս «Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի յայսմաւուրաց Տէր Իսրայէլի», Կոստանդնուպօլիս, 1834, էջ 226: Ճիշտ էր Մ. Օրմանյանը, երբ առաջարկում էր ի տարբերություն «Յայսմաւուրքի» 1834 թ. հրատարակիչների, որոնք հաշվարկը կատարել են անշարժ տոմարով և մարերի 13-ը նույնացրել մայիսի 20-ին, հաշվարկել շարժական տոմարով, քանի որ նրա մահվան շրջանում գործում էր հենց շարժական տոմարը: Այդպիսով ստացվում է հունվարի 3-ը: Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Կոստանդնուպոլիս, հրատ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1912, § 779, սյուն 1129: Քանի որ ըստ ժամանակակից պատմիչ Ասողիկի՝ Աշոտ Գ-ն երկրային կյանքին հրաժեշտ է տվել հայոց 426 թ. (մարտ, 977 թ.-մարտ, 978 թ. – Ա. Ե.), ապա ակնհայտ է, որ նրա մահը վրա է հասել 978 թ. հունվարի 3-ին:

անմիջապես հետո՝ անհապաղ («ի նոյն աւուր») կազմակերպ-
ված թագադրության արդյունքում:

Նախկինում արդեն առիթ ունեցել ենք անդրադառնալու պատմագիտության մեջ 1920-ական թթ. շրջանառված և 1970-ական թթ. թարմացված՝ Աշոտ Գ-ի օրոք գահակցության ինստիտուտի առկայության վարկածին[3], ըստ որի՝ Սմբատը նախքան 978 թ. միանձնյա թագավորելը 958 թվականից եղել է հոր՝ Աշոտ Գ-ի գահակիցը: Ցույց ենք տվել, որ այդ վարկածի հիմնավորման համար ներկայացվող փաստերն ու փաստարկները թյուրիմացության հետևանք են[4]: Այստեղ միայն նշենք, որ «Հայոց պատմության» նոր հրատարակված բազմահատորյակում այդ նույն վարկածը հիմնավորելու համար հղված է Անանիա Մոկացու «Յաղագս ապստամբութեանն տանն Աղուանից» երկը[5], որտեղ մասնավորաբար վկայված է, թե 958 թ. Հայոց արևելից կողմերի իշխաններն Աշոտ Գ-ի մոտ ուղարկելու համար ընտրեցին «զայր մի հոգեւոր...՝ Դաւիթ անուն..., եւ առաքեն ի Շիրակ գաւառ, ի նստոցն լեալ տեառն Սմբատայ Հայոց թագաւորի, Շիրակավան կոչեցեալ»[6]: Փաստորեն, վկայությունից փորձ է կատար-

---

[3] Տե՛ս **Մովսէսեան Ղ.**, Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923, էջ 24, **Մաթևոսյան Ռ.**, Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 1, էջ 74-79, նույնի՝ Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 147-148:

[4] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Գահաժառանգության խնդիրը Բագրատունյաց Հայաստանում և գահակցության վարկածը, «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2015, ԺԲ, էջ 55-68:

[5] Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Եր., «Զանգակ» հրատ., 2014, էջ 55:

[6] «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն», «Արարատ», 1897, Գ, էջ 144:

վել բխեցնել, թե իբր Աշոտ Գ-ի օրոք Շիրակավանում նստում էր Սմբատ թագավորը, որը ոչ այլ ոք էր, եթե ոչ Աշոտ Գ-ի որդի Սմբատը, ուստի, եթե 958 թ. նա հիշատակված է որպես թագավոր, ուրեմն եղել է հոր գահակիցը: Իրականում Անանիա Մոկացու բերված տեղեկությունը միայն նշանակում է, որ Շիրակավանը նախկինո՛ւմ է եղել հայոց թագավոր Սմբատի նստոցը: «Լեալ»-ը ցույց է տալիս, որ այդպես է եղել Դավթի այցից առաջ, անկասկած, Սմբատ Ա թագավորի օրոք (891-914 թթ.): Այլապես, եթե խոսքը վերաբերեր Սմբատ Բ-ին, ապա լիովին բավարար կլիներ «ի նստոցն տեառն Սմբատայ Հայոց թագաւորի» շարադրանքը: Շիրակավանը նույնական է Երազգավորսին, որը, իրոք, եղել է Սմբատ Ա-ի տիրույթ-նստոցը: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ «...չուէ, գայ, հասանէ ըստ համբաւոյն հասելոյ՝ Սմբատ որդի արքային [Աշոտ Ա-ի (887-891 թթ.) որդի Սմբատը – Ա. Ե.], ի սեպհական կալուածն Երազգաւորից Շիրակաւան»[7]: Ուստի պատահական չէ, որ պատմիչները, նկարագրելով Աշոտ Գ-ի մահը, նշում են, որ «ի նոյն աւուր (իմա՛ Աշոտ Գ-ի մահվան օրը – Ա. Ե.) թագաւորեաց Սմբատ՝ որդի նորա»[8], ինչը բացառում է Աշոտ Գ-ի ու Սմբատ Բ-ի գահակցությունը:

Ըստ Ասողիկի՝ Սմբատ Բ-ի առաջին ձեռնարկներից մեկը Անիի նոր՝ Աշոտ Գ Ողորմածի օրոք կառուցված, այսպես կոչված, Աշոտաշեն պարսպից դուրս տարածվող թաղամասերն ընդգրկող պարսպի (գրականության մեջ՝ Սմբատաշեն) կառուցումն էր, որի հստակ ժամանակը, ցավոք, նա չի նշում[9]: Միջնադարյան միակ հեղինակը, որը հիշատակում է Սմբատաշեն պարիսպների կառուցման թվականը, հավանաբար Մխիթար

---

[7] «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 446:

[8] **Ասողիկ**, էջ 760, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի» (այսուհետև՝ Վարդան վարդապետ), Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1862, էջ 90 և այլք:

[9] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

Անեցին է: Հեղինակի երկի 1983 թ. հրատարակության հավելվածում տեղ գտած «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» գրվածքում[10], մասնավորապես, նշված է. «Իսկ ի թագաւորելն ի վերայ Հայոց արքային Սմբատայ, հիմնադրէ կրկին պարիսպ քաղաքին Յանւոյ, լիր արկեալ ի Ծաղկոցաց ձորէն մինչև Ախուրան գետ. ի թագաւորութեան Յունաց Վասլի չորրորդ ամին և Սմբատայ առաջին ամին, ի հայրապետութիւն Խաչկայ, ի թվին Հայոց ԴՃԻԸ (428 թ.՝ մարտ, 979 թ. - մարտ, 980 թ.)»[11]: Տեղեկության մեջ ամեն ինչ հանգում է 979 թվականին. Վասիլ Բ-ի կայսրության (սկսած 976 թվականից) չորրորդ տարին 979 թվականն է՝ ըստ տարիների հաջորդականության հաշվարկի (976 թ.՝ առաջին տարի, ...979 թ.՝ չորրորդ տարի) և Սմբատ Բ-ի գահակալության առաջին տարին՝ ըստ տարեշրջանների հաշվարկի (978 թ. հունվար-979 թ. հունվար): Սամվել Անեցին էլ, թեև թվական չի նշում, գրում է, որ «Իսկ եւ իսկ ընդ թագաւորելն Սմբատայ լիր արկեալ պարսպի քաղաքին Անոյ...»[12], այսինքն՝ ուղղակիորեն մատնանշում, թե պարսպի շինարարությունը սկսվել է Սմբատ Բ-ի՝ գահ բարձրանալուց անմիջապես հետո:

Չնայած վերոհիշյալին՝ պատմագիտության մեջ Սմբատաշեն պարիսպների կառուցումը հազվադեպ է թվագրվել կամ ներկայացվել է այնպես, կարծես թե hսկայածավալ պարսպի կառուցումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում՝ 979 թ.[13]

---

[10] «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» վերնագրված երկը Մխիթար Անեցուն է վերագրել Գ. Աբգարյանը: Տե՛ս **Աբգարյան Գ.**, Մատենագրական նորույթներ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1964, № 1, էջ 75-77:

[11] **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց (այսուհետև՝ Մխիթար Անեցի), աշխատասիրութեամբ Հ. Մարգարյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 107:

[12] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թ. (աշխատասիրությամբ՝ Կ. Մաթևոսյանի), Եր., «Նաիրի» հրատ., 2014, էջ 178:

[13] Տե՛ս **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, Վենետիկ, ի Ս. Ղազար, հատ. Բ, 1785, էջ 851:

կամ 989 թ.[14]: Այս առումով միայն մանրամասնենք, որ «Հայոց պատմության» նոր բազմահատորյակում Սմբատաշեն պարսպի կառուցման՝ 989 թվականի պնդման հիմնավորման համար հղում է կատարված Ասողիկի, Վարդան վարդապետի և Մխիթար Անեցու տեղեկություններին: Զարմանալիորեն դրանցից և ոչ մեկը հնարավորություն չի ստեղծում պարսպի կառուցումը Սմբատ Բ-ի գահակալության ավարտին տեղադրելու համար: Ասողիկը պարսպի շինարարության թվական, ինչպես նշվեց, չի հիշատակում, բայց պարսպի շինության մասին խոսում է անմիջապես Սմբատ Բ-ի գործունեության մասին շարադրանքը սկսելիս[15], Վարդան վարդապետը գրում է, որ «...առնու զթագն երէց որդին Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ. սա զմեծանիստ պարիսպն Անւոյ շինեաց...»[16], այսինքն՝ անմիջապես գահ բարձրանալուց հետո, Մխիթար Անեցին ևս նշում է, որ «Սմբատ, որդի Աշոտոյ՝ [ամս] ԺԳ: Սա պարսպէ զքաղաքն Անի...»[17]: «Հայոց պատմության» նոր բազմահատորյակի Բ հատորի Բ գրքի խնդրո առարկա հատվածի հեղինակ Վ. Վարդանյանը հղում է Մխիթար Անեցու երկի 1983 թ. հրատարակության հենց այդ հիշատակությանը[18], մինչդեռ, ինչպես տեսանք, նույն հրատարակության հավելվածում հրապարակված «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» գրվածքում առկա է պարսպի շինարարության սկզբնավորման թվականը՝ հայոց 428 թ. (մարտ, 979 թ.-մարտ, 980 թ.), որը, փաստորեն, անտեսված է:

---

[14] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, 1976, էջ 130, 371: Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գիրք երկրորդ, էջ 56, **Հարությունյան Վ.**, Անի քաղաքը (միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից), Եր., Հայաստանի պետական հրատ., 1964, էջ 41, **Կարապետյան Ս.**, Անի ՌԾ (1050), Եր., «Բյուրակն», 2011, էջ 6, **Հասրաթյան Մ.**, Անիի ճարտարապետությունը, «Պատմաբանասիրական հանդես», 2011, № 3, էջ 4-5 և այլն:

[15] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

[16] **Վարդան վարդապետ**, էջ 90:

[17] **Մխիթար Անեցի**, էջ 67

[18] Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գիրք երկրորդ, էջ 56:

Վերադառնալով դեպքերի ժամանակակից պատմիչ Ասողիկին՝ նշենք, որ նա պարսպի կառուցման թվական չի նշում, սակայն նրա ներկայացրած՝ Սմբատ Բ-ի գործողությունների շարքում սկզբում պարիսպների կառուցումն է, հետո՝ Կարսի Մուշեղ թագավորի (975-984 թթ.) հետ բախումը[19]: Քանի որ Սմբատ Բ-ի գործունեության ժամանակագրության վերաբերյալ այլ աղբյուրներում տեղեկություններ չկան, մնում է վստահել Մխիթար և Սամվել Անեցիներին, ինչպես նաև Ասողիկի՝ իրադարձությունները ժամանակագրական հերթականությամբ ներկայացնելուն և նշել, որ պարիսպները սկսել են կառուցվել Սմբատ Բ-ի գահակալության սկզբին:

Արդ, անդրադառնանք Սմբատաշեն պարսպի շինարարությանը: Ըստ Ասողիկի՝ «Սա (Սմբատ Բ-ն – Ա. Ե.) լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրեան գետոյ մինչեւ ցձորն Ծաղկոցաց, կրով եւ վիմաւք մածուցեալ, մահարձանաւք եւ աշտարակաւք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, եւ մայրազերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բեւեռապինդ ամրացուցեալ»[20]: «Լիր արկեալ» արտահայտությունը նշանակում է «Լնուլ զխրամ կամ զփոս կամ զձոր և բարձրացուցանել», իսկ Ասողիկի «Սա լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ» հիշատակությունը մակաբերվում է որպես «Լիր արկեալ պարսպի քաղաքին Անւոյ»[21]: Ասողիկի երկի աշխարհաբար թարգմանության մեջ այս հատվածը ներկայացված է «Սա (իմա՛ Սմբատը – Ա. Ե.) խրամն ամբողջությամբ լցնել է

---

[19] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

[20] Նույն տեղում:

[21] «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. առաջին, Ա-Կ, էջ 888: Պետք է հիշել, որ «լիր»-ը նշանակում է «լրումն», այլ խոսքերով՝ «հող, քար ևն, որ ածած է մի տեղ՝ գետինը բարձրացնելու կմ փոսը լցնելու համար»: Որպես բառի կիրառման օրինակ բերված է հետևյալը. «Այստեղ երկաթուղին երկու կիլոմետր անցնում է լիրի վրայով», կամ «այստեղ բնական գետին չէ, այլ լիր է»: «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ս. Մալխասեանց, հատոր երկրորդ, Զ-Կ, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 200-201:

տալիս եւ պարսպապատում է Անի քաղաքը»[22], իսկ ռուսերեն թարգմանության մեջ՝ «Наполнив рвы, он вывел на них новую стену»[23] («լցնելով խրամը՝ նա նոր պարիսպ կառուցեց նրա վրա») ձևով: Ներկայացվածից բխում է, որ նոր պարսպի կառուցման համար նախատեսված տեղում տարածքը հարթ չէր. փոսեր, հնարավոր է՝ նաև պաշտպանական խրամներ կային, որոնք հարկ եղավ լցնել, իսկ այնուհետև հարթեցված տարածքում կառուցվեց մինչև օրս իր չափերով, հզորությամբ և գեղեցկությամբ բոլորին հմայող՝ Անիի մեծ կամ, ինչպես այն առավել հայտնի է, Սմբատաշեն պարիսպը:

Փաստորեն, նոր պարիսպը կառուցվել էր՝ ընդգրկելով քաղաքի՝ հին պարսպի պաշտպանությունից դուրս մնացած հատվածները կամ, այսպես կոչված, նոր քաղաքը՝ տարածվելով Ախուրյան գետից մինչև Ծաղկոցաձոր: Հին ու նոր պարիսպների հեռավորությունը կազմում էր շուրջ 720 մետր[24], թեև Մատթեոս Ուռհայեցին այդ տարածությունը հավասարեցնում է մեկ նետընկեցի[25]:

Ըստ Թ. Թորամանյանի հաշվումների՝ Սմբատաշեն պարսպի երկարությունը կազմել է 2500 մետրից ավելի, բարձրությունը՝ 8-10 մետր, իսկ լայնությունը՝ մեկ մետր[26]: Ինչ վերաբերում է

---

[22] Տե՛ս **Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի**, Տիեզերական պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Վարդանյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2000, էջ 240:

[23] «Всеобщая история Степ'аноса Таронского Асох'ика по прозванию» (писателя XI столетия), переведена с армянского и объяснена Н. Эминым, М., 1864, с. 130.

[24] Տե՛ս **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 31:

[25] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն (այսուհետև՝ Մատթեոս Ուռհայեցի), գրաբար բնագիրը՝ Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 160:

[26] Տե՛ս **Թորամանեան Թ.**, Քաղուածքներ Անիի իմ յիշատակարանից. Անի քաղա՞ք, թէ՞ ամրոց, «Ազգագրական հանդէս», գիրք XXIII, 1912, № 2, էջ 6:

պարսպի կառուցմանը, ապա ըստ ականավոր ճարտա-րապետի՝ նման ծավալի շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ էր լինելու 5-10 տարի[27]: Ըստ Մ. Բրոսեի՝ Սմբատ Բ-ն պարսպի շինարարությամբ զբաղվել է 8 տարի[28]: Նույն կարծիքին էր նաև Թ. Հակոբյանը, որը համարում էր նաև, որ պարսպի շինարարությունն ավարտվել է 989 թ.[29]: Այն կարծիքը, թե պարիսպը կառուցվել է մեկ տարում, դիտարկելով Թ. Թորամանյանի տեսակետի դիրքերից, անհնար էր: Ուստի հիմնվելով նշանավոր ճարտարապետի դիտարկման վրա՝ կարող ենք նշել, որ պարսպի կառուցումը պետք է սկսված լիներ Սմբատ Բ-ի գահակալության սկզբին: Այդ իսկ պատճառով Անիի պատմության ու մշակույթի վերաբերյալ բազմաթիվ հե-տազոտությունների հեղինակ Կ. Մաթևոսյանը, առանց թվական նշելու, գրում է, որ, հաջորդելով հորը՝ Աշոտ Գ-ին, Սմբատ Բ-ն

[27] Տե՛ս նույն տեղում, էջ 7: Պետք է նշել, որ Թ. Թորամանյանը կար-ծում էր, որ «Սմպատի ընդարձակ պարիսպը հիւսիսային կողմի ձեռագործ խրամներով միասին ըստ ինքեան մի մեծագործութիւն է նահանգապետի մը չափ սահման և բնակչութիւն ունեցող թագաւորի մը համար» (նույն տեղում, էջ 6), ինչը իրականությանը չի համապա-տասխանում, քանի որ նա միայն Բագրատունյաց արքունի տիրույթ-ները նկատի ունի, իսկ միայն դրանցով Անիի տիրակալի մասին տե-սակետ արտահայտել կնշանակի չնկատել շահնշահության տրամա-բանությունը, երբ ենթակա թագավորությունների և իշխանությունների մարդկային ներուժը (հատկապես ռազմական) ըստ անհրաժեշտու-թյան ծառայեցվում էր ողջ թագավորության շահերին: Նման օրի-նակներ, ինչպես կտեսնենք, կան Սմբատ Բ թագավորի գահակալու-թյան շրջանում, երբ ենթակա թագավորությունների զորախմբերը միանում էին Սմբատ Բ-ի զորքին և արշավանքի դուրս գալիս: Մյուս կողմից, Սմբատ Բ-ի արքունի տիրույթներն էլ, առանձին վերցրած, չի կարելի համեմատել «նահանգապետի մը» երկրամասի հետ, քանի որ իրականում հենց տիրապետած տարածքային ու մարդկային ոչ փոքր ներուժն էր, որ նրա համար շարունակում էր կենտրոնական դիրք ապահովել ողջ Հայաստանում:

[28] Տե՛ս «Օտար աղբյուրները Անիի մասին (X-XIX դդ.)», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 161:

[29] Տե՛ս **Հակոբյան Թ.**, Անի մայրաքաղաք, Եր., Երևանի համալսարա-նի հրատ.,1988, էջ 114:

«...նախ կառուցեց Անիի մեծ պարիսպը, ապա քաղաքի կենտրոնական մասում սկսեց Մեծ Կաթողիկե եկեղեցու կառուցումը»[30]:

Սմբատաշեն պարսիսպը, իիրավի, հսկա նախաձեռնություն էր: Պարսպի ողջ երկարությամբ միմյանցից 10-20 մետր հեռավորության վրա կառուցվել էին բուրգեր (աշտարակներ), որոնք ունեին կիսաշրջանաձև կառուցվածք՝ բացառությամբ Իգաձորի և Գայլաձորի հատվածներում գտնվող բուրգերի, որոնց հատակագիծը քառակուսի էր: Անիի պարիսպները բաղկացած էին 80 բուրգից՝ չհաշված Աղջկաբերդի ու միջնաբերդի 4-ական և Աշոտաշեն պարսպի 6 բուրգերը[31]: Միայն Սմբատաշեն պարիսպն ուներ 55 աշտարակ՝ հաշվառելով նաև բուն պարսպից 7-10 մետր հեռավորության վրա զուգահեռ ձգվող ավելի ցածր պարսպի շուրջ երկու տասնյակ աշտարակները[32]: Բուրգերը երկհարկ կամ եռահարկ էին՝ հարկերը միմյանց կապող աստիճաններով: Պարիսպը ուներ 14 դարպաս և մուտք (անցում), որոնցից գլխավորներն էին Ավազ, Կարսի և Դվինի դարպասները: Դարպասներից յուրաքանչյուրը գտնվում էր երկու կիսաշրջանաձև աշտարակների միջև: Ավազ դարպասի վերևում Անի քաղաքի զինանշանն էր՝ հովազի քանդակով[33]: Դարպասները, ըստ Արիստակես Լաստիվերտցու, երկաթից էին՝ պղնձե նիգերով (փակաղակ, սողնակ)[34]:

---

[30] **Մաթևոսյան Կ.**, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, «Պատմաբանասիրական հանդես», 2008, № 3, էջ 6:

[31] Տե՛ս **Марр Н.**, Ани: книжная история города и раскопки на месте городища, Л.-М., «ОГИЗ-СОЦЭКГИЗ», 1934, с. 79, **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 43, **Մնացականյան Ս.**, Վարպետաց վարպետներ՝ Մանուել. Տրդատ. Մոմիկ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 100:

[32] Տե՛ս **Марр Н.**, նշվ. աշխ., էջ 79:

[33] Տե՛ս **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 43, **Հասրաթյան Մ.**, Անիի ճարտարապետությունը, «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն» (միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 34-35:

[34] Տե՛ս «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ» (այսուհետև՝ Արիստակես Լաստիվերտցի), Ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1901, էջ 127:

Ն. Մառը համարում էր, որ Սմբատաշեն պարիսպը եղել է կրկնակի, այսինքն՝ բաղկացած է եղել երկու զուգահեռ պարսպապատերից, ինչպես որ մինչև օրս պահպանվել է[35]: Նրա տեսակետի վրա ազդել է այն իրողությունը, որ երկու զուգահեռ պարսպաշարերում գործածվել են նույն տեսակի և գույնի քարեր, ինչպես նաև առկա է նույնատիպ շարվածք[36]: Սակայն Ասողիկը կրկնակի պարիսպների կառուցման մասին հիշատակություն չունի: Սմբատաշեն պարսպի կառուցման ժամանակի վերաբերյալ միակ տեղեկությունը հայտնող «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» երկում հիշատակված է, որ «...[Սմբատը] հիմնադրէ կրկին պարիսպ քաղաքին Յանւոյ»[37], որից կարևոր հետևություններ են ծնվում: «...Հիմնադրէ կրկին պարիսպ» արտահայտությունը կարելի է բացատրել երկու ձևով՝ «հիմնադրեց երկրորդ պարիսպը» կամ, որ ավելի հավանական է, «հիմնադրեց զույգ պարիսպը», քանի որ «կրկին»-ը գրաբարում ունեցել է թե՛ «երկրորդ», թե՛ «զույգ» իմաստները[38]: Նման պարագայում կարող ենք համարել, որ կա՛մ Սմբատ Բ-ի կառուցած պարիսպը բաղկացած էր երկու զուգահեռ պարսպապատերից, կա՛մ հիմնական պարսպի դիմացի ավելի ցածր պատը կառուցվել է հետագայում, իսկ «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» երկի հեղինակը, ականատես լինելով երկու պարիսպներին, դրանց կառուցումը վերագրել է Սմբատ Բ-ին, քանի որ վերջինիս հզոր ու գեղեցիկ պարիսպների փառքը գովերգվում էր նաև հետագա դարերում՝ ազդելով ավելի ուշ ստեղծագործած հեղինակների վրա: Սակայն, առավել հավանական է թվում, որ Սմբատաշեն պարիսպն ի սկզբանե բաղկացած է եղել զույգ պարսպապատերից, որոնք հետագայում վերակառուցվել ու ամրապնդվել են[39]: Պատահական չէ, որ բյուզանդացի հեղինակ Միքայել Ատտա-

---

[35] Տե՛ս **Марр Н.**, նշվ. աշխ., էջ 78:

[36] Տե՛ս նույն տեղում, էջ 84-85:

[37] **Մխիթար Անեցի**, էջ 107:

[38] «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատոր առաջին, Ա-Կ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1979, էջ 1134:

[39] Տե՛ս **Марр Н.**, նշվ. աշխ., էջ 78:

լիատեսը, խոսելով սելջուկների կողմից Անիի գրավման մասին, տպավորված Անիի պարիսպներով, գրել է, որ քաղաքը «պաշտպանված է հսկայական, հզոր պարիսպներով»[40]:

Հավելենք, որ, դատելով որոշ տվյալներից, պարիսպներից այն կողմ քաղաքը եզերված էր ջրով լցված խորը խրամով, ինչը քաղաքը դարձնում էր լիովին անառիկ: Իբն ալ-Ասիրը պատմում է, որ 1064 թ. սելջուկների Ալփ Արսլան սուլթանի զորքը պաշարեց Անին, սուլթանը «տեսավ, որ ամուր և խիստ անառիկ քաղաք է: ...Ճանապարհը դեպի քաղաք գնում էր մի խրամատի միջով, որի վրա պինդ քարից պարիսպ կար»[41]: Մեկ այլ աղբյուրի՝ Ահմադ իբն Մուհամմադ ալ-Ջաֆֆարի տվյալների համաձայն, երբ Ալփ Արսլանն իր որդի Մելիքշահին ուղարկեց հնազանդեցնելու վրաց թագավորությունը, սելջուկ արքայազնը, հասնելով Անի և տեսնելով քաղաքի անառիկությունը, հուսահատվեց այն գրավելուց, սակայն հետո նավակներ կառուցել տվեց ու ջրով լցված խրամով անցկացրեց զորքի մի մասը՝ հասնելով քաղաքի պարսպին[42]: Փաստորեն, Սմբատաշեն պարիսպը դրսից եզերող ջրով լցված խրամը այնքան լայն ու խորն էր, որ այն կարելի էր հաղթահարել միայն նավակների միջոցով: Այդ խրամի հետքը ժամանակին նկատել էր Ն. Մառը՝ մատնանշելով դրա պեղման անհրաժեշտությունը[43]:

Քանի որ Սմբատաշեն պարիսպը լավագույնս նախագծված էր, երբեմն հետազոտողների կողմից բարձրացվել է դրա ճար-

---

[40] «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 17, «Բյուզանդական աղբյուրներ», Զ, **Միքայել Ատտալիատես**, Պատմություն, թարգմանություն բնագրից, ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., Պատմության ինստիտուտ, 2015, էջ 217-220:

[41] «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, **Իբն ալ-Ասիր** (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 42:

[42] Աղբյուրի պարսկերեն տեքստից մեջբերումը և թարգմանությունը տե՛ս **Марр Н.**, նշվ. աշխ., էջ 26-27:

[43] Տե՛ս նույն տեղում, էջ 79:

տարապետի հարցը: Ըստ Ս. Մնացականյանի՝ Տրդատ ճարտարապետն Անիի Մայր տաճարից բացի նախագծել է նաև Սմբատաշեն պարիսպի շինարարությունը և ղեկավարել կառուցման ընթացքը, որի ավարտին սկսվել է Անիի Մայր տաճարի կառուցումը[44]: Եթե ճիշտ է այդ տեսակետը, իսկ այն ժխտող որևէ փաստ չկա, ապա կարող ենք նշել, որ մոտ 989 թ. դրությամբ, երբ դրվում էր Անիի Մայր տաճարի հիմքը[45], Սմբատաշեն պարսպի կառուցումն արդեն ավարտվել էր: Ուստի ճիշտ էր Թ. Թորամանյանը՝ պնդելով, որ պարսպի շինարարությունը տևել է 5-10 տարի: ինչ վերաբերում է Ս. Մնացականյանին, ապա նա, քննության առնելով Անիի հատակագիծը, եկել է այն հիմնավոր տեսակետին, որ քաղաքի ընդարձակմամբ ի հայտ էր եկել Ախուրյան գետի կողմից Անի եկող առևտրական ճանապարհների համար անցումներ ստեղծելու անհրաժեշտություն: Եվ Ախուրյանի վրա ձգվող կամուրջները հարմարեցվել են քաղաքի պաշտպանական համակարգին, և թշնամու հարձակման դեպքում դրանց շարժական տախտակամածերի առկայությունն ըստ անհրաժեշտության կամուրջները դարձնում էր անանցանելի: Նշելի է նաև այն, որ առավել նշանավոր կամրջով քաղաք մտնող ճանապարհը հասցնում էր Մայր տաճարի հրապարակ: Նոր պարսպի ու պաշտպանական հնարավորություններով օժտված կամուրջների առկայությունը, ինչպես նաև ամենամեծ կամրջով քաղաք մտնող ճանապարհի՝ Մայր տաճար հասնելը Ս. Մնացականյանին հիմք են տվել կարծելու, որ գործել է մի ամբողջական քաղաքաշինական համակարգ, ասել է՝ Սմբատ Բ-ի օրոք այդ ամենը նախագծվել ու կառուցվել է որպես մեկ ամբողջություն, և ողջ գործընթացը ղեկավարվել է մեկ մարդու կողմից, որը ոչ այլ ոք էր, եթե ոչ դարաշրջանի ամենանշա-

---

[44] Տե՛ս **Մնացականյան Ս.**, նշվ. աշխ., էջ 100: Տե՛ս նաև **Լևոնյան Գ.**, Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին», պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1949, № 1-2, էջ 55:

[45] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 387:

նավոր ճարտարապետը՝ Տրդատը[46]: Վերջինս, անկասկած, մշակել էր նաև մայրաքաղաքի քաղաքաշինական ընդհանուր ուրվագիծը՝ որոշելով գլխավոր փողոցի ուղղությունը, որը, գալով Սմբատաշեն պարսպի գլխավոր մուտքից, քաղաքը բաժանում էր երկու մասի՝ արևելյան ու արևմտյան: Արևելյան հատվածում կենտրոնական տեղ էր վերապահված Մայր տաճարին[47], որի շինարարությունը Ասողիկը չի առանձնացնում պարսպի շինարարությունից, քանի որ նրանք, փաստորեն, սերտորեն առնչվում էին միմյանց[48]:

Նշվածի համատեքստում կարևոր է նաև Մ. Օրմանյանի տեսակետն այն մասին, որ թեև Անիում Սմբատ Բ-ի օրոք կառուցված շինությունները հիշատակված չեն, բայց «անտարակոյս է թէ մինչև հիմա երեւցող եկեղեցիներու և ապարանքներու մնացորդներէն մեծ մասը անոր (Սմբատ Բ-ին–Ա.Ե.) պետք է վերագրուի»[49]: Ճիշտ է, այս տեսակետը ակնհայտորեն չափազանցնում է Սմբատ Բ-ի վաստակը, քանի որ այնտեղ ծավալուն շինարարություն է իրականացվել Սմբատ Բ-ի հաջորդների օրոք, սակայն ակնհայտ է, որ Աշոտ Գ-ի օրոք կառուցված պարսպի (Աշոտաշեն) ու Սմբատաշեն պարիսպների միջև ընկած տարածքում Սմբատ Բ-ի օրոք ծավալուն կառուցապատումներ են իրականացվել: Ի դեպ, Ն. Մառը, պեղումներ իրականացնելով Անիում, եկել էր այն հիմնավոր եզրակացությանը, որ Անիի նոր հատվածում քաղաքային կյանքը ծնունդ է առել ու զարգացել շատ ավելի վաղ, քան Սմբատաշեն ու Աշոտաշեն պարիսպների շինարարությունը, ինչի վկայությունն են Ս. Առաքելոց եկեղեցու շրջակայքում հայտնաբերված՝ Կամսարականների ժամանակաշրջանի հնությունները (V-VII դդ.)[50]: Սա-

---

[46] Տե՛ս **Մնացականյան Ս.**, նշվ. աշխ., էջ 101-103: Կարևոր է նշելը, որ այդ կամուրջի կառուցումը Սմբատ Բ-ի ժամանակներին է վերագրել նաև Թ. Թորամանյանը: Տե՛ս **Թօրամանեան Թ.**, նշվ. հոդվ., էջ 8:

[47] Տե՛ս **Մնացականյան Ս.**, նշվ. աշխ., էջ 103:

[48] Տե՛ս նույն տեղում, էջ 101:

[49] Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 780, սյուն 1130:

[50] Տե՛ս **Марр Н.**, նշվ. աշխ., էջ 79:

կայն այս իրողությունը որևէ կերպ չի խաթարում Ս. Մնացականյանի տեսակետն այն մասին, որ քաղաքի այդ հատվածի հատակագիծը նախագծել է Տրդատ ճարտարապետը:

Փաստորեն, կարելի է ընդգծել, որ Սմբատ Բ-ի օրոք պարզապես նոր պարիսպներ չեն կառուցվել, այլ ստեղծվել է ամբողջական պաշտպանական համակարգ, որով քաղաքը դարձել է լիովին անառիկ:

Ինչ վերաբերում է Անիի Մայր տաճարի կառուցմանը, որը, փաստորեն, կազմում էր Սմբատ Բ-ի ժամանակ Անիի ընդարձակման ու կառուցապատման մեծ քաղաքաշինական նախագծի մի մասը, ապա, ըստ Ասողիկի, նոր պարսպից ներս Սմբատ Բ-ն «Արկանէ հիմն եւ մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայ»[51]: Դժվար է ասել, թե հատկապես երբ է սկսվել Մայր տաճարի շինարարությունը, բայց հայտնի է, որ Սմբատ Բ-ի օրոք նրա կառուցումը չհաջողվեց ավարտին հասցնել, ուստի դրանով զբաղվեց Գագիկ Ա-ի (գահակալության սկիզբը՝ 990 թ.) կինը՝ Կատրանիդե թագուհին[52]: Սակայն, քանի որ Մայր տաճարը կառուցվել է Աշոտաշեն պարիսպներից դուրս, անհնար է, որ այն հիմնադրվեր նախքան Սմբատաշեն պարիսպների կառուցումը: Հետևաբար, Մայր տաճարի կառուցումը պետք է սկսվեր Սմբատաշեն պարսպի շինարարության ավարտից հետո՝ հավանաբար 980-ական թթ. երկրորդ կեսին (գուցե հենց 989 թ.[53]), բայց ոչ ուշ, քանի որ նրա

---

[51] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

[52] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ 35. «...Ես Կատրանիդէ հայոց թագուհի, ...հրամանաւ առն իմո Գագկա շահանշահի շինեցի զսուրբ կաթաղիկէս, զոր էր հիմնադրեալ մեծին Սմպատա...», **Ասողիկ**, էջ 808. «...Կին նորա (Գագիկ Ա-ի – Ա. Ե.) Կատրամիդէ թագուհի ... շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ...»:

[53] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 387, **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրա-

հիմնադիր Սմբատ Բ-ն վախճանվել է 990 թ.: Մայր տաճարի հիմնարկեքը 989 թ. տեղի ունենալու հիմնավորման համար կարելի է նշել այն իրողությունը, որ տաճարի ճարտարապետ Տրդատը այդ ժամանակ՝ երկրաշարժի հետևանքով Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի վնասվելուց հետո, մեկնել էր կայսրության մայրաքաղաք՝ կազմակերպելու վերականգնման աշխատանքները[54]: Ըստ Ասողիկի՝ հայոց 438 թ. քաղոց ամսվա 15-ին (989 թ. օգոստոսի 5) գիսաստղ երևաց, որից մի քանի օր անց էլ (օգոստոսի 15) Բյուզանդիայում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժը՝ վնասելով Ս. Սոֆիայի տաճարը: Փաստորեն, երկրաշարժը տեղի է ունեցել 989 թ., և Տրդատն ամենայն հավանականությամբ Կոստանդնուպոլիս է մեկնել նույն թվականին: Նրա տաղանդի շնորհիվ Ս. Սոֆիայի տաճարը «գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»[55]: Անկասկած, նրա մեկնելու պահին արդեն տեղի էր ունեցել Անիի Մայր տաճարի հիմնարկեքը, քանի որ ըստ Ասողիկի՝ նրա հիմքը դրվել է հենց Տրդատի կողմից[56]՝ նախապատրաստելով, անշուշտ, նաև նախագիծ-մանրակերտը, ինչպես դա արել է քիչ անց Ս. Սոֆիայի տաճարի պարագայում. «Տայ զաւրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն եւ սկզբնաւորեալ զշինելն ...»[57]: Փաստորեն, Տրդատի՝ Բյուզանդիա մեկնելու կապակցությամբ Անիի Մայր տաճարի կառուցումը ժամանակավորապես ընդհատվել է:

---

կան ժառանգությունը, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 164:

[54] Տե՛ս **Грен А.**, Династия Багратидов в Армении, «Журнал министерства народного просвещения», часть CCXC, С.-Петербург, 1893, ноябрь, с. 107:

[55] **Ասողիկ**, էջ 804-805:

[56] Տե՛ս նույն տեղում, էջ 760:

[57] Նույն տեղում, էջ 805: Հայ ճարտարապետի կողմից 992 թ. Ս. Սոֆիայի տաճարի գմբեթի կառուցումը հիշատակված է բյուզանդական ժամանակագիրների կողմից: Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Անիի ճարտարապետությունը, էջ 12-13:

Ինչ վերաբերում է Կիրակոս Գանձակեցու այն տեղեկությանը, թե Սմբատ Բ-ն Անիի Մայր տաճարի կառուցումը «ոչ կարաց աւարտել, զի եհաս նմա վախճան մահու»[58], որը համապատասխան տեսակետի հիմք է դարձել պատմագիտության մեջ[59], ապա այն ամենայն հավանականությամբ հետին թվով կատարված դիտարկում է, քանի որ շինարարությունն ընդհատվել է, ինչպես պարզվեց, 989 թ.՝ տաճարի նախագծող ճարտարապետ Տրդատի՝ Կոստանդնուպոլիս մեկնելու պատճառով, իսկ Սմբատ Բ-ն վախճանվել է 990 թ.: Իսկ Տրդատը կարողացավ հայրենիք վերադառնալ միայն Սմբատ Բ-ի մահից հետո:

Անին իր նոր պարիսպներով և օրեցօր ավելացող հոյակերտ շինություններով հսկայական տպավորություն գործեց ժամանակակիցների վրա, ուստի պատահական չէ, որ այն հայտնի դարձավ որպես «տիեզերահռչակ» կամ «տիեզերական» քաղաք[60]:

---

[58] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 88:

[59] Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 780, սյուն 1130, **Լեո**, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, միջին դարեր, գիրք առաջին, «Երկերի ժողովածու», երկրորդ հատոր, Եր., «Հայաստան» հրատ, 1967, էջ 592, **Լևոնյան Գ.**, նշվ. հոդվ., էջ 57, **Հասրաթյան Մ.**, Անիի ճարտարապետությունը, էջ 12 և այլն:

[60] Տե՛ս **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 125: Տե՛ս նաև նույն տեղում, ծանոթ. 2:

## 1.2. Սմբատ Բ-ի «տիեզերակալ» տիտղոսը

Հայտնի է, որ Սմբատ Բ-ն աղբյուրներում երբեմն հանդես է եկել «տիեզերակալ» տիտղոսով[61], ինչը զարմանք է հարուցել հայագիտական շրջանակներում: Մասնավորապես, Մ. Օրմանյանը այդ տիտղոսը պարզապես համարում էր Սմբատ Ա արքայի (891-914 թթ.) մականուն[62]: Ինչ վերաբերում է Սմբատ Բ-ի՝ «տիեզերակալ» մականունը կրելուն, ապա Մ. Օրմանյանը կարծում է, որ նա «Շահանշահ անունով յիշուած է, բայց աւելի սովորաբար գործածուած է Տիեզերակալ մականունը, որ ծիծաղելի կրնար նկատուիլ, եթէ չդիտէինք, որ համեմատական իմաստով գործածուած է, իւր հակառակորդներուն վրայ յաղթական եղած ըլլալուն համար»[63]:

Լեոն կարծում էր, որ «տիեզերակալ» նշանակում է «երկրներ նվաճող», ուստի Սմբատ Բ-ին, որը աչքի է ընկել միայն Անիի պարիսպների շինարարությամբ և ընդհանրապես եղել խաղաղ շինարար, «...նվաճող անվանել...՝ կնշանակի ծաղրել նրան»[64]: Ավելին՝ խորացնելով իր դիտարկումները՝ Լեոն կարծիք է հայտնել, թե այդ տիտղոսը հաճոյական խոսք է, «որը մատուցվում էր թագավորին «աշխարհի տեր» առօրյա առումով»[65]:

---

[61] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 90. «Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ», **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 162. «...զոր Սմբատ տիեզերակալն էր բերել տուեալ ի Հնդկաց...»: Սմբատը «տիեզերակալ» է կոչված նաև Անանուն Սեբաստացու տարեգրության մեջ: Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1956, էջ 130:

[62] Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 689, սյուն 1004:

[63] Նույն տեղում, § 779, սյուն 1129:

[64] **Լեո**, նշվ. աշխ., էջ 600:

[65] Նույն տեղում, ծանոթ. 2:

Հ. Հարությունյանը Սմբատ Բ-ին «տիեզերակալ» կոչելը համարել է «թյուրիմացություն..., որովհետև նա ոչ մի նման գործ չի կատարել»[66]:

Նմանապես Ա. Տեր-Ղևոնդյանը, որին հայտնի էր, որ «տիեզերակալ» տիտղոսը սկզբում կրել է Սմբատ Ա-ն[67], գրում է, որ «այդ մեծադղորդ տիտղոսը նրան (Սմբատ Բ-ին – Ա. Ե.) չէր պատշաճում»[68], թեև կարելի էր նկատել, որ այդ տիտղոսը՝ վերջինիս ամբողջական իմաստային ընդգրկումով, վաստակել էր ոչ թե Սմբատ Բ-ն, այլ նրա անվանակից հզոր նախնին, և բացի այդ՝ հայտնի է, որ տիտղոսների ժառանգումն անձի համար այդ տիտղոսներին «պատշաճեցում» երբևիցե չի նախատեսել ո՛չ հայկական և ո՛չ էլ օտար միջավայրերում:

Բ. Առաքելյանը, ներկայացնելով այն իրողությանը, որ Սմբատ Բ-ի «գործերը հաջողվել էին թե երկրի ներսում և թե դրսում, և խիստ մեծացել էր առատությունը և լիությունը», հավելում է, թե դա «մասամբ արդարացնում էր Սմբատի «Տիեզերակալ» տիտղոսը»[69]:

Հ. Մարգարյանը, անդրադառնալով «տիեզերակալ» տիտղոսին, իրավամբ նշում է, որ այն առաջինը կրել է Սմբատ Ա-ն, որի օրոք թագավորական իշխանության հեղինակության բարձրացման հարցը դարձել էր խիստ այժմեական[70]: Ի տարբերություն Մ. Օրմանյանի, որը կարծում էր, որ Սմբատ Ա-ն «տիեզերակալ» է կոչվել 890-ական թթ. սկզբին Դվինը և Հայաստանից

---

[66] Տե՛ս **Հարությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Եր., Հայաստանի պետական հրատ., 1959, էջ 106:

[67] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 1, էջ 75:

[68] «Հայ ժողովրդի պատմություն», Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 269:

[69] Նույն տեղում, էջ 134:

[70] Տե՛ս **Մարգարյան Հ.**, Բագրատունի թագավորների «տիեզերակալ» տիտղոսը, «Հայոց պատմության հարցեր», 2005, № 6, էջ 100:

հյուսիս ընկած երկրամասերը ենթարկեցնելուց հետո[71], Հ. Մարգարյանը, համարելով, որ Սմբատ Ա-ի համար IX-րդ դ. 90-ական թթ. բարենպաստ չէին, այդ իրադարձության առավել հնարավոր ժամկետը սահմանափակում է 902-908 թթ. միջակայքով: Այդ ժամանակ Սմբատ Ա-ն, օգտվելով բարենպաստ իրադրությունից, ստեղծեց տարածաշրջանային տերություն և միջնադարի չափանիշներով «տիեզերակալ» հռչակվելու հավակնություններ ցուցաբերելու հնարավորություն ստացավ[72]: Ըստ որում, նրա «տիեզերակալ» տիտղոսը միջազգային ճանաչում ստացավ, ուստի պատահական չէ, որ այն հիշատակված է նաև վրացական աղբյուրում[73]: Ըստ հետազոտողի՝ «... «տիեզերակալ» հռչակվելու ուղղությամբ վճռական քայլեր Սմբատ Ա-ն ձեռնարկեց մոտավորապես 904 թ.՝ վերսկսելով Աշոտ Ա-ի ծավալած պայքարը Վրաստանի սրտի՝ Քարթլիի համար»[74]: Այդ առումով Սմբատ Ա-ի հաջողություններն արձանագրել են հայ և վրաց հեղինակները, որոնցից «Քարթլիի մատյանի» շարադրողը Սմբատ Ա-ին կոչել է «տիեզերակալ»՝ արձանագրելով հայոց թագավորի՝ միջազգային ճանաչում ստացած տիտղոսը[75]: Այստեղ, իհարկե, բաց է մնում այն հարցը, թե ինչպե՞ս կարող էր 904 թ. Քարթլիին տիրելու և դրանով իսկ «տիեզերակալ» հռչակվելու համար պայքար սկսած Սմբատ Ա-ն արդեն իսկ կրել և այդպիսով «Քարթլիի մատյանի» հեղինակի կողմից Քարթլիի նվաճման ժամանակ հիշատակվել «միջպետական հարաբերություններում ճանաչման արժանացած տիեզերակալ» տիտղոսով, բայց անհրաժեշտ է փաստել, որ Սմբատ Ա-ն Վիրքին տիրել էր դեռևս գահակալության առաջին

---

[71] Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 689, սյուն 1004:

[72] Տե՛ս **Մարգարյան Հ.**, նշվ. հոդվ., էջ 104:

[73] Տե՛ս «Քարթլիի մատյան», թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 9, էջ 66: Ի դեպ, այդ տիտղոսը «Քարթլիի մատյանի» թարգմանիչները բացատրել են որպես «աշխարհակալ»: Տե՛ս նույն տեղում, էջ 79, ծանոթ. 70:

[74] **Մարգարյան Հ.**, նշվ. հոդվ., էջ 105:

[75] Տե՛ս նույն տեղում, էջ 106:

տարիներին[76], երբ իրականում կարող էր հռչակվել «տիեզերակալ»: Ըստ որում, այդ ժամանակ՝ 891-894 թթ., իրավիճակը առավել քան բարենպաստ էր Սմբատ Ա-ի համար, քանի որ նրան հաջողվել էր հաղթահարել կենտրոնախույս ձգտումները[77], առևտրական հարաբերություններ հաստատել Բյուզանդական կայսրության հետ[78], նվաճել Հայաստանի շրջակա երկրները[79], առաջին գոտեմարտում՝ 894 թ. Դողսի ճակատամարտում, պարտության մատնել Ատրպատականի ամիրա Աֆշինին[80] և նույն թվականին Համամին թագադրել որպես Աղվանից թագավոր[81]: Պատահական չէ, որ ըստ Անանուն Զրուցագրի՝ հենց այս շրջանում է, որ Սմբատ Ա-ն «...մեծամտացաւ եւ անուանեաց զինքն Սըմպատ տիեզերակալ»[82]: Բացի այդ՝ մի կարևոր վավերագրում՝ Մշո Ս. Աղբերիկ վանքի կոնդակում, պահպանվել է նախկինում հետազոտողների կողմից աննկատ մնացած՝ Սմբատ Ա-ի անունից շարադրված հետևյալ տեքստը. «Ես Սմբատ Հայկազնի[83]՝ որդի Աշոտոյ, ... որ Տիեզերակալ կոչեցայ և տիրեցի Հայոց մինչեւ յԱսորիս»[84]: Տեքստից բխում է, որ Սմբատ Ա-ն «տիեզերակալ» է հռչակվել նախքան Հայաստանից դեպի հարավ-արևմուտք՝ Ասորիք տարածվող երկրամասերին անդրա-

---

[76] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 457:

[77] Տե՛ս նույն տեղում, էջ 446-448:

[78] Տե՛ս նույն տեղում, էջ 455-456:

[79] Տե՛ս նույն տեղում, էջ 457:

[80] Տե՛ս նույն տեղում, էջ 460-462:

[81] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 2011, 135.1, էջ 17-19:

[82] **Անանուն Զրուցագիր** (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), Պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», Թ. հատոր, Թ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1042:

[83] Սմբատի Ա-ի՝ որպես Հայկազնի (Հայկազունի) հանդես գալու հանգամանքը կարիք ունի առանձին հետազոտության:

[84] **Գարեգին Ա. կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951, էջ 179:

դառնալը, թեև նույնիսկ Հայաստանի կենտրոնական հատվածում գտնվող ըմբոստ կայսիկների ամիրայությամբ նա ավելի ուշ՝ արդեն X դ. սկզբին է զբաղվել[85]:

Հարկ է նշել նաև, որ մեկ այլ արժեքավոր աղբյուրի՝ Պանդալեոն քահանայի հիշատակարանում պահպանված տեղեկությունները հնարավորություն են տալիս նորովի մեկնաբանելու «տիեզերակալ» տիտղոսի էությունը: Երկու տերերի՝ կայսրին ու Վասպուրականի թագավոր Աբուսահլ-Համազասպ թագավորին (959-969 թթ.) ծառայող Պանդալեոն քահանան վերջինին համարում էր «երկրորդ տիեզերակալ»: Նրա կողմից 965 թ. գործուղվելով Կոստանդնուպոլիս՝ Պանդալեոնը գրում է. «Յամս Նիկիփորայ տիեզերակալի կայսեր Յունաց... եհաս ինձ տառապեալ Պանդալեոն և ոչ ըստ արժանեացն քահանայի, ...ի հրամանէ երկրորդ տիեզերակալի տեառն իմոյ աւագ Աբուսահլի Համազասպայ՝ արքայից արքայի մեծ պետութեանն՝ տանն Հայոց, զնալ զճանապարհս ուղեւորութեան...Կոստանդնուպօլիս...»[86]: Հիշատակության մեջ «տիեզերակալ» է կոչված Բյուզանդիայի կայսրը, որին զուգահեռ Վասպուրականի թագավորը կոչվում է «երկրորդ տիեզերակալ»: Արդեն ցույց ենք տվել, որ Բյուզանդիան հայոց թագավորության միասնությունը կազմալուծելու նպատակով Աբուսահլ-Համազասպին հույսեր էր ներշնչել՝ Գագիկ Արծրունու օրինակով նրան Հայաստանում գերակա ճանաչելու համար[87]: Ուստի՝ «[երկրորդ] տիեզերակալ» տիտղոսը, որով Պանդալեոնը կոչում էր Վասպուրականի թագավորին, Հա-

---

[85] Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 275: Տե՛ս նաև **Մարգարյան Հ.**, նշվ. հոդվ., էջ 103:

[86] **Ալիշան Ղ.**, Հայապատում. պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ-ի վանս Ս. Ղազարու, 1901, էջ 122-123:

[87] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ Ողորմած. թագավոր հայոց, Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 77: Հայաստանում Գագիկ Արծրունու գերազահ ճանաչվելու վերաբերյալ տե՛ս **Yeghiazaryan A.**, Gagik Artsruni – «King of Armenia and Georgia», «Բանբեր հայագիտության», Եր., 2016, № 1, p. 79-85:

յաստանում գերակա արքայի տիտղոսն էր: Այս պարագայում, եթե իրոք կարելի է խոսել առաջին (Բյուզանդիայի կայսրը) և երկրորդ (հայ գահակալը) տիեզերակալների մասին, ապա պետք կարծել, որ ինչպես «տիեզերակալ» տիտղոսով արտացոլում էր Բյուզանդիայի կայսեր կարգավիճակը մեծապետական մակարդակում, նույն այդ տիտղոսը արտացոլում էր հայոց թագավորի դիրքն այն տարածաշրջանում, որտեղ նա գերակա էր: Պատահական չէ, որ երբ բանը հասնում էր համեմատության, ինչպես Պանդալեոնի պարագայում էր, հայ տիրակալի առումով կիրառվում էր «երկրորդ տիեզերակալ» արտահայտությունը, որից կարելի է բխեցնել որոշակի աստիճանակարգ: Վերջինիս առումով հարկ է հիշել, որ Բյուզանդիայի կայսրը Սմբատ Ա-ին «նախախնամէր ... իբրեւ զորդի սիրելի»[88], իսկ հայոց թագավորն էլ հատուցում էր նրան «իբրեւ վեհագունի քան զինքն եւ հայր հարազատի»[89]: Նույն աստիճանակարգը և հարաբերությունները գործում էին նաև հայոց թագավորի և աբխազաց ու վրաց թագավորների միջև: Դեռևս Աշոտ Ա-ն հասել էր նրան, որ աբխազաց Կոստանդին թագավորը (893-922 թթ.) «անընդհատ յորդիութեան սակի զոլով, մտերմաբար պարտավճար միշտ նմա ի ծառայութիւն բերէր»[90]: Այնուհետև, երբ նույն աբխազաց թագավորը 906 թ. ներխուժել էր Վիրք, վրաց թագավոր Ատրներսեհը համոզում էր նրան՝ «ո՛չ շամբուք մտաւք ընդ վեհսն (իմա՛ Սմբատ Ա – Ա. Ե.), քան զինքն հակառակիլ»[91]: Ի վերջո, արդեն պարտություն կրած աբխազաց թագավորը հնազանդորեն ծառայում էր Սմբատ Ա-ին «սակս հայրաբուն նախախնամութեան նորա առ նա»[92]: Ինչ վերաբերում է վերոհիշյալ Ատրներսեհին, ապա Սմբատ Ա-ն 899 թ. նրան հռչակել էր վրաց թագավոր և «երկրորդ իւրոյ տէրութեանն...»[93]:

---

[88] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 481:

[89] Նույն տեղում:

[90] Նույն տեղում, էջ 444:

[91] Նույն տեղում, էջ 482:

[92] Նույն տեղում, էջ 483:

[93] Նույն տեղում, էջ 471:

Կարելի է արձանագրել, որ աբխազաց ու վրաց թագավորները հայոց թագավորի նկատմամբ ունեին նույն դիրքը (կրտսերի և ավագի, որդու և հոր), ինչ վերջինս՝ Բյուզանդիայի կայսեր նկատմամբ, թեև կախվածության աստիճանը հայոց և այսրկովկասյան տիրակալների միջև ակնհայտորեն շատ ավելի բարձր էր:

Ասվածի համատեքստում հարկ է հիշել նաև, որ Սմբատ Ա-ն համարվել (նաև կոչվել) է «բոլորից արեւելեայցս գլխաւոր»[94], որը, զուգահեռելով «տիեզերակալ» տիտղոսի կիրառության հետ բյուզանդական ու հայկական միջավայրերում, կարող ենք համադրել «երկրորդ տիեզերակալ» տիտղոսի հետ. ինչպես կայսեր համեմատությամբ հայ գահակալը կոչվել է «երկրորդ տիեզերակալ», այնպես էլ կայսրության ընդգրկած հսկա տարածություններում բնակվողների արքա-բասիլևսի կողքին հայոց թագավորը ընկալվել է որպես նրանից արևելք ընկած աշխարհագրական ավելի փոքր միջավայրի երկրների ու ժողովուրդների (վստահաբար, միայն քրիստոնյաների ընդգրկմամբ) գլխավոր:

Սմբատ Ա-ից հետո «տիեզերակալ» տիտղոսը, որոշ ընդմիջումից հետո, կապված սեփական գերագահությունը շեշտելու՝ Բագրատունի արքաների ցանկության հետ, տեղ է գտել նրանց տիտղոսաշարում[95]: Ի դեպ, հարկ է նշել, որ Սմբատ Ա-ի հետնորդները, կրելով «տիեզերակալ» տիտղոսը, միաժամանակ գիտակցում էին, որ իրենք միայն ավանդույթի ուժով է, որ կրում են այն: Օրինակ՝ Սմբատ Բ-ի 979 թ. հրովարտակում գրված է, թե «...ես՝ Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց, թոռն[96] Տիեզերա-

---

[94] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 528:

[95] Տե՛ս **Մարգարյան Հ.**, նշվ. հոդվ., էջ 108-109:

[96] «Թոռ» բառը գրաբարում, «զավակի զավակ» նշանակությունից բացի, ունի նաև «զարմ, սերունդ» նշանակությունը («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. առաջին, Ա-Կ, էջ 819), ուստի չպետք է զարմանալ, որ իրականում Սմբատ Ա-ի թոռնորդի Սմբատ Բ-ն իրեն համարում է նրա թոռը: Թերևս հենց «զարմ» նշանակությամբ էլ նա գործածել է այդ բառը:

կալ եւ մեծ թագաւորին Սմբատայ...»[97], ինչը ցույց է տալիս, որ «տիեզերակալ» տիտղոսը կրող Սմբատ Բ-ի տեսանկյունից իրական «տիեզերակալը» հենց Սմբատ Ա-ն էր, որի անվան կողքին իր անունը հիշատակելիս նա իրեն «տիեզերակալ» չի կոչել:

Դատելով առկա աղբյուրային նյութից՝ «տիեզերակալ» տիտղոսն առկա էր նաև Աշոտ Գ Ողորմած թագավորի տիտղոսաշարում: Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին 976 թ. տրված ընծայագրում արքան կոչված է «թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց»[98]: Այս հյուսկեն տիտղոսում տեղ են գտել թե՛ Աշոտ Երկաթի շրջանից Բագրատունի արքաների համար հիմնականը դարձած «շահնշահ/թագավորների թագավոր»[99] և թե՛, փաստորեն, «տիեզերակալ» տիտղոսները:

Ի դեպ, Աշոտ Գ Ողորմածի վերաբերյալ հիշատակությունից կարելի է կարծիք կազմել «տիեզերակալ» տիտղոսի տարածքային ընդգրկման մասին: Ըստ էության, այդ տիտղոսը կրողը հանդիսանում էր «ողջ տիեզերքի» թագավորների թագավոր, իսկ աղբյուրներից հայտնի է, որ Բագրատունի արքաների՝ «թագավորների թագավոր» կամ «շահնշահ» տիտղոսը (ըստ Ասողիկի՝ «... Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր»[100]) կրողի իրավազորության սահմաններն ընդգրկում էին Հայաստանը և

---

[97] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2007, էջ 67:

[98] Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.)», պրակ I, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով: Կազմեց՝ Հ. Աբրահամյան, Եր., Մատենադարան, 1941, էջ 5: Տե՛ս նաև **Տէր-Վարդանեան Գ.**, **Սահակեան Ջ.**, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին, «Էջմիածին», 2012, № 7, էջ 98:

[99] Տե՛ս **Ասողիկ**, էջ 748. «[Աշոտ Երկաթը] զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն՝ թագաւորաց թագաւոր»:

[100] **Ասողիկ**, էջ 748:

քրիստոնյա Այսրկովկասի երկրները՝ Վիրքն ու Աղվանքը[101]: Ուրեմն, նույն աշխարհագրական սահմաններն էր ընդգրկում նաև «տիեզերակալ» տիտղոսը, որի «տիեզերք» բաղադրիչը, փաստորեն, վերաբերում էր Հայաստանին, Վիրքին ու Աղվանքին: Պատահական չէ, որ այդ տիտղոսն առաջին անգամ կրել է վերոհիշյալ երկրներին տիրող Սմբատ Ա թագավորը:

Կարևոր է նաև նշելը, որ Սմբատ Բ-ն, «տիեզերակալ» տիտղոսից բացի, կրում էր նաև «Անիի շահանշահ» տիտղոսը[102], որը, ի դեպ, Անիական շրջանի Բագրատունի այլ արքաների տիտղոսաշարում հիշատակված չէ, թեև վստահաբար գոյություն է ունեցել:

Սմբատ Բ-ից բացի՝ «տիեզերակալ» տիտղոսով հիշատակվում են նաև Գագիկ Ա-ն և Հովհաննես-Սմբատը[103]: Հաշվի առնելով հատկապես վերջինի՝ «տիեզերակալ» կոչվելու պարագան՝ բոլորովին կարիք չկա փորձել ճշտելու այդ տիտղոսի համապատասխանությունը այն կրող այս կամ այն Բագրատունի զահակալի վաստակի հետ[104]: Թեև, ի դեպ, հանուն արդարության հարկ է շեշտել, որ Սմբատ Բ-ն այնքան էլ զերծ չէր ռազմաքաղաքական և մշակութային մեծագործություններից, ինչպես փորձել են ներկայացնել տարբեր ուսումնասիրողներ: Պետք է հիշել, որ նա 978 թ. Տայքի Դավիթ կուրապաղատի (961-1000 թթ.)

---

[101] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 87: Հմմտ. **Ասողիկ**, էջ 748: Այդ տիտղոսը երբեմն կոչվել է «թագավոր [թագավորաց]/շահնշահ հայոց և վրաց»: Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, էջ 35, 48, **Ibn Ẓāfir**, Akhbār al-duwal al-munqaṭiʿa, ğ. 1, Irbid, 1999, ş. 63, **Minorsky** V., Studies in Caucasian History, London, Taylor's Foreign Press, 1953, p. 10.

[102] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. հոդվ., էջ 73-74:

[103] Տե՛ս **Մարգարյան Հ.**, նշվ. հոդվ., էջ 109: Հղումը՝ **Սաղումյան Ս.**, Գագիկ Ա թագավորի նորահայտ արձանագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 9, էջ 91-92, «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, էջ 48: Տե՛ս նաև **Մանուչարյան Ա.**, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 25-30:

[104] Տե՛ս **Մարգարյան Հ.**, նշվ. հոդվ., էջ 109:

հետ մասնակցել է աբխազական գահին Բագրատ Գ-ին հաստատելու պայքարին՝ դրանով իսկ իր խոշոր ներդրումն ունենալով աբխազավրացական թագավորության ձևավորման գործում[105]: Այնուհետև նա, իր հետ վերցնելով հայոց զորքը, մեկնել է Դավիթ կուրապաղատին ու վրաց Բագրատ Խև թագավորին օգնության՝ ընդդեմ Բագրատ Գ թագավորի, որի արդյունքում աջակցության համար ստացել է Սակուրեթ բերդը[106]: Այս առումով լիովին հասկանալի է Ասողիկի այն վկայությունը, որ «...յաջողեցաւ գործ թագաւորին Հայոց Սմբատայ ի ներքնոց եւ յարտաքնոց»[107], ասել է, թե միայն ներքին հարցերում չէ, որ հաջողել է Սմբատ Բ-ն: Մյուս կողմից Անիի ընդարձակումն ու կառուցապատումը Սմբատ Բ-ի օրոք այն աստիճանաբար վերածել էին միջնադարի մասշտաբներով խոշոր՝ «տիեզերահռչակ» կամ «տիեզերական» քաղաքի[108], որն ակներևաբար մեծ ազդեցություն էր գործել ժամանակակիցների վրա: Պատահական չէ, որ Անիի Մայր տաճարի հարավային պատին Գագիկ Ա թագավորի կնոջ՝ Կատրանիդեի անունից փորագրված տեքստում [թվագրված հայոց 450 (1001) թվականով] Սմբատ Բ-ն կոչված է նաև «մեծ». «... զուրբ կաթաղիկէս, զոր էր հիմնադրեալ մեծին Սմպատա...»[109]:

---

[105] Տե՛ս **Ասողիկ**, էջ 805: Ճիշտ է՝ հեղինակը խոսում է աբխազաց գահին հաստատված Սմբատի մասին, բայց ակնհայտ է վրիպակը, քանի որ խոսքը Բագրատ Գ Բագրատունու մասին է:

[106] Նույն տեղում, էջ 806:

[107] Նույն տեղում:

[108] Տե՛ս **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 125: Տե՛ս նաև նույն տեղում, ծանոթ. 2:

[109] «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, էջ 35:

## 1.3. Հարաբերությունների սրումը Կարսի թագավոր Մուշեղի հետ

Խոսելով Անիի պարիսպների շինարարության և Մայր տաճարի հիմնադրման մասին՝ Ասողիկը հաջորդիվ հաղորդում է, որ «... էր խաղաղութիւն եւ շինութիւն յաշխարհիս Հայոց»[110], ասել է՝ Սմբատ Բ-ի գահակալության առաջին տարիներին Բագրատունյաց թագավորության անդորրը խռովող վտանգներ չկային, որը հնարավորություն էր տալիս նոր գահակալին մի կողմից զբաղվելու մայրաքաղաքի կառուցապատմամբ ու ամրապնդմամբ, իսկ մյուս կողմից, ինչպես կտեսնենք, փորձելու սանձահարել Կարսի թագավորի՝ իր հորեղբայր Մուշեղի անջատողական նկրտումները: «Եւ սկսաւ նա զոռալ ընդ հաւրեղբաւր իւր Մուշեղայ, որ ի Կարս. եւ առնու զբերդն, որ ի Ճակատս, որում Շատիկն կոչեն»[111]: Խնդիրն այն է, որ Շատիկ բերդը մեծապես կարևորվում էր Անիի արքունիքի կողմից, քանի որ այդտեղով էր անցնում առևտրական հիմնական ճանապարհներից մեկը, որը Հայկական պար լեռնաշղթայի Աղտոձորի լեռնանցքով անցնում էր հենց Շատիկ բերդի մոտակայքում: Վերջինս նաև մաքսակետ էր, ուստի կարևորվում էր թե՛ Սմբատ Բ-ի և թե՛ Մուշեղի կողմից[112]: Ակնհայտ է, որ Սմբատ Բ-ի նպատակը չի եղել Կարսի թագավորության վերացումը, որի առկայության դեպքում նա կարշավեր ոչ թե հարավ, այլ արևմուտք՝ մայրաքաղաք Կարսի ուղղությամբ: Սմբատ Բ-ն պարզապես կամեցել է վերահսկողություն սահմանել կարևոր ճանապարհի նկատմամբ:

Ստեղծված իրավիճակում Մուշեղն օգնության համար դիմում է Տայքի կուրապաղատ Դավթին, որը ժամանում է զորքով և Կարսի թագավորին իր հետ վերցրած՝ մուտք գործում Շիրակ՝

---

[110] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

[111] Նույն տեղում:

[112] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, հ. III, էջ 95-96, 98, «Հայոց պատմություն», հ. II, գիրք երկրորդ, էջ 55:

կանգ առնելով Բավաց ձոր գյուղում[113]: Հետաքրքրական է, որ դաշնակիցների զորքը շարժվել է ոչ թե Շատիկ բերդի կողմը՝ այն ազատագրելու, այլ մուտք է գործել Շիրակ: Տայքի ու Կարսի զորքերի հայտնվելը Բագրատունյաց կենտրոնական գավառում նշան էր այն բանի, որ Սմբատ Բ-ն պարզապես հնարավորություն չուներ մարտնչելու կամ գոնե դիմադրություն կազմակերպելու երկու տիրակալների միացյալ զորքի դեմ, որի հետևանքով ստիպված եղավ խաղաղության դիմաց Շատիկ բերդը վերադարձնել Մուշեղին[114]: Այս իրողությունը ակնհայտորեն ցույց է տալիս, թե ինչպիսի ճակատագրական նշանակություն էին ունեցել Բագրատունյաց տիրույթներից ընդարձակ երկրամասերի անջատումը և տեղական թագավորությունների ստեղծումը, ինչի հետևանքով Անիի կենտրոնական իշխանության ռազմական ներուժը էապես նվազել էր՝ հնարավորություն ստեղծելով նախկինում ոչ այնքան ազդեցիկ իշխանությունների ներկայացուցիչներին՝ մարտահրավեր նետելու Անիի տիրակալին: Ավելին՝ Ասողիկը հավելում է, թե խաղաղություն հաստատվեց և «...ոչ ինչ մեղուցեալ աշխարհին Սմբատայ, վասն զի խաղաղասէր եւ իրաւարար էր կիւրապաղատն»[115], ասել է՝ Մուշեղի և Դավիթ կուրապաղատի զորքերը վնասներ չհասցրին[116]

[113] **Ասողիկ**, էջ 760:

[114] Տե՛ս նույն տեղում:

[115] Նույն տեղում, էջ 760-761:

[116] Ասողիկի տեքստում «ոչ ինչ մեղուցեալ աշխարհին Սմբատայ» արտահայտության «մեղուցեալ/մեղուցանել» բառը կնշանակի «մեղք/հանցանք գործել» (տե՛ս «Նոր Բառգիրք հայկազեան լեզուի», հ. երկրորդ, Հ-Ֆ, Եր, Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 249, **Ղազարեան Ռ.**, Գրաբարի հոմանիշների բառարան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2006, էջ 475, իսկ ըստ տեղեկության տրամաբանության՝ «վնաս հասցնել»: Տե՛ս նաև Ասողիկի երկի աշխարհաբար («...հանցավոր ոչինչ չեն անում Սմբատի երկրում», **Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի**, Տիեզերական պատմություն, էջ 241) և ռուսերեն («...не стали причинять ... ни малейшего вреда», «Всеобщая история Степ’аноса Таронского Асох’ика по прозванию», с. 131) թարգմանությունները:

Սմբատի տիրույթներին, որի հնարավորությունը, փաստորեն, ունեին:

Ցավոք, Ասողիկը այս իրադարձության թվականը չի նշում, ուստի մնում է միայն ընդհանուր առմամբ այն տեղադրել Սմբատ Բ-ի գահ բարձրանալու 978 թ. և Մուշեղի վախճանի 984 թ.[117] միջև: Ի դեպ, քանի որ Սմբատ Բ-ի և Մուշեղի հակամարտությունը Ասողիկը նկարագրում է մինչև հայոց 431 թ. (մարտ, 982 թ.-մարտ, 983 թ.) դեպքերի նկարագրությունը[118], հնարավոր է Անիի և Կարսի թագավորների հակամարտության տեղի ունենալու հավանական ժամանակը սահմանափակել 978-982 թթ. միջակայքում: Տրամաբանական է, որ Հ. Հարությունյանն այդ իրադարձության տեղի ունենալու հավանական ժամանակ է համարում 980-981 թվականները[119]:

Հաշտությունից անմիջապես հետո տեղի ունեցավ մի ուշագրավ դեպք, որից կարելի է եզրակացնել, որ գահերեց եղբորորդու սպառնալիքից ազատվելու համար Մուշեղը օգնության էր կանչել ոչ միայն Դավիթ կուրապաղատին, այլ նաև Ատրպատականի Սալարյան Աբլհաճ (Աբու ալ-Հայջա իբն Իբրահիմ իբն Մարզուբան[120]) ամիրային: Ըստ Ասողիկի՝ «բայց Մուշեղ ոչ ունէր զերկիւղն Աստուծոյ ի մտի, վասն զի բազմաբոյծ բոզիք կեայր նա: Եւ առաքեաց կոչեաց զԱբլհաճայ Դելմաստանի, թոռն Սալարին, ամիրայ պարսիկ. որ թէ եւ ընդ նոսա ոչ ժամանեաց, այլ յետոյ եկեալ զՀոռոմոսի վանքն այրեաց եւ զփրկական Նշանն, որ ի վերայ սրբոյ Շողակաթի գմբէթին կանգնեալ էր, ճոպանաւք ի վայր բերէր ի ՆԼԱ թուականին (մարտ, 982 թ.-մարտ, 983 թ. – Ա. Ե.)»[121]: Փաստորեն, Աբու ալ-Հայջան Մուշեղին օգնության չի շտապել, բայց հետո՝ 982 թ., ներխուժել է Շիրակ,

---

[117] Տե՛ս **Ասողիկ**, էջ 766:

[118] Տե՛ս նույն տեղում, էջ 761:

[119] Տե՛ս **Հարությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Եր., Հայաստանի պետական հրատ., 1959, էջ 108:

[120] Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 121:

[121] Տե՛ս **Ասողիկ**, էջ 761:

այրել Հոռոմոսի վանքն ու Ս. Շողակաթ եկեղեցու[122] գմբեթի խաչը վայր բերել: Ի դեպ, «ընդ նոսա ոչ ժամանեաց» արտահայտությունը ցույց է տալիս, որ ամիրան պետք է միավորվեր Մուշեղին ու Դավիթ կուրապաղատին, բայց ժամանակին չէր եկել:

Տեղի ունեցածը, սակայն, էապես չազդեց Անիի ու Կարսի տիրակալների հարաբերությունների վրա: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ Անիի տիրակալը՝ որպես «հայրագլուխ» կամ «ազգապետ», 984 թ. հաստատեց Մուշեղի որդու՝ Աբասի գահակալությունը Վանանդում [«նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ (իմա՛ Սմբատայ – Ա. Ե.) Հայոց արքային»[123]], ինչը ցույց է տալիս, որ Աբասը ճանաչում էր Սմբատ Բ-ի գահերեցությունը:

Աբասը Կարսում գահ է բարձրացել հայոց 433 թ. (մարտ, 984 թ.- մարտ, 985 թ.)՝ իր հայր Մուշեղի մահից հետո, և իշխել 6 տարի[124]: Ըստ Ասողիկի՝ «սա յառաջ քան զթագաւորելն էր մանուկ փոյթ եւ կայտառ, եւ կարծիս տայր տեսողացն՝ անհաղորդ լինել բարեաց ինչ գործոց հոգեւորաց: Իսկ յորժամ եհաս նա յաթոռ թագաւորութեանն, երեւեցաւ նա այր շքեղ, լի հանճարով եւ իմաստուն, ընդ առաջին իմաստունս համարեալ, եւ դարձաւ նա յայր այլ»[125]: Նա զբաղվում էր բարի գործերով՝ իր թագավորությունից ի սկզբանե արմատախիլ անելով ավազակությունն ու մարդաղավությունը: Պատմիչը հաղորդում է, որ նրա հոր օրոք Կարսի թագավորությունում մարդկանց կողոպտում էին ոչ

---

[122] Տե՛ս «Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց», հաւաքեաց Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 19:

[123] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 14: Տեղեկությունը ժամանակավրեպ է, քանի որ Տաշիրքում (ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ Աղվանքում) Գուրգենը թագավորել է 978 թվականից, իսկ Կարսում Աբասը՝ 984 թ.՝ նախքան Գագիկ Ա-ի թագավորելը 990 թվականից: Պարզ է, որ Գագիկ Ա-ի փոխարեն պետք է լինի Սմբատ Բ-ի անունը: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, հ. III, էջ 97:

[124] Տե՛ս **Ասողիկ**, էջ 766, «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 548:

[125] **Ասողիկ**, էջ 766:

միայն բանուկ ճանապարհներին, այլև քաղաքում, որտեղ երեկոյան և գիշերային ժամերին նույնիսկ կողոպտյալների ճիչեր էին լսվում[126]: Աբաս թագավորը կողոպտիչներին ձերբակալեց և մահվան դատապարտեց՝ չխնայելով ո՛չ ավագներին, ո՛չ կրտսերներին, ո՛չ իշխաններին, ո՛չ շինականներին: Այդպիսով նրան հաջողվեց խաղաղեցնել երկրի ներքին կյանքը. մարդիկ այլևս կարողանում էին օրվա տարբեր ժամերին անվտանգ շրջել երկրում՝ պաշտպանված թագավորի արդարադատությամբ[127]:

Աբաս թագավորը Արշարունիք գավառի Շիրիմք գյուղում վանք է կառուցում՝ այն շրջապատելով քառանկյուն պարսպով, որի ներսում գտնվում էին կրոնավորների համար նախատեսված շինությունները[128]:

---

126 Տե՛ս **Ասողիկ**, էջ 766:

127 Տե՛ս նույն տեղում:

128 Տե՛ս նույն տեղում, էջ 767:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
# ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ

## 2.1. Տաշիրքի թագավորության հիմնադրումը

Սմբատ Բ-ի գահակալության առաջին շրջանի գործունեության լուսաբանման առումով կարևոր է անդրադառնալ Տաշիրքի (Տաշրաց) թագավորության[129] ստեղծման ժամանակին ու հանգամանքներին: Այդ մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Սանահինի վանքին արքայի անունից տրված՝ հայոց 428 թ. (մարտ, 979 թ. - մարտ, 980 թ.) հրովարտակը: Վերջինով Սմբատ Բ-ն տալիս էր «վիճակ եւ երկիրս զայս Սանահինիս զամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին եւ զՆերքին, մինչ ի լեառն Բազում, յայսկոյս եւ յա[յ]նկոյս, մինչեւ ի սահմանս Գուգարաց աշխարհին եւ մինչ ի սահմանս Տփխ[ե]աց եւ Վրաց, եւ ի սահմանս Նիգ գաւառի եւ մինչեւ ի սահմանս Կայենոյ, եւ զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս Տան Շիրակայ»[130]: Հոգևոր վիճակի ընդգրկած «Տաշրաց երկրի» սահմանները, որոնք, ինչպես կտեսնենք, նույնական էին Սմբատ Բ-ի կրտսեր եղբայր Գուրգենի գլխավորությամբ հիմնադրված Տաշիրքի թագավորության սահմաններին, ներկայացված են շատ հստակ և որոշակի. դրանցում ընդգրկված էին Այրարատի ծայր հյուսիսարևելյան հատվածը (Նիգ գավառի հյուսիսային հատվածը՝ «հայսկույս Բազումը» և ամենայն հավանականությամբ նաև Վարաժնունիք գավառի հյուսիսային մասը՝ մինչև Ծաղկոցաց-

---

[129] Պատմագիտության մեջ երբեմն կոչվել է «Տաշիր-Ձորագետի թագավորություն», որով փորձ է կատարվել անվանման մեջ ներկայացնել թագավորության աշխարհագրական ընդգրկումը, երբեմն էլ՝ «Լոռիի թագավորություն» (տե՛ս հղված թեմատիկ գրականությունը), իսկ պատմիչների երկերում՝ նաև «Աղվանից թագավորություն» (տե՛ս, օրինակ, **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 22):

[130] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 67-68:

Ծաղկունյաց լեռները) և Գուգարքի ողջ արևելյան հատվածը՝ Կանգարքից մինչև Շամշուլդե ամրոցը հյուսիսում, և Կայան բերդը՝ Աղստև գետի հովտում տարածվող համանուն գավառակով՝ արևելքում[131]: Ասվածին համահունչ է Վարդան վարդապետի այն հաղորդումը, որ Սմբատ Բ-ի եղբայր Գուրգենը «ժառանգէ զՏաշիր Սևորդւովքն Ձորոյգետին. և զԿայեն և զԿայծոն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ, և զԲազունիք՝ որ է Բազկերտ ի գաւառն Տաշրայ»[132]: Հաղորդումից պարզ է, որ Գուրգենի թագավորության հյուսիսային և արևելյան սահմանները հիմնականում համապատասխանում էին Սմբատ Բ-ի հրովարտակում մանրամասնորեն նկարագրված հոգևոր վիճակի սահմաններին: Անանուն ժամանակագրություններից մեկում նշված է, որ «Գուրգէն (իմա՛ Տաշիրքի առաջին թագավորը – Ա. Ե.) տիրէ Գոգարացւոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խառայ մինչև ի դուռն Տփխեաց»[133], որն առնվազն հյուսիսային սահմանի առումով համապատասխանում է Սանահինի հիշատակարանի հաղորդած տվյալներին:

Տաշիրքի թագավորության հիմնադրման նշանակությունը չի կարելի թերագնահատել, քանի որ դրանով հերթական բաժանմանն էին ենթարկվում Բագրատունյաց արքունի և տոհմական տիրույթները: Եթե Աշոտ Գ-ի օրոք դրանցից բաժանվել էր արևմտյան հատվածը, որտեղ ստեղծվել էր Կարսի թագավորությունը, ապա այժմ՝ նաև հյուսիսարևելյանը: Ի դեպ, հույժ էական է հիշելը, որ ըստ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» կոչված ժամանակագրության՝ Աշոտ Գ-ի որդիներ Սմբատը, Գուրգենը և Գագիկը «... համակամ սիրով երիս բաժանեն

---

[131] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Կայան բերդի և գավառի տեղադրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 2, էջ 53-62:

[132] **Վարդան վարդապետ**, էջ 90: Հեղինակի թվարկած բերդերից Կայանը գտնվում էր Ձորոփորում, Կայծոնը՝ Ձորագետի հատվածում, Խոշոռնին՝ Ծոբոփորում, Բազկերտը՝ Տաշիրքում: Տե՛ս **Հովհաննիսյան Մ.**, Հայաստանի բերդերը, Վենետիկ - Ս. Ղազար, 1970, էջ 533-588:

[133] «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501:

զթագաւորութիւնն՝ հայրագլուխ[134] առնելով զՍմբատ»[135], ինչը նշանակում է, որ Բագրատունիների տիրույթները բաժանվել են երեք եղբայրների միջև: Բայց, եթե Գուրգենի ստացած հողերը հիշատակվում են, ապա Գագիկին բաժին հասած տիրույթների մասին տեղեկություններ չկան: Ըստ որում, ճիշտ է՝ խոսվում է թագավորության և ոչ թե Բագրատունյաց տիրույթների բաժանման մասին, սակայն հավանական չէ, որ բաժանման մեջ տեղ գտնեին այլ տոհմերին՝ Արծրունիներին, Սյունիներին և այլոց պատկանող տարածքները, ինչն ակնհայտ է Գուրգենի ստացածից, որում ընդգրկված էին հատվածներ բացառապես Բագրատունիների տոհմական ու արքունի տիրույթներից: Գագիկի պարագային կանդրադառնանք այլ ուսումնասիրությամբ, քանի որ այն առանձնահատուկ է, իսկ այժմ քննության առնենք Տաշիրքի թագավորության ստեղծման հարցը:

Պատմիչներից Տաշիրքի թագավորության հիմնադրման մասին տեղեկություններ է պահպանել միայն Մխիթար Այրիվանեցին՝ այդ իրողությունը թվագրելով 981 թվականով. «Աստ եղև սկիզբն թագաւորելոյ Բագրատունեաց ի վերայ Վրաց, զի Գուրգէն ի Վիրս և Սմբատ եղբայր նորա ի Հայս թագաւորեցին»[136]: Ակնհայտ է, որ խոսքը Աշոտ Գ-ի որդի Գուրգենի թագավորելու մասին է, թեև սխալմամբ նրան վերագրված է Վիրքում թագավորելը:

---

[134] «Հայրագլուխ» նշանակում է «իբրև հայր խնամակալող, խնամակալ»: Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ս. Մալխասեանց, հատոր առաջին, Ա-Ե, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 40:

[135] «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501: Տե՛ս նաև «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 59:

[136] Տե՛ս «Մխիթարայ Այրիւանեցւոյ պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 56, «Մխիթարայ Այրիւանեցւոյ պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71:

Դեռևս Մ. Չամչյանցը Գուրգենի թագավորելը թվագրում էր 982 թ.՝ այն կապելով Սմբատ Բ-ի ունեցած դժվարությունների ժամանակ Գուրգենի հավատարմության հետ[137]:

Ղ. Ալիշանը իրադարձությունների ընթացքը ներկայացնում է հետևյալ կերպ. «Զկնի մահուան Աշոտոյ ի թուականին ՆԻԶ (426 թ.՝ մարտ, 977 թ. - մարտ, 978 թ. – Ա. Ե.), թագաւորէ որդի նորա Սմբատ. որում պատահէ երթալ ի տեսութիւն ողբօրն իւրում հարազատին Գուրգենայ, որ էր յայնժամ իշխան բնաւ երկրին Տաշրաց...»: Փաստորեն, ըստ հեղինակի՝ Գուրգենը իշխել է Տաշիրքում դեռևս նախքան թագավորելը: Երկու եղբայրներն այցելում են Սանահին և Գուրգենը հրովարտակ է գրում, որով նվիրատվություններ է կատարում վանքին՝ իրեն կոչելով «Գուրգէն թագաւոր, Շահնշահի որդի Աշոտոյ Ողորմածի»[138]: Ակնհայտ է, որ Ղ. Ալիշանը նկատի ունի Սմբատ Բ-ի 978 թ. այցելությունը Տաշիրք, ինչից կարելի է եզրակացնել, որ նա Գուրգենի գահակալության սկզբնավորումը համարում է 978 կամ 979 թվականը:

Հ. Ղևոնդ Մովսեսյանի կարծիքով Սմբատ Բ-ն 979 թ. հրովարտակով միաժամանակ «կը գծեր ... իւր եղբօր Գուրգէնի իշխանութեան սահմանները, եւ այս առթիւ տեղի կունենար Տաշիրքի անկախ հրատարակութեան հանդէսը Սանահնի մէջ, ուր գացած էր Հայոց թագաւորը այս նպատակաւ»[139]: Նա, հիմք ընդունելով հրովարտակի 979 և Գուրգենի թագավորելու՝ Մխիթար Այրիվանեցու հիշատակած 981 թվականները, Տաշիրքի թագավորության ստեղծումը թվագրում է 980 թ.[140]:

Տաշիրքի թագավորության պատմության վերաբերյալ մի շարք հետազոտությունների հեղինակ Ռ. Մաթևոսյանը շրջանառել է տեսակետ այն մասին, թե Տաշիրքի թագավորությունը ստեղծվել է դեռևս Աշոտ Գ-ի գահակալության շրջանում: Նման տեսակետի հիմքում Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունն է,

---

[137] Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 851:

[138] Տե՛ս **Ալիշան Ղ.**, Հայապատում. պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 105:

[139] **Մովսէսեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 26:

[140] Տե՛ս նույն տեղում, էջ 28:

ըստ որի՝ 974 թ. բյուզանդական բանակին ընդառաջ շարժվող հայոց զորքի կազմում էր, ի թիվս այլ թագավորների ու իշխանների, «թագաւորն Աղուանից Գուրգէն»-ը[141], որը նույնանում է Տաշիրքի առաջին թագավոր, Սմբատ Բ-ի եղբայր Գուրգենին: Թեև ակնհայտ է պատմիչի կողմից հայոց զորքի կազմում ներկայացված անձանց անվանացանկի ժամանակավրեպությունը[142], սակայն Ռ. Մաթևոսյանն այն հիմք է ընդունել Գուրգենի թագավորելը դեռևս Աշոտ Գ-ի օրոք հիմնավորելու համար՝ որպես թագավորելու մեկնակետ նշելով 972 թվականը[143]: Հետագայում Ռ. Մաթևոսյանը խմբագրել է իր տեսակետը և Գուրգենի թագավոր դառնալը թվագրել 979 թվականով[144], սակայն ծանոթագրության մեջ հավելել, թե «Գուրգենը գահակալությունը ստանձնել է 972 թ.»[145], ինչը խիստ հակասական է: Թեմային առնչվող իր հոդվածներից մեկում էլ նա փորձել է հիմնավորել Տաշիրքի թագավորության՝ 969/970 թ. ստեղծված լինելը[146]: Իր վերջին ուսումնասիրություններից մեկում էլ Ռ. Մաթևոսյանը ներկայացրել է Տաշիրքի թագավորության ձևավորման հետևյալ ընթացքը: 960-ական թթ. Աշոտ Գ-ն վարչական բարեփոխումներ է կատարել Տաշիրքում՝ միավորելով դեռևս X դ. սկզբին գոյություն ունեցող Տաշիրք և Ուտի գավառները և ստեղծելով Տաշիրք «երկիրը»: Վերջինս ուղղակիորեն ենթարկվում էր

---

[141] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 22:

[142] Տե՛ս **Ղարիբյան Ի.**, Կյուրիկյան թագավորության հռչակման տարեթվի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 1, էջ 82, **Հարությունյան Բ.**, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 148-149:

[143] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, «Պատմաբանասիրական հանդես», 1968, № 3, էջ 200-202:

[144] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 102:

[145] Նույն տեղում, ծանոթ. 7:

[146] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Լոռվա թագավորության կազմավորման պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 3, էջ 86-95:

արքունիքին: Միևնույն ժամանակ ստեղծվեց նաև Տաշիրք երկրի եկեղեցական թեմը՝ Սանահին կենտրոնով: Հետազոտողը Սանահինի Ս. Ամենափրկիչ եկեղեցու՝ Սմբատ և Գուրգեն Բագրատունիների քանդակից, որի ներքո գրված է «Կորիկէ թագաւոր, Սմբատ թագաւոր»[147], եզրակացնում է, որ Սմբատը Տաշիրքում ուներ վարչական իշխանություն որպես Աշոտ Գ-ի թագավորգահակից, ավելի որոշակի՝ փոխարքա և հայոց թագավորի ներկայացուցիչ: Քանի որ Գուրգենը ևս այդ քանդակում հանդես է գալիս որպես թագավոր, նա եզրակացնում է, որ Ս. Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակ (957-966 թթ.) «Տաշիրում, բացի Սմբատից, կար նաև այլ կառավարիչ-թագավոր»[148]: Այստեղ միայն նշենք, որ Սանահինի վանքի ուսումնասիրությունն իրականացրած Կ. Ղաֆադարյանը նշված վիմագիրը թվագրում էր ոչ թե 960-ական թթ. երկրորդ կեսով, այլ 980-ական թվականներով[149], երբ երկու եղբայրները թագավորում էին՝ Սմբատը՝ որպես գերակա և Գուրգենը՝ ստորակա: Պետք է նշել նաև, որ հետազոտողը մերժում էր Մխիթար Այրիվանեցու տեղեկության իսկությունը՝ այն համարելով անճշտություններով ու շփոթություններով լեցուն[150]:

Ի. Ղարիբյանը հերքում է Աշոտ Գ-ի օրոք Գուրգենի թագավորելու վարկածը[151]: Նա Գուրգենի թագավոր հռչակվելու հավանական ժամանակը սահմանափակել է 979 թվականից սկսած շրջանով՝ կարծելով, որ, եթե մինչ հրովարտակը, այսինքն՝ 972 թվականից, Գուրգենը թագավոր լիներ, ապա Սմբատ Բ-ն Տաշիրքում ազատ տնօրինել չէր կարող, քանի որ դա կդիտվեր որպես ֆեոդալական սեփականատիրական իրա-

---

[147] **Ղաֆադարյան Կ.**, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1957, էջ 77, 98:

[148] **Մաթևոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ153-154:

[149] Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 98:

[150] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, էջ 200:

[151] Տե՛ս **Ղարիբյան Ի.**, նշվ. հոդվ., էջ 79-82:

վունքի խախտում[152]: Ի. Ղարիբյանը Գուրգենի թագավորության հիմնադրումը թվագրում է 979 թվականով և համարում, որ նա գահակալել է 10 տարի՝ մինչև 989 թվականը[153]: Հետազոտողը Գուրգենի թագավոր հռչակվելը կապում է Սմբատ Բ-ի 979 թ. հրովարտակի հետ, որով, փաստորեն, համերաշխվում է Հ. Ղևոնդ Մովսեսյանի այն տեսակետին, որ հոգևոր վիճակի սահմաններն ամրագրելով՝ Սմբատ Բ-ն նաև սահմանում էր Գուրգենի թագավորության տարածքը: Սմբատ Բ-ն, գնալով Սանահին, հռչակում էր նոր թագավորության սկզբնավորումը, որը նրա բարի կամքի դրսևորումն էր և արդյունք էր հայոց թագավորության այդ հատվածը կենտրոնախույս ձգտումներից ապահովագրելու նրա ցանկության[154]:

Ըստ Ա. Շահնազարյանի՝ Սանահինի վանքի դպիր Սիմեոնի 979 թ. հիշատակարանում Գուրգենը ներկայացված է որպես «իշխան բնաւ երկրին Տաշրայ»[155], ինչը որոշակիորեն ցույց է տալիս Սմբատ Բ-ի հրովարտակում հիշատակված՝ Սանահինի վանքին տրված վիճակի՝ Տաշրաց երկրի և Գուրգենի իշխանությանը հանձնված տարածքների նույնությունը, առավել ևս, որ Գուրգենի տիրույթները պետք է ունենային առանձին եկեղեցական կազմակերպություն (հոգևոր վիճակ)[156]: Հաշվի առնելով

---

[152] Տե՛ս **Ղարիբյան Ի.**, նշվ. հոդվ., էջ 81:

[153] Թվագրման հիմքում Վ. Հակոբյանի այն ուղղումն է, ըստ որի՝ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» ժամանակագրության մեջ Գուրգենին 50-ամյա գահակալություն (ամս Ծ) վերագրելը վրիպակ է, իրականում պետք է լինի «ամս Ժ (10 – Ա. Ե.)»՝ նկատի ունենալով Ժ և Ծ տառերի հավանական շփոթը: Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 503, ծանոթ. 3:

[154] Տե՛ս **Մովսէսեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 26, **Ղարիբյան Ի.**, նշվ. հոդվ., էջ 84-85:

[155] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 3031, թ. 43 (հղումը՝ **Շահնազարյան Ա.**, Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, «Պատմաբանասիրական հանդես», 2009, № 2-3, էջ 225, ծանոթ. 5), «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 59:

[156] Տե՛ս **Շահնազարյան Ա.**, նշվ. հոդվ., էջ 226:

Մխիթար Այրիվանեցու կողմից Գուրգենի թագավոր հռչակվելու վերաբերյալ 981 թ. հիշատակությունը՝ հետազոտողը այն համարում է ընդունելի[157]:

Գուրգենի թագավորելու և ըստ այդմ՝ Տաշիրքի թագավորության ի հայտ գալու ժամանակի ու հանգամանքների վերաբերյալ առաջարկվել են այլ տեսակետներ ևս (Լեո, Հ. Հարությունյան և այլք), որոնց չենք անդրադառնում, քանի որ ներկայացված չեն թվագրման հիմնավորումները:

Ներկայացված աղբյուրային և հետազոտական նյութը հնարավորություն է տալիս հստակեցնելու, որ մինչև 978 թվականը՝ Աշոտ Գ Ողորմածի մահը, Գուրգենը թագավոր չէր հռչակվել: Խնդիրն այն է, որ դեպքերի ժամանակակից Ասողիկը որևէ կերպ չի հիշատակում, այդ իրադարձությունը մինչդեռ ներկայացնում է Մուշեղի թագավորելը Կարսում, ինչը ցույց է տալիս, որ եթե նման դեպք տեղի ունեցած լիներ Աշոտ Գ-ի օրոք, Ասողիկն այն անպայման կհիշատակեր: Մյուս կողմից, վերոհիշյալ տեղեկությունն այն մասին, որ Աշոտ Գ-ի մահից հետո երեք արքայազունները բաժանել են հայրական ժառանգությունը («երիս բաժանեն զթագաւորութիւնն»), ցույց է տալիս, որ Գուրգենի՝ սեփական տիրույթներ ստանալը և այնուհետև թագավորելը տեղի են ունեցել Սմբատ Բ-ի գահ բարձրանալուց հետո: Միևնույն ժամանակ, ելնելով վերոբերյալ ժամանակագրության տեղեկությունից, կարելի է որոշակիացնել, որ հայրական տիրույթների բաժանումը եղբայրների միջև կատարվել է Սմբատ Բ-ի թագադրությունից անմիջապես հետո, քանի որ ըստ նշված տեղեկության՝ եղբայրները բաժանել են տիրույթները և Սմբատին ճանաչել գերակա (հայրագլուխ): Սխալված չենք լինի, եթե նշենք, որ բաժանումը տեղի է ունեցել 978 թ., երբ Աշոտ Ողորմածի մահից հետո (հունվարի 3) Սմբատն անմիջապես թագադրվեց: Այսինքն՝ Գուրգենը ստացավ տիրույթներ, որոնց սահմանները ճշտվեցին ի սկզբանե: Խոսքը Տաշիրք երկրի մասին է, որի սահմանները հստակորեն հիշատակված են 979 թ.

[157] Տե՛ս **Շահնազարյան Ա.**, էջ 225: Տե՛ս նաև «Հայոց պատմություն», հ. II, գիրք երկրորդ, էջ 127-130:

իրովարտակում: Սակայն դրանք չէին համապատասխանում տեղի եկեղեցական կառույցի (հոգևոր վիճակի) սահմաններին, և այդ անհրաժեշտ համապատասխանեցումը տեղի ունեցավ արդեն 979 թ. իրովարտակով: Սակայն այստեղ ճիշտ չի լինի Ի. Ղարիբյանի օրինակով կարծել, որ Գուրգենի՝ նախքան այդ թագավոր հանդիսանալու պարագայում 979 թ. իրովարտակի գործադրումը Սմբատ Բ-ի կողմից կլիներ կրտսեր եղբոր սեփականատիրական իրավունքի խախտում: Խնդիրն այն է, որ այդ հրովարտակով ոչ թե խախտվում էին նրա իրավունքները, այլ պարզապես համապատասխանեցվում էին Տաշիրք երկրի և տեղի եկեղեցական կառույցի սահմանները, ինչին, բնականաբար, Գուրգենը դեմ լինել չէր կարող: Ուստի կարծում ենք, որ ոչ թե Գուրգենն է ստացել տիրույթներ՝ համապատասխան հոգևոր վիճակի սահմաններին, այլ հոգևոր վիճակն է հետագայում համապատասխանեցվել Գուրգենի տիրապետության սահմաններին: Հրովարտակում Գուրգենի չհիշատակվելու պատճառն էլ այն է, որ այնտեղ խոսքը զուտ հոգևոր վիճակի սահմանների մասին է:

Այսպիսով՝ ավելի հավանական է թվում, որ Գուրգենի թագավոր հռչակվելը տեղի է ունեցել հենց 978 թ., երբ նա հայրական ժառանգությունից ստացել է իր ընդարձակ բաժինը և սկսել իշխել այնտեղ՝ փաստորեն, նաև ձեռք բերելով նոր՝ ենթակա թագավորի կարգավիճակ: Ճիշտ է, բաց է մնում մյուս եղբոր՝ Գագիկի պարագան, քանի որ, եթե Գուրգենը, ստանալով իր տիրույթները, թագավոր էր հռչակվել, ապա ինչո՞ւ նույնը չէր կատարվել Գագիկի հետ: Գագիկի դեպքը խիստ առանձնահատուկ էր և ամենայն հավանականությամբ առնչվում էր արքունիքում նրա ունեցած կարգավիճակին, երբ եղբոր՝ Սմբատ Բ-ի անժառանգության պայմաններում նա ընկալվում էր որպես գահաժառանգ՝ գտնվելով արքայի կողքին, ինչպես, օրինակ, 988 թ. արշավանքի ժամանակ[158]:

[158] Տե՛ս **Ասողիկ**, էջ 806:

Վերադառնալով Աշոտ Գ Ողորմածի մահից հետո արքունի տիրույթների բաժանմանը՝ արձանագրենք, որ «հայրագլուխ առնել» կնշանակի ճանաչել գերակա՝ ընդունելով սեփական ստորակա վիճակը: Նման գործողության կարիք չէր լինի, եթե իրավիճակը լիներ պարզ, և արքայի երեց որդին իրավունքի ուժով, առանց այլևայլության ժառանգեր գահը: Նախկինում նման նախադեպ Բագրատունի որևէ գահաժառանգի՝ գահ բարձրանալու դեպքում չէր եղել: Ակնհայտորեն, «հայրագլուխ առնելու» տրամաբանությունն այն էր, որ Սմբատի եղբայրները նրա թագադրությունից հետո, փաստորեն, ստացել էին սեփական տիրույթներ հայրական ժառանգությունից, իսկ նրանցից առնվազն մեկը՝ Գուրգենը, հռչակվել էր թագավոր, որով էլ առաջացել էր գերակայի ու ստորակայի հստակ տարանջատման ու շեշտադրման անհրաժեշտություն, և Գուրգենն ու Գագիկը Սմբատին ճանաչել էին որպես գերակա: Այն, որ եղբայրների հետ հայրենի ժառանգությունը բաժանելու արդյունքում Գուրգենը հռչակվել է Տաշիրքի թագավոր, անուղղակիորեն հիշատակված է Սանահինի «Հիշատակարանում», որտեղ ներկայացնելով նշյալ բաժանմամբ Գուրգենի ձեռք բերած տիրույթի սահմանները՝ այնուհետև անմիջապես նշվում է, որ նա «վարեաց ... զամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ յոգնապատիկ բարէպաշտութեամբ...»[159]:

Տեղին է նշելը, որ կարիք չկա նաև Գուրգենի թագավոր հռչակվելու համար փնտրելու համապատասխան պատմական պատճառներ, քանի որ մասնատման գործընթացը Բագրատունյաց թագավորությունում սկիզբ էր առել վաղուց և խորացել Մուշեղի՝ Կարսում թագավոր հռչակվելով, որով նաև ստեղծվել էր համապատասխան նախադեպ: Աշոտ Գ-ի երեք որդիների միջև հայրական հողերի բաժանումն ու տեղերում թագավորներ հռչակվելն այդ առումով արտառոց երևույթներ չէին, և դա նման էր Վասպուրականի պարագային, երբ Աբուսահլ-Համազասպ թագավորի (959-969 թթ.) մահից հետո նրա երեք որդիները, գա-

[159] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 59:

հերեց ճանաչելով Աշոտ-Սահակին, թագավորեցին նրան զուգահեռ՝ Սենեքերիմը՝ Ռշտունիքում, իսկ Գուրգենը՝ Անձևացիքում[160]:

Գուրգեն Բագրատունու՝ Տաշիրքում թագավոր հռչակվելը 978 թ. թվագրելուն չի հակասում նաև այն, որ Սանահինի 979 թ. «Հիշատակարանում» նա ներկայացված է որպես «իշխան բնաւ երկրին Տաշրայ», որին տեսակցության էր գնացել Սմբատ Բ-ն[161]: Տեղեկությունն անմիջապես հաջորդում է «Հիշատակարանի» տեքստի այն հատվածին, որտեղ ներկայացված են Աշոտ Գ-ի մահը, Սմբատ Բ-ի գահ բարձրանալը և Անիի պարիսպների ու Մայր տաճարի շինարարության սկիզբը: Երկու եղբայրները բազում օրեր անցկացրին ցնծության ու խրախճանքների մեջ, իսկ այնուհետև որոշեցին այցելել Սանահինի Ս. Աստվածածին կաթողիկե եկեղեցի, որը կառուցվել էր նրանց ծնողների՝ Աշոտ Ողորմած թագավորի և Խոսրովանույշ թագուհու ջանքերով: Այցի ընթացքում եղբայրները «...իբրեւ կատարին զուխտս իւրեանց, փափագեցան յայն ժամ եւ իւրն ունել ընտանի Երուսաղէմ եւ զաւակ հոգեւոր ի տանս Աստուծոյ, գրէ կոնդակ եւ արձան յաւիտենական թագաւորական հրամանաւ՝ աւրինակ զայս [....]»[162]: Տեքստը մնում է անավարտ, և հասկանալի չէ, թե ինչ կոնդակի մասին է խոսքը, թեև ակնհայտ է, որ «...իւրն ունել ընտանի Երուսաղէմ եւ զաւակ հոգեւոր ի տանս Աստուծոյ (իմա՛ Սանահինի վանքում – Ա. Ե.)» հատվածը նշանակում է, որ եղբայրները կամ առնվազն նրանցից մեկը (խնդիրն այն է, որ հիշատակության մեկ նախադասության մեջ հոգնակի և եզակի

---

[160] Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 841, **Շալջյան Ս.**, Վասպուրականի թագավորության պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1949, № 4, էջ 57, ծանոթ. 1, **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Եր., Երևանի համալսարանի հրատ., 1969, էջ 181:

[161] Տե՛ս «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 56:

[162] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 56-57:

թվերը օգտագործված են խառը կերպով [«կատարին զուխտս իւրեանց», «փափազեցան», «գրէ կոնդակ»)] որոշել են եկեղեցի կառուցել: Ակնհայտ է, որ Սմբատ Բ-ի սույն այցելությունը Տաշիրք և Սանահինի վանք չի նույնանում այդ ուղղությամբ 979 թ. նրա կատարած ուղևորության հետ, այլ, անկասկած, նախորդել է դրան: Հետևաբար չեն նույնանում նաև Գուրգենի հետ Սանահինի վանք այցելության ընթացքում գրված կոնդակ-հրովարտակը և Սմբատ Բ-ի 979 թ. հրովարտակը, որոնց բովանդակությունը լիովին տարբեր էր: 979 թ. դրությամբ Գուգենն արդեն թագավոր էր, ուստի պատահական չէ, որ այդ թվականին գրված «Հիշատակարանում» հատուկ կերպով մատնանշվում է, որ Գուրգենը «իշխան բնաւ երկրին Տաշրայ» էր ոչ թե 979 թ., երբ գրվում էր հիշատակարանը, այլ դրանից առաջ՝ «յայն ժամ» («որ էր յայն ժամ իշխան բնաւ երկրին Տաշրայ»), երբ Աշոտ Ողորմածի մահից հետո գահ բարձրացած Սմբատ Բ-ն այցելել էր նրան, անկասկած, 978 թ.:

Փաստորեն, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ Աշոտ Գ-ի մահից հետո գահ է բարձրացել Սմբատը, այնուհետև եղբայրներին բաժին է հանել հայրական տիրույթներից ու նրանցից առնվազն մեկին՝ Գուրգենին, 978 թ. հռչակել տեղական թագավոր Տաշիրքում: Այդ իրողությունը առաջ է բերել Գուրգենի և Գագիկի կողմից Սմբատ Բ-ի գերակայության ճանաչման անհրաժեշտություն, որն էլ արձանագրվել է երկու կրտսեր եղբայրների կողմից Սմբատ Բ-ին «հայրագլուխ առնելով»: Վերջինը, ի դեպ, անհրաժեշտ է ընկալել նաև վերևում ներկայացված տրամաբանությամբ, ըստ որի՝ հայոց թագավորն իր տերության կազմի կրտսեր թագավորների նկատմամբ հանդես էր գալիս որպես հոգատար հայր, իսկ նրանք էլ հայոց թագավորին վերաբերվում էին իբրև հավատարիմ որդիներ: Այս առումով պատահական չէ, որ, երբ հետագայում Տաշիրքի թագավոր Դավիթը (հետագայում Անհողին կոչված) փորձեց չհնազանդվել Գագիկ Ա-ին, բայց ենթարկվեց զենքի ուժով հայոց 450 թ. (1001 թ.), կաթողիկոսի միջնորդությամբ հաշտվեց Անիի տիրակալի հետ՝ «կալ ի հնազանդութեան Դաւթի, իբրեւ որդի առ

հայր, եւ Գագկայ հայրենի խնամով սիրել զնա» պայմանով[163]: Նմանապես, ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ 984 թ. «...նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ (իմա՛ Սմբատայ – Ա. Ե.) Հայոց արքային, և Գուրգէն՝ յԱղուանից աշխարհին, վասն զի յազգէ Հայոց թագաւորացն էին և կային ի հնազանդութիւն տանն Շիրակայ»[164], որից կարելի է եզրակացնել, որ Բագրատունյաց տոհմական և արքունի տիրույթներում ձևավորված երկու կրտսեր թագավորությունները ստորադասված էին Անիի տիրակալին, որը հանդես էր գալիս որպես ազգապետ կամ տոհմի ավագ[165] (նույնն է, ինչ հայրագլուխը) և պահպանում Կարսի ու Տաշիրքի թագավորներին տեղական գահերին հաստատելու իրավասությունը:

---

[163] Տե՛ս **Ասողիկ**, էջ 825-826:

[164] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 14:

[165] Տե՛ս **Степаненко В.**, Из истории Армяно-византийских отношений второй половины X-XI в. (к атрибуции монет Кюрикэ куропалата), «Античная древность и средние века», Свердловск, 1978, вып. 15, с. 46:

## 2.2. Թագավորության հռչակումը Փառիսոսում

Սմբատ Բ-ին չհաջողվեց կասեցնել մասնատման գործընթացի խորացումը երկրում: Նրա օրոք Հայաստանի տարածքում հանդես եկած թագավորություններից մյուսը Փառիսոսի թագավորությունն էր: Վերջինիս հռչակման մասին կարևոր տեղեկություն է պահպանել Մովսես Դասխուրանցին: Ըստ պատմիչի՝ «[Սահակ] Սեւադայ ծնանի Բ-ս որդիս՝ զԳրիգոր եւ զԴաւիթ. Գրիգոր ծնանի զՍեւադայ, որ Իշխանանուն կոչիւր, եւ զԱտրներսեհ: Իշխանանուն ծնանի որդիս Դ՝ զՅովհաննէս, զԳրիգոր, զԱտրներսեհ եւ զՓիլիպպէ: Իսկ զերէց որդին Իշխանաննոյ զՅովհաննէս, որ եւ Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջ բարձրելոյն՝ կոչելով ի թագաւորութիւն»[166]: Փաստորեն, Փառիսոսի առաջին թագավոր Հովհաննես-Սենեքերիմն Աշոտ Երկաթ թագավորի (914-929 թթ.) աներոջ՝ Գարդմանի իշխան Սահակ Սևադայի թոռնորդին էր:

Փառիսոսում թագավորության գոյության մասին պատկերացում է տալիս Ասողիկը, ըստ որի՝ «...մայր թագաւորին Աբասայ (Կարսի թագավոր 984 թվականից – Ա. Ե.), բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց, որ էր քոյր թագաւորացն Փառիսոսայ Սենեքերիմայ եւ Գրիգորի»[167]: Այս տեղեկությունից հեռուն գնացող ժամանակագրական ու բովանդակային հետևություններ կատարելը դժվար է: Նախ՝ «թագաւորացն Փառիսոսայ Սենեքերիմայ եւ Գրիգորի» հատվածը ցույց է տալիս, որ պատմիչի տեղեկությունն աչքի չի ընկնում առանձնահատուկ հստակությամբ, քանի որ դժվար է հասկանալը՝ եղբայրները միաժամանա՞կ էին թագավորում, թե՞ Գրիգորը հետևել է Սենեքերիմին: Գուցե հենց դա է պատճառը, որ Բ. Ուլուբաբյանը անհավանական է համարել երկու եղբայրների՝ Փառիսոսում միաժամանակ թագավորելը՝ համարելով, որ այնտեղ իրականում թագավորում էր Սենեքե-

---

[166] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Մովսես Կաղանկատվացի), «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Երևան, 2011, էջ 420:

[167] Տե՛ս **Ասողիկ**, էջ 767:

րիմը, իսկ Գրիգորը թագավորում էր Խաչենում[168]: Հետո Ասողիկի տեղեկությունից հնարավոր չէ բխեցնել, թե երբ է ստեղծվել Փառիսոսի թագավորությունը, այլ միայն այն, որ Կարսում 984 թվականից թագավորած Աբասի օրոք Փառիսոսի թագավորությունն արդեն գոյություն ուներ:

Բ. Ուլուբաբյանը, անդրադառնալով Փառիսոսի թագավորության ստեղծման ժամանակին, սկզբում գրում է, որ ըստ Անանիա Մոկացու՝ 958 թ. Սենեքերիմը իշխանաց իշխան էր, սակայն այնուհետև կարծիք հայտնում, թե «Սենեքերիմը Փառիսոսի թագավորն էր X դարի կեսին»[169]: Իրականում, 950-ական թթ. ավարտի վերաբերյալ տեղեկությունները ցույց են տալիս, որ Սենեքերիմն այդ ժամանակ դեռ թագավոր չէր: Երբ 959 թ. Անանիա Մոկացի կաթողիկոսը (941-966 թթ.) մեկնեց Հայոց արևելից կողմեր («յաշխարհն Աղուանից»)՝ կարգավորելու առաջ եկած եկեղեցական խնդիրները[170], «...գուժկան հասանէր ի մեծ իշխանէն Սենեքերիմայ՝ զալ հասանել Իսմայելականաց բռնութեամբ յաշխարհն նոր ա, զերել եւ աւերել եւ ի սուր սուսերի մաշել: Եւ զիրս աղէտիցն առաքէ ծանուցանել մեզ՝ մի՛ եւս մտանել առ անգամ մի յամպրոպ դառնութեան»[171]: Այնուհետև կաթողիկոսի՝ Շիրակ վերադառնալուց հետո, Աղվանից Իշխանակ թագավորը, Աղվանից իշխանաց իշխան Սենեքերիմը, Խաչենի իշխան Գրիգորի որդի Սենեքերիմը, Գոռոզվա Վաչագան իշխանը և այլք Շիրակ են ուղարկում Դավիթ վանականին[172]: Նույն իրադարձության վերաբերյալ Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Լուեալ ապա զայն տէրանցն Աղվանից՝ Իշխանկայ և Սենեքերիմայ և միւս Սենեքե-

---

[168] Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 91:

[169] Նույն տեղում:

[170] Տե՛ս «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեանն տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն», «Մատենագիրք Հայոց», Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 273:

[171] Նույն տեղում:

[172] Նույն տեղում:

րիմայ՝ որդւոյ Գրիգորի, ... և Ջեւանշիրի և Գուրգենայ ... առաքեն ... զԴաւիթ կրօնաւոր»[173]: Անանիա Մոկացու հիշատակած մեծ իշխան Սենեքերիմի անձի ստակեցման առումով նշենք, որ կաթողիկոսը երկու Սենեքերիմ է հիշատակում՝ Փառիսոսի տիրոջը («Սենեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի»)[174] և Խաչենի Գրիգոր իշխանի որդուն («տեառն Սենեքերիմ»), որոնցից «մեծ իշխան Սենեքերիմ» հիշատակությունն առավել վերագրելի է «իշխանաց իշխան Սենեքերիմին», որ ոչ այլ ոք է, եթե ոչ Աշոտ Երկաթ թագավորի աներոջ՝ Գարդմանի իշխան Սահակ Սևադայի թոռնորդի Հովհաննեսը, որը, ըստ Մովսես Դասխուրանցու, Սենեքերիմ էր կոչվում և թագավոր էր հռչակվել: Այսինքն՝ Անանիա Մոկացու տեղեկությունը Փառիսոսի թագավորության հիմնադրի մասին է, որն այդ ժամանակ թագավոր չէր և ամենայն հավանականությամբ թագավոր է հռչակվել Սմբատ Բ թագավորի օրոք: Ասվածից ակնհայտ է, որ X դ. կեսին՝ 950-ական թթ. ավարտին, Սենեքերիմը դեռ թագավոր չէր, այլ մեծ իշխան կամ իշխանաց իշխան:

Այս առումով պետք է նշել, որ Ա. Հակոբյանը Փառիսոսի թագավորության հռչակումը տեղադրում է «Պատմութիւն Աղուանից» երկի շարադրմանը նախորդող շրջանում, ավելի որոշակի՝ մինչև 976 կամ 982 թվականը[175], ինչը առավել քան տրամաբանական է, քանի որ այդ ժամանակ շարադրված պատմության մեջ առկա է Սենեքերիմի՝ թագավոր հռչակվելու իրողության հիշատակությունը: Ավելի հավանական է Փառիսոսում թագավորության ստեղծման թվագրումը մինչև 982 թվականը, քանի որ Աշոտ Գ Ողորմած թագավորի օրոք Ասողիկը հիշատակում է միայն

---

[173] «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց» (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան), Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան, 1910, էջ 286:

[174] Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 91:

[175] Տե՛ս **Յակոբեան Ա.**, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2020, էջ 237:

Կարսի թագավորության ստեղծման մասին, ուստի ամենահավանականը Փառիսոսի թագավորության ստեղծման թվագրումն է 978-982 թթ. միջակայքում: Ժամանակագրական նման սահմանները հնարավորություն են տալիս պարզաբանելու Փառիսոսի թագավորության հանդես գալու ժամանակն ու հանգամանքները: Առավել ևս, որ Մովսես Դասխուրանցու հետագա տեղեկությունների լույսով կարելի է կատարել բովանդակային ու ժամանակագրական էական հստակեցումներ:

Մովսես Դասխուրանցին, խոսելով այն մասին, որ Սենեքերիմը հռչակվել է թագավոր, այնուհետև հավելում է, որ «զվաղնջուց խափանեալ թագաւորութիւնն տէրն ամենակալ ի ձեռն սորա (իմա՛ Սենեքերիմի – Ա. Ե.) նորոգեաց, զոր թագաւորն Պարսից շքով եւ մեծամեծ զարդուք զարդարեաց զնա. տայ նմա եւ զթագ հաւր իւրոյ եւ զնորին երիվարն: Ի նոյն ամի եւ որ Յունացն էր մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանազան եւ ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ եւ ի գովեստ աստուածայաջող առնն այնորիկ եւ ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զաւծումն թագաւորական ի փառս Քրիստոսի»[176]: Պարսից թագավորի և հունաց Դավիթ մագիստրոսի հիշատակությունը էապես նպաստում է խնդրի լուծմանը: Ա. Հակոբյանը Ն. Ադոնցի օրինակով հավանական է համարում, որ Սենեքերիմին թագ ուղարկած «պարսից թագավորի» ներքո պետք է հասկանալ Պարսկաստանի հզորացած տիրակալներին, որոնք ազդեցիկ դիրքի հասան խալիֆայությունում՝ տիրելով Բաղդադին[177]: Նրանցից էր Ասողիկի կողմից գովասանքի արժանացած Իբն Խոսրովը, որը «Բաղդադի ամիրան» էր[178] և «թագ եղեալ՝ թագաւոր թագաւորաց կոչեցաւ»[179], այսինքն՝ ըստ Ն. Ադոնցի՝ խալիֆա հռչակվեց ու իշխեց 977-982 թթ.[180]: Իբն Խոսրովը նույն ինքը՝

---

[176] **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 420:

[177] Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2006, էջ 519, **Յակոբեան Ա.**, նշվ աշխ., էջ 238:

[178] Տե՛ս **Ասողիկ**, էջ 764:

[179] Նույն տեղում, էջ 765:

[180] Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, էջ 518-519:

Դայլամից սերող Բույյան կամ Բուվայհյան տոհմի ներկայացուցիչ Փանահ Խոսրովն էր[181], որը կոչվել էր Ադուդ ալ-Դաուլա [«արքայատոհմի (իմա՛ Աբբասյանների – Ա. Ե.) սյուն»]: Նա հռչակվել էր որպես թագավորների թագավոր կամ շահնշահ և հիմնելով Պարսից ծոցից մինչև Միջերկրական և Կասպից ծովերը տարածվող սեփական տերությունը՝ Բաղդադում իշխել 978-983 թթ.[182]: Ըստ Ասողիկի՝ Իբն Խոսրովը «մեծարեալ պատուէր զքրիստոնեայսն»[183], ինչը հաստատում է Ն. Ադոնցի տեսակետը:

Ն. Ադոնցը կարծում էր, որ «հունաց մագիստրոս Դավիթը» Տայքի հայտնի կուրապաղատն էր, ըստ որում՝ Մովսես Դասխուրանցու հիշատակած «հունաց մագիստրոսը» չի նշանակում հույն մագիստրոս, այլ հույների կողմից մագիստրոսի տիտղոս ստացած անձ[184]: Թեև փորձ է կատարվել մագիստրոս տիտղոսի հիշատակությունից բխեցնել, թե Փառիսոսի թագավորության հռչակումը տեղի է ունեցել Տայքի տիրակալ Դավթի՝ մագիստրոս եղած ժամանակ (973-977 թթ. միջակայքում)[185], սակայն դա հակասում է Ասողիկի տեղեկություններին, ըստ որոնց՝ Աշոտ Գ Ողորմածի օրոք՝ մինչև 978 թվականը, թագավոր է հռչակվել միայն Մուշեղը Կարսում: Ավելին՝ մեծ է հավանականությունը, որ Դավիթը կուրապաղատ է դարձել 990 թ.[186], ինչի մասին տեղե-

---

[181] «The Cambridge History of Iran» in eight volumes, Volume 4: «The Period from the Arab Invasion to the Seljuqs», edited by R.N. Frye, Cambridge, The University Press, 1975, p. 274.

[182] Նույն տեղում, էջ 272: Ադուդ ալ-Դաուլայի կողմից Համդանյանների տիրույթների գրավման մասին տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 199-202:

[183] **Ասողիկ**, էջ 765:

[184] Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, էջ 519:

[185] Տե՛ս նույն տեղում, էջ 520, **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 237-238:

[186] Տե՛ս **Toumanoff C.**, The Bagratids of Iberia from the Eighth to the Eleventh Century, «Le Museon», 1961, Volume 74/1–2, p. 39, **Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византия (IX-XI вв.), М., изд. «Наука», 1988, էջ 139, **Степаненко В.**, К датировке получения сана куропалата Давидом II, Багратидом Тао, «Труды Тбилисского государственного университета», 1982, вып. 227, с. 77:

կացնում է Յահիա Անտիոքցին[187]: Վերջերս նաև շրջանառության մեջ է դրվել Դավթի՝ կուրապաղատ դառնալը 983 թ. թվագրելու վարկածը[188]: Ուստի առավել հավանական է, որ Սենեքերիմի թագավոր հռչակվելը պետք է տեղի ունեցած լիներ Սմբատ Բ Տիեզերակալի գահակալության առաջին տարիներին:

Փաստորեն, Փառիսոսում Սենեքերիմը թագավոր է հռչակվել դարաշրջանի խոշոր տիրակալներից Աղուդ ալ-Դաուլայի (Իբն Խոսրով) և Դավիթ կուրապաղատի աջակցությամբ: Դատելով այն իրողությունից, որ Սյունիքում Սմբատ իշխանի թագադրությունը, ինչպես կտեսնենք, տեղի է ունեցել 983 թ.՝ ի թիվս այլոց, նաև Աղվանից տերերի աջակցությամբ[189], որոնք ոչ այլ ոք էին, եթե ոչ Սենեքերիմն ու Գրիգորը, ապա պետք է համոզված նշել, որ Փառիսոսում թագավորության հռչակումը նախորդել է Սմբատ Սյունու թագադրությանը, և դատելով Ա. Հակոբյանի վերոհիշյալ ճշգրտումից՝ այն տեղի է ունեցել հենց 982 թ., երբ Կարսի թագավոր Մուշեղի հետ հակամարտության ընթացքում նախ Դավիթ կուրապաղատի, իսկ այնուհետև նաև Աբու ալ-Հայջա Սալարյանի արշավանքները Շիրակ Սմբատ Բ թագավորին դրել էին ծանր դրության մեջ՝ հնարավորություն ստեղծելով երկրում նոր կենտրոնախույս ձգտումների ի հայտ գալու համար: Ըստ որում՝ Աղուդ ալ-Դաուլայի և Դավիթ մագիստրոսի կողմից Սենեքերիմի՝ թագեր ստանալը, ըստ Մովսես Դասխուրանցու, տեղի է ունեցել «ի նոյն ամի»՝ միևնույն 982 թ.: Փաստորեն, Դավիթ կուրապաղատը, բացի Կարսի թագավոր Մուշեղին օգնելու նպատակով Շիրակ ներխուժելուց, աջակցել է նաև

---

[187] Տե՛ս «Император Василий Болгаробойца»: извлечения из Летописи Яхъи Антиохийского, издал, перевел и объяснил В. Р. Розен, Санктпетербург, типография Императорской Академии наук, 1883, с. 27:

[188] Տե՛ս **Косоуров Д.**, К вопросу о датировке получения титула куропалата правителем Тао-Кларджети Давидом III, «Античная древность и средние века», 2018, вып. 46, с. 90-101:

[189] «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց» (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան), Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան, 1910, էջ 299-300:

Փառիսոսի տերերի կենտրոնախույս ձգտումներին, իսկ Սմբատ Բ-ն, որը չէր կարողացել պատշաճ դիմադրություն կազմակերպել նրա ռազմական միջամտության դեմ, անհաջողության էր մատնվել կամ պարզապես չէր դիմադրել Սենեքերիմ իշխանաց իշխանի՝ թագավոր հռչակվելուն:

Ըստ Բ. Ուլուբաբյանի՝ Փառիսոսի թագավորությունը ընդգրկում էր նախկինում Գարդմանի իշխան Սահակ Սևադայի տիրույթները (ըստ Մովսես Դասխուրանցու՝ Սահակ Սևադան «առհասարակ տիրեաց Գարդմանայ եւ Քաւսայ եւ Փառնայ (Քուստ-ի-Փառնես – Ա. Ե.) գաւառաց, այլ եւ աւազակապետաց Ձորոյգետոյն բովանդակ եղեւ իշխան»[190]), այսինքն՝ Գարդման, Քուստ-ի-Փառնես գավառները և մինչև Աղստև գետի աջափնյա ջրբաժանը տարածվող շրջանները[191]:

---

[190] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 419:

[191] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 91: Տե՛ս նաև **Երեմյան Ս.**, «Բագրատունիների թագավորությունը IX դ. վերջին և XI դ. առաջին կեսին» (քարտեզ), Եր., 1975, **Հարությունյան Բ.**, «Հայաստանը ավատատիրական հարաբերությունների խորացման, տնտեսական և մշակութային վերելքի շրջանում (908-1020 թթ.)», քարտեզ, «Հայաստանի պատմության ատլաս» (Ա մաս), Եր., «Մակմիլան Արմենիա ՀՁ ՓԲԸ», 2005, էջ 64-65:

## 2.3. Սյունիքի թագավորության ստեղծումը

Սմբատ Բ-ի գահակալության շրջանում հիմնադրվեց նաև Սյունիքի թագավորությունը: Վերջինիս ստեղծման վերաբերյալ արտահայտվել են բազմաթիվ ու բազմապիսի տեսակետներ, որոնցից որևէ մեկը վերջնական համարվել չի կարող: Պետք է նշել, որ այդ իրադարձության վերաբերյալ Ստեփանոս Օրբելյանից բացի՝ այլ պատմիչներ Սյունիքի թագավորության ստեղծման մասին չեն հիշատակում:

Ստեփանոս Օրբելյանը հաղորդում է, որ Սյունյաց իշխան Սմբատ Սահակյանը սկզբում «տիրէր համագունդ աշխարհիս Սիսական ... գահերէց իշխանութեամբ»[192], իսկ այնուհետև՝ պատմում, որ Սյունիները «երբէք ոչ ըմբոստացան ի հայրենի տէրութեանցն: Իսկ յետ յոլով ժամանակաց մինչ դուռն բացին նախ՝ Արծրունիքն, և թագ կապեցին ընդդէմ Սմբատայ՝ Հայոց թագաւորի, թագ կապեաց և Ատր-Ներսէհ՝ Վրաց բդեաշխն. թագ կապեաց և Աղվանին Համամ: Մեծարէ Աֆշինն (իմա՛ Յուսուփն – Ա. Ե.) զՎասակ Սիւնի թագ կապեալ. և նա ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել»[193]: Սյունյաց պատմիչը, փաստորեն, փորձում է արդարացնել Սյունյաց գահերեց Սմբատի թագավոր հռչակվելը՝ ներկայացնելով այն իրողությունը, որ Սյունյաց իշխանները երբեք թագավոր հռչակվելու և հայոց թագավորությունը տրոհելու նպատակ չեն ունեցել նույնիսկ այն ժամանակ, երբ թագավոր հռչակվելու հնարավորություն են ունեցել: Խնդիրն այն է, որ Սյունյաց գահերեց Սմբատը թագավոր էր հռչակվել ոչ թե Սմբատ Բ-ի, այլ օտար տիրակալների կողմից, ուստի Սյունյաց պատմիչը արդարացումներ ու հիմնավորումներ է փնտրում: Այնուհետև նա հավելում է, թե «... ի նուազել տէրութեանն Բագրատունեաց, և ի զօրանալ ձեռինն իսմայէլականի՝ հատեալ, բարժանեալ եղեն ամենայն գահք գլխավոր նախարարացն Վասպուրականին և Վրացին և Աղվանին և Ձորոյգետացիքն որ Կիւրիկեանքն կոչին, նաև Կարուցն

[192] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 299:

[193] Նույն տեղում:

և Վանանդայն որ Բասեանք կոչի»[194]: Այստեղ պատմիչը փորձում է այնպես ներկայացնել իրավիճակը, որ հայոց գերագահ տոհմի՝ Բագրատունիների թուլացման ու թշնամիների զորացման պայմաններում, երբ երկրի բոլոր գլխավոր նախարարները «բաժանվեցին» Անիի տիրակալներից, Սյունիքի տերերին այլ բան չմնաց, քան հետևել նրանց օրինակին: Եվ այդպիսով հիմք նախապատրաստելով՝ պատմիչը գրում է, որ «Ապա Սմբատ՝ որդի Սահակայ՝ որդւոյ Աշոտոյ ...յարեալ ի մեծ Աթաբակն որ էր ի Թավրէժ յԱտրպատական աշխարհի, նաև յՌնայ ամիրայն, որ իշխէր և դրանն Դարբանդու, նս և Աղվանից տէրանցն, որք վասն առաւել սիրոյ ծանուցանէն մեծի սուլտանին Խորասանու, և հրաման առեալ ի նմանէ թագ կապեն գեղեցկահասակ և վայելչադիտակ առնն հայկազնոյ Սմբատայ՝ Սիւնեաց տեառն»[195]: Այս տեղեկությունը խիստ կարևոր է, քանի որ նախ պարզվում է, որ Սմբատ իշխանը իր թագադրությունը կազմակերպելու համար կապ է հաստատել ոչ թե մեկ, այլ երեք մուսուլման տիրակալների հետ: Ըստ Վ. Մինորսկու՝ Ստեփանոս Օրբելյանի հիշատակությունը լի է ժամանակավրեպ տվյալներով, քանի որ X դ. վերջին աթաբեկներ ու սուլթաններ չկային: Ըստ նրա՝ տեղեկության մեջ հիշատակված անձանցից «Թավրիզի մեծ աթաբեկը» նույնանում է ինչ-որ Ռավվադյան իշխողի, իսկ «Աղվանից տերերը»՝ Գանձակի Շադդադյան տիրակալներին, ավելի որոշակի՝ Ֆադլ Ա ամիրային[196], որն իշխել է 984 թվականից[197]:

Ակնհայտ է, որ Սմբատ Սյունու հիմնական «հովանավորը» Թավրիզի «աթաբակն» էր, որին նա «հարել» էր, և որը ոչ այլ ոք էր, եթե ոչ Ատրպատականի ամիրաներից մեկը, որին դեռ կանդրադառնանք: Ն. Ադոնցը խորաթափանցորեն ենթադրում էր, որ «Սենեքերիմ թագավոր հռչակվեց, ինչպես թվում է, միևնույն ժամանակ և միևնույն պայմաններում, ինչ որ ... Սմբատ

---

194 **Ստեփանոս Օրբելյան,** էջ 299:

195 Նույն տեղում, էջ 299-300:

196 Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 70:

197 Նույն տեղում, էջ 16:

Սյունյաց իշխանը»[198], այսինքն՝ այստեղ ևս իր դերը խաղացել էր Իբն Խոսրով Աղուդ ալ-Դաուլան, որը, փաստորեն, Ստեփանոս Օրբելյանի կողմից կոչվում է «Խորասանի սուլթան»: Կարևոր է նշել, որ ոմն «Խորասանի ամիրայի» հիշատակում է նաև Ասողիկը՝ պատմելով, որ 998 թ. նա օգնում էր Աբու ալ-Հայջա Ռավվադյանի որդի Մամլանին Դավիթ կուրապաղատի դեմ պատերազմում[199]: Այդ ժամանակ Խորասանի Սամանյանների տերությունը (Սամանյանների ամիրայություն) գտնվում էր անկման փուլում և իր անվտանգությունը ապահովում էր Բույյանների կամ Բուվայհյանների օգնությամբ[200], ուստի առավել հավանական է, որ խոսքը ոչ թե բուն Խորասանի, այլ Բույյանների տերության տիրակալի մասին է (մինչև 998 թ. դեկտեմբերը իշխում էր Բույյան Սամսամ ալ-Դաուլան[201]): «Աղվանից տերեր» արտահայտությունը վերաբերում է «Խորասանի սուլթանի» հետ մտերիմ կապերի մեջ գտնվող Հայոց արևելից կողմերի տերերից Փառիսոսի Սենեքերիմ թագավորին և նրա եղբայր Գրիգորին[202]: Ուստի պետք է բացառել Վ. Մինորսկու ենթադրությունը, թե «Աղվանից տերերը» Գանձակի Շադդադյաններն են, քանի որ «ըՌնայ (Առանայ – Ա. Ե.) ամիրան» էլ, որը տիրում էր Դարբանդի դռանը, ամենայն հավանականությամբ Շիրվանի տիրակալն էր[203]: Եթե ճիշտ է մեր եզրակացությունը, ապա Սյունյաց Սմբատ իշխանը կապ է հաստատել մոտակա (Ատրպատականի և Շիրվանի ամիրաներ) և հեռավոր (Բույյան տիրակալ) մուսուլման տիրակալների հետ՝ իր գահակալությունը նրանց հետ համաձայնեցնելու համար:

---

198 Տե՛ս **Աղոնց Ն.**, Երկեր, հ. Ա, էջ 520:

199 Տե՛ս **Ասողիկ**, էջ 818:

200 Տե՛ս «The Cambridge History of Iran», Volume 4, p. 155-160:

201 Տե՛ս նույն տեղում, էջ 291-293:

202 Տե՛ս **Սահակյան Տ.**, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, «Պատմաբանասիրական հանդես», 1966, № 3, էջ 221:

203 Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 163:

Այստեղ անհրաժեշտ է որոշակի պարզաբանումներ ներկայացնել Ստեփանոս Օրբելյանի կողմից Բաղդադի տիրակալին «Խորասանի սուլթան» և Ատրպատականի տիրակալին «Թավրեժի աթաբակ» անվանելու իրողության վերաբերյալ: Խնդիրն այն է, որ XIII դ. երկրորդ կեսին և XIV դ. սկզբին ապրած ու ստեղծագործած Ստեփանոս Օրբելյանի օրոք Խորասանի մոնղոլ տիրակալը հույժ կարևոր անձ էր[204], ուստի հետահայաց տրամաբանությամբ պատմիչը կարող էր նրան շփոթել X դ. երկրորդ կեսին անկում ապրած Արաբական խալիֆայության միջինարևելյան տարածքներին Բաղդադ քաղաքով տեր դարձած դայլամցիների Բույյան կամ Բուվայհյան տոհմի ներկայացուցիչ Փանահ Խոսրովի (Ադուդ ալ-Դաուլա) հետ: Նրա վրա կարող էր ազդել նաև այն իրողությունը, որ Իրանի մոնղոլ տիրակալներից (իլխաններից) Օլջեյթուն (1304-1316 թթ.), որը գրեթե ժամանակակից էր նրան, կրում էր «սուլթան» տիտղոսը[205]: Ինչ վերաբերում է «աթաբակ» տիտղոսին, ապա պատմիչի մոտ դեռևս վառ էր Ատրպատականի Էլտկուզյան աթաբեկների (1136-1225 թթ.)[206] մասին հիշողությունը, որի հետևանքով Թավրիզի ամիրային նա հետին կարգով «աթաբակ» է կոչում: Այստեղ կարևոր է նշելը, որ ավելի ուշ շրջանում՝ XII դ. սկզբին, գոյությունը պահպանող Ռավվադյանները Մարաղայի աթաբեկներ էին[207], ուստի Ստեփանոս Օրբելյանը կարող էր պարզապես

[204] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 425, 470:

[205] Տե՛ս **Sykes P. M.**, Historical Notes on Khurasan, The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, Volume 42, Issue 4, October, 1910, p. 1132:

[206] Տե՛ս **Luther K. A.**, Atābakān-E Āḏarbāyjān, «Encyclopedia Iranica», https://iranicaonline.org/articles/atabakan-e-adarbayjan (մուտք՝ 26.01.2021 թ.): Տե՛ս նաև «The Cambridge History of Iran» in eight volumes, volume 5: «The Seljuq and Mongol Periods», edited by J.A. Boyle, Cambridge, The University Press, 1968, pp. 129, 325, 577:

[207] Տե՛ս **Bosworth C.E.**, The New Islamic Dynasties: A Chronological and Genealogical manual, Edinburgh University Press, 1996, § 72:

Ատրպատականի տեր Ռավվադյաններին վերագրել նրանց հեռավոր սերունդների կրած «աթաբեկ» տիտղոսը:

Փաստորեն, Սմբատ Սյունին դիվանագիտական լայն գործունեություն է ծավալել՝ թագավոր հռչակվելու և այդ իրողությունը օրինականացնելու համար: Այդքանից հետո էլ Ստեփանոս Օրբելյանը դարձյալ փորձում է պատճառաբանել Սմբատ իշխանի արարքը՝ այս անգամ արդեն Բագրատունյաց թագավորությունից Սյունիքի կտրված լինելը ներկայացնելով. «...զի այնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրական սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ»[208]: Պարզ է, որ Բագրատունյաց կենտրոնական իշխանությունից տարանջատվելը և մուսուլման տիրակալների կողմից թագավոր հռչակվելը հայկական իրականության մեջ դիտվում էին հենց որպես «քրեական մեղք», որպես հայոց թագավորի հետ ուխտի քակտում[209], ուստի Սյունյաց պատմիչն ամեն գնով փորձում էր արդարացնել Սմբատ Սյունուն: Ի վերջո, պատմիչը նաև Բագրատունիների և Սյունիների ծագումնաբանությունն է մեջ բերում՝ Սմբատի արարքը արդարացնելու համար: Ըստ նրա, եթե հնում գերեվարված և Հայաստան բերված Բագրատունիներն արժանի են թագ կրելու, ապա նրանցից առավել արժանի էին Հայկի ժամանակներից սերող բնիկ Սյունիները[210]:

Սյունյաց պատմիչի տեղեկությունները նախկինում, ինչպես հարկն է, քննության չեն առնվել: Այդ տեղեկություններից առնվազն ժամանակագրական առումով հնարավոր է կատարել էական հետևություններ: Մասնավորապես, Սմբատ Սյունին գահ է բարձրացել միայն այն բանից հետո, երբ հռչակվել են Կարսի (975 թ.) և Տաշիրքի (978 թ.) թագավորությունները (ըստ

---

[208] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 300:

[209]«Քրէական» կնշանակի «ծանրամեղ, աստուածընդդէմ, արքայընդդէմ»: Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. երկրորդ, Հ-Ֆ, էջ 1015:

[210] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 300:

պատմիչի՝ նախքան Սյունյաց թագավորության հռչակումը «հատեալ, բարժանեալ եղեն ամենայն զաիք գլխավոր նախարացն Վասպուրականին և Վրացին և Աղվանին և Զորոյգետացիքն որ Կիւրիկեանքն կոչին, նաև Կարուցն և Վանանդայն որ Բասեանք կոչի»): Այս փաստով հերքվում են մինչև 978 թվականը Սյունյաց թագավորության հռչակված լինելու տեսակետները[211]:

Ինչ վերաբերում է Աշոտ Գ Ողորմածի գլխավորությամբ 974 թ. բյուզանդական բանակին ընդառաջ դուրս եկած զորքի կազմում Մատթեոս Ուռհայեցու կողմից «Կապանի թագավոր Փիլիպպեի»[212] հիշատակությանը, ապա պետք է հիշել, որ այդտեղ շատ են ժամանակավրեպ ու սխալ տվյալները, մասնավորապես, մասնակից զորագնդերի հրամանատարների մասին, և Կապանի թագավորի մեջբերումը, ինչպես կտեսնենք, դրանց շարքից է:

---

[211] Մ. Օրմանյանը Սմբատի թագադրվելը համարում է Կարսում Մուշեղի թագավոր հռչակմանը համաժամանակյա դեպք, որը տեղի է ունեցել Աշոտ Գ Ողորմածի՝ 961 թ. Անի տեղափոխվելուց հետո (տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 765, սյուն 1109) : Թ. Հակոբյանը Սյունիքի թագավորության հիմնադրումը թվագրում է 963 թվականով (տե՛ս **Հակոբյան Թ.**, Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Եր., «Միտք» հրատ., 1966, էջ 62), Ռ. Մաթևոսյանը՝ 969 կամ 970 թվականով (տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 129-130, ծանոթ. 38), Հ. Հարությունյանը և Տ. Սահակյանը՝ 970 թվականով (տե՛ս **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 97-98, **Սահակյան Տ.**, նշվ. հոդվ., էջ 221), Գ. Գրիգորյանը՝ մի դեպքում 970 թվականով [**Գրիգորյան Գ.**, Սյունիքի թագավորությունը (X-XII դդ.), «Պատմաբանասիրական հանդես», 2006, № 2, էջ 135], իսկ մեկ այլ դեպքում՝ 973 թվականով (տե՛ս **Գրիգորյան Գ.**, Ստեփանոս Օրբելյան, «Պատմաբանասիրական հանդես», 1976, № 4, էջ 160), Ս. Պողոսյանը՝ 973 թվականով (տե՛ս **Պողոսյան Ս.**, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Եր., 1965, էջ 54), Հ. Ութմազյանը՝ 970-ական թվականներով (տե՛ս **Ութմազյան Հ.**, Սյունիքը IX-X դարերում, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1958, էջ 134):

[212] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 17:

Սմբատ Սյունու գահակալության սկզբնավորումը թվագրելու տեսանկյունից կարևոր է հստակեցնել, թե հատկապես Ատրպատականի որ ամիրային է նա «հարել» և նրա հովանավորությամբ թագադրվելու նկրտումներ դրսևորել: Դա կարող էր լինել կա՛մ Սալարյան և կա՛մ Ռավվադյան ամիրաներից մեկը, որով Սմբատ Սյունու գահակալման սկիզբն էլ պետք է ընկնի կա՛մ 970-ական թթ. վերջից մինչև 982 թ. ընկած ժամանակահատվածում՝ մինչև Սալարյան Աբու ալ-Հայջայի արշավանքը Շիրակ, և կա՛մ 983-984 թթ., երբ Ատրպատականի գալիք տիրակալները՝ Ռավվադյանները, տիրում էին միայն Թավրիզին: Այս առումով նշելի է, որ Բ. Հարությունյանը Սմբատ Սյունու թագադրությունը կապել է հենց Ռավվադյանների հետ, ավելի որոշակի՝ վերջիններիս 987 թ. արշավանքի հետ: Նա համարում է, որ 970-ական թթ. սկզբին Սմբատի թագավոր հռչակվելու վերաբերյալ ուսումնասիրողների տեսակետի պատճառը Աշոտ Գ Ողորմածի զորքի կազմում 974 թ. դրությամբ Կապանի Փիլիպե թագավորի հիշատակությունն է, որին նրանք նույնացրել են Սմբատ Սյունուն, մինչդեռ իրականում Փիլիպեն Արցախի արքայիկներից մեկն էր[213]: Բ. Հարությունյանը վստահ է, որ 974 թ. դրությամբ Սյունյաց թագավորությունը դեռ չէր հիմնադրվել: Սրամիտ կերպով պարզելով, որ Սյունիքում թագավոր հռչակված Սմբատի հայր Վասակը կենդանի էր դեռևս 970-ական թթ.[214], հետազոտողը կարծիք է հայտնում, որ նա վախճանվել է 976-980 թթ., և նրա որդի Սմբատը հենց այդ ժամանակ է ժառանգել գահերեցությունը Սյունիքում[215]: 980-ական թթ. սկզբներին, երբ մուսուլմանական ամիրայությունները ներխուժում և ավերում էին Հայաստանի տարբեր երկրամասերը՝ հասնելով Շիրակ գավառը, Սմբատ Բ-ն թուլացել էր, որից էլ օգտվել է

---

[213] Տե՛ս **Հարությունյան Բ.**, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ145-148:

[214] Տե՛ս նույն տեղում, էջ 149-150:

[215] Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 150:

Սյունյաց Սմբատ գահերեցը՝ իրեն 980-ական թթ. հռչակելով թագավոր[216]:

Բ. Հարությունյանի կարծիքով Ստեփանոս Օրբելյանը, երբ Բագրատունյաց տիրույթների սահմանագիծը հասցնում է մինչև Գեղամա լեռները («Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ»), կեղծում է, քանի որ Ասողիկից հայտնի է, որ Գեղամա երկիրն այդ ժամանակ պատկանում էր Բագրատունիներին[217], որոնցից կտրված լինելու համար [«և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ (իմա՛ Բագրատունիներից – Ա. Ե.)»] Սյունյաց թագավորությունից պետք է դուրս գտնվեր Վայոց ձոր գավառը[218], որն իրականում մաս էր Սյունյաց թագավորության, քանի որ նույն Ստեփանոս Օրբելյանի հիշատակության համաձայն՝ Սմբատ Սյունին տիրում էր «համագունդ աշխարհիս Սիսական», այսինքն՝ ողջ Սյունիքին[219]: Ուստի Բ. Հարությունյանը եզրակացնում է. «Քանի որ Սյունիքը անմիջականորեն սահմանակից էր Բագրատունիների տիրույթներին, ապա Սմբատ Սահակյանը իրեն թագավոր կարող էր հռչակել միայն այն ժամանակ, երբ կենտրոնական իշխանությունը կապրեր ուժեղ ցնցումներ»[220]: Այնուհետև Բ. Հարությունյանը Սյունյաց պատմիչի «Բագրատունիքն իշխէին ... մինչ ի Ձորոյ գետն» տեղեկությունից ենթադրում է, որ Տաշիրքի (Լոռու) թագավորությունը ստեղծվել էր Սյունիքի թագավորության հիմնադրումից առաջ: Այդ իրադարձությունը նա, հետևելով Լեոյին, դնում է 982 թ.[221], երբ, ըստ նրա, Աբու ալ-Հայջայի արշավանքի ժամանակ և Սմբատ Բ-ի ռազմական անհաջողության պայմաններում Տաշիր-Ձորագետը դարձել էր առանձին կիսանկախ իշխանություն (իմա՛ թագավորություն): Բ. Հարությունյանն անհավանական է համարում, որ հենց նույն թվականին էլ Սմբատը Սյու-

---

[216] Տե՛ս **Հարությունյան Բ.**, էջ 151:

[217] Տե՛ս **Ասողիկ**, էջ 811:

[218] Տե՛ս **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 61:

[219] Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 152:

[220] Նույն տեղում:

[221] Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 591:

նիքը հռչակած լիներ անկախ թագավորություն: Ի վերջո, նա Սյունյաց թագավորության հռչակումը դնում է 987 թ.[222]՝ այն կապելով Ռավվադյանների արշավանքի, Դվինի գրավման ու Սմբատ Բ-ից հարկ պահանջելու և ստանալու իրողությունների հետ[223]: Հետազոտողը կարծում է, որ հենց այդ ժամանակ Ռավվադյան ամիրան հայոց թագավորությունը թուլացնելու համար ընդառաջել է Սմբատ իշխանի ձգտումներին ու օգնել հռչակվելու թագավոր, իսկ Սմբատ Բ-ն, որ հարկատու էր դարձել Ռավվադյաններին, անզոր է եղել հակազդելու դրան[224]: Սակայն շուտով Ռավվադյանները թուլացան, որից օգտվելով՝ Գողթնի ամիրան գրավեց Դվինն ու դաշինք կնքեց Սմբատ Բ-ի հետ: Սմբատ Սյունին, որի թագավորությունը հայտնվել էր Սմբատ Բ-ի և Գողթնի ամիրայի տիրույթների միջև, ստիպված ընդունեց Բագրատունիների շահնշահական իրավունքը Սյունիքի նկատմամբ, որի պատճառով արդեն 988 թ. Սմբատ Բ-ի բանակի կազմում Սյունյաց զորամիավորումները մասնակցեցին աբխազաց թագավորի դեմ արշավանքին[225]:

Ականավոր հայագետի տեսակետը պարունակում է խիստ էական ճշգրտումներ, սակայն ակնհայտ է, որ Տաշիրքի թագավորության հռչակումը տեղադրելով 982 թ. և համարելով, որ այն ստեղծվել է Սյունյաց թագավորության հիմնադրումից առաջ, նա բացառել է վերջինիս հանդես գալը այդ ժամանակ կամ դրանից առաջ թվագրելու հնարավորությունը, թեև նկատելի է, որ

---

[222] Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 152:

[223] Տե՛ս **Ասողիկ**, էջ 767-768:

[224] Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 152-153: Ռ. Մաթևոսյանը փորձում է պնդել, թե «Ռավվադյան ամիրայի օգնությունը Սյունյաց իշխանին լոկ հեղինակի (իմա՝ Բ. Հարությունյանի – Ա. Ե.) ենթադրությունն է, որի օգտին աղբյուրներում ոչ մի փաստ չկա» (տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 130, ծանոթ. 38): Մինչդեռ իրականում այդ փաստը կա, քանի որ Ստեփանոս Օրբելյանի հիշատակած «մեծ Աթաբակն որ էր ի Թավրէժ յԱտրպատական աշխարհի», ինչպես կտեսնենք, ոչ այլ մեկն էր, եթե ոչ հենց Թավրիզին տիրող Ռավվադյան ամիրան:

[225] Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 153:

նա որոշակիորեն կասկածներ ուներ հենց 982 թ. Սյունիքում թագավորության հռչակման վերաբերյալ[226]: Ավելին՝ Տաշիրքի թագավորության ստեղծումը նա համարել է Սմբատ Բ-ի կրտսեր եղբոր կողմից կենտրոնախույս քայլ, մինչդեռ իրականում նման բան չի եղել, և Գուրգենը թագավոր է հռչակվել Սմբատ Բ-ի կողմից՝ ի տարբերություն Սյունյաց իշխանի, որն իրոք թագավոր է հռչակվել՝ օգտվելով Բագրատունիների ծանր վիճակից: Իրականում Գուրգենը Տաշիրքում թագավոր է հռչակվել մինչև 980 թվականը, ավելի որոշակի՝ 978 թ., երբ հունվարի 3-ին վախճանված Աշոտ Գ Ողորմածից հետո անմիջապես գահ բարձրացած Սմբատ Բ-ն եղբայրների հետ բաժանեց հայրենի ժառանգությունը՝ արդյունքում Գուրգենին հռչակելով թագավոր Տաշիրքում[227]: Այս ճշգրտումը հնարավորություն է տալիս Սյունիքի թագավորության ստեղծման հնարավոր ժամանակը ընդարձակելու 980 թվականից, երբ Սյունիքում իշխեց Սմբատը մինչև 987 թվականը՝ Ռավվադյանների զորքի ներխուժումը: Խիստ ընդունելի համարելով Բ. Հարությունյանի այն տեսակետը, թե Սմբատ Սյունին օգտվել է Բագրատունիների ծանր վիճակից, երբ կենտրոնական իշխանությունը ցնցումներ էր ապրում, ցանկանում ենք նշել, որ նման ցնցում Բագրատունյաց թագավորությունը ապրեց հենց 982 թ., երբ Սալարյան Աբու ալ-Հայջայի զորքը ներխուժեց Շիրակ, իսկ հայոց թագավորն ի զորու չեղավ դիմադրություն կազմակերպելու: Մինչդեռ Ռավվադյան Աբու ալ-Հայջայի պարագայում վերջինիս արշավանքից տուժեց Գողթնի ամիրայությունը, իսկ Սմբատ Բ-ն կարողացավ հարկեր վճարելով ազատվել ներխուժումից, ինչն «ուժեղ ցնցում» չես համարի: Ավելին՝ դատելով Ռավվադյան ամիրայի արշավանքի՝ Ասողիկի նկարագրությունից, արշավանքի թիրա-

---

226 Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գիրք երկրորդ, էջ 139:

227 Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Սմբատ Բ Տիեզերակալի դարաշրջանը: Մաս Ա. Բագրատունյաց թագավորության ներքին և արտաքին դրությունը Սմբատ Բ-ի գահակալության առաջին շրջանում (970-ական թթ. վերջ-980-ական թթ. առաջին կես), «Վէմ» համահայկական հանդես, 2020, № 4, էջ 53-55:

խը Բագրատունյաց թագավորությունը չէր, այլ հենց Գողթնի ամիրայությունը: Ըստ պատմիչի՝ «Իսկ ի ՆԼԶ թուականին (մարտ, 987 թ.-մարտ, 988 թ. – Ա. Ե.) Աբլհաճ որդին Ռովդայ, ամիրայ Ատրպատականի, ՃՌ (100000 – Ա. Ե.) պարսիկ զաւրու գայ ի վերայ Աբուտլփոյ, հանէ ի նմանէ զքաղաքս Սալարին. յաւարի առեալ զաշխարհն նորա զԳողթն՝ գայ հասանէ ի Դուին քաղաք եւ առնու զնա, խնդրէ հարկս զանցեալ ամացն ի Հայոց. զոր ընդդէմ յուղարկեալ զհարկսն թագաւորն Սմբատ մեծամեծ ընչիւք՝ դարձոյց»[228]: «Անցյալ տարիների հարկեր» արտահայտությունը հուշում է, որ Սմբատ Բ-ն Ռավվադյանների ամիրայությանը հարկատու էր դարձել դեռևս նրանց՝ Ատրպատականում հաստատվելու շրջանից՝ 983 թվականից[229]: Ուստի 987 թ. արշավանքը առանձնապես ցնցումներ ու ծանր իրավիճակ չառաջացրեց Բագրատունյաց Հայաստանում, ավելին՝ Ռավվադյան ամիրան այդ ժամանակ հայոց թագավորությունը թուլացնելու նպատակով Սյունիքում թագավորություն հռչակելու առանձնապես հատուկ դրդապատճառներ չուներ: Մյուս կողմից, դատելով Ստեփանոս Օրբելյանի այն տեղեկությունից, որ Սմբատ Սյունին թագավոր դառնալու նպատակով հարել էր Ատրպատականի ամիրային, կապ հաստատել Շիրվանի և Հայոց արևելից կողմերի տերերի ու վերջիններիս միջոցով՝ Միջին Արևելքում հզորության գագաթնակետին գտնվող Բույյան կամ Բուվայհյան տոհմի ներկայացուցիչ Ադուդ ալ-Դաուլայի հետ, կարելի է վստահաբար նշել, որ Սյունյաց թագավոր հռչակվելը Սմբատի կողմից լավ մշակված ու կազմակերպված դիվանագիտական գործողություն էր, որը չէր կարող կյանքի կոչվել առանձին վերցրած արշավանքի ընթացքում: Ըստ որում՝ այն, որ նա «հարել» էր Թավրիզի «աթաբակին», հուշում է, որ ինչ-որ մի փուլում նա միաբանվել է[230] մուսուլման տիրակալին: Սմբատ Սյունուն ժամանակակից, Թավրիզի տիրակալ, քրդական ծա-

---

[228] **Ասողիկ**, էջ 767-768:

[229] Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 164, 168:

[230] «Հարել» նշանակում է «միաբանվել»: Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. երկրորդ, Հ-Փ, էջ 346:

գում ունեցող[231] Ռավվադյանները[232] այդ քաղաքին ու Ատրպատականին տիրելու առաջին փորձը կատարել էին 956 թ.[233]: Բայց նրանց առաջնորդ Հուսայն իբն Մուհամմադը կարողացել էր ռազմակալել միայն Թավրիզը, որը 961 թ. դարձրել էր իր մայրաքաղաքը[234]: Դրանով իսկ Ռավվադյանները դարձել էին Սյունիքին գրեթե սահմանակից: Ատրպատականի մեծագույն մասին նրանց ներկայացուցիչ Աբու ալ-Հայջա Մուհամմադ իբն Հուսայնը կարողացավ տիրել միայն 983 թ.՝ երկրամասի տիրակալ Իբրահիմ Սալարյանի մահից հետո[235]: Փաստորեն, Սմբատ Սյունու ժամանակակից «Թավրիզի աթաբակը» կարող էր լինել Ռավվադյան ամիրաներից Աբու ալ-Հայջա Մուհամմադ իբն Հուսայնը, որը 983 թ. տիրել էր Ատրպատականի մեծ մասին՝ երկրամասի վերջնական նվաճումն ավարտելով 984 թ., ուստի «Թավրիզի աթաբակի» փոխարեն 987 թ. դրությամբ արդեն կոչվում էր «Ատրպատականի ամիրա»[236]: Պետք է եզրակացնել, որ Սմբատ Սյունին միաբանվել է դեռևս միայն Թավրիզին տիրող Ռավվադյան ամիրայի հետ՝ դաշնակցելով «օժանդակություն օժան-

---

[231] Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 262: Գիտական գրականության մեջ երբեմն նշվել է, որ Ռավվադյանները արաբական ծագում են ունեցել, բայց քանի որ X դ. Ատրպատականում աճել է քուրդ տարրի հզորությունը, նրանք սերտորեն համագործակցել են քրդերի հետ ու այդ պատճառով հիմնականում համարվել քրդեր: Տե՛ս «The Cambridge History of Iran», Volume 4, p. 236:

[232] Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 114:

[233] Տե՛ս նույն տեղում, էջ 167:

[234] Տե՛ս նույն տեղում, էջ 168: Տե՛ս նաև «The Cambridge History of Iran», Volume 4, p. 236: Այս Հուսայն իբն Մուհամմադ իբն ալ-Ռավվադիին հիշատակում է նաև Միսքավայհը հիջրայի 349 թվականին (960 թ.): Տե՛ս **Miskawayh**, Tajārib al-umam wa taʿāqib al-himam, ğ. 5, Beirut, 2003, ṣ. 327: Ի դեպ, Վ. Մինորսկին գրում է, թե Միսքավայհը հիշատակում է Մուհամմադ իբն Հուսայնին (տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 122), մինչդեռ իրականում նա խոսում է վերջինիս հոր՝ Հուսայն իբն Մուհամմադի մասին:

[235] Տե՛ս նույն տեղում, էջ 164, 168:

[236] Տե՛ս **Ասողիկ**, էջ 767:

դակության դիմաց» սկզբունքով, որի պատճառով Ստեփանոս Օրբելյանի օգտագործած աղբյուրում եղել է ոչ թե «Ատրպատականի ամիրա կամ աթաբեկ», այլ «Թավրիզի աթաբեկ» տարբերակը: Սյունիքի կապը Ռավվադյանների հետ կարող էր ամուր լինել նաև մեկ այլ պատճառով. ըստ մուսուլմանական աղբյուրի՝ Ռավվադյանները մինչ Թավրիզը գրավելը տիրում էին Հայաստանի որոշ շրջանների[237]: Թեև դժվար է հստակեցնել, թե Հայաստանի հատկապես որ շրջաններին էին տիրում Ռավվադյանները, սակայն, ըստ էության, դա հնարավոր էր, քանի որ, օրինակ, Գանձակում և Մանազկերտում նս քրդեր կային հաստատված[238]:

Քանի որ Ռավվադյան Աբու ալ-Հայջայի 987 թ. արշավանքի շրջանում Սմբատ Սյունու թագավոր հռչակվելն այնքան էլ հավանական չէ, ապա պետք է կարծել, որ Սմբատը թագավոր է հռչակվել ավելի վաղ: Պարզ է, որ խնդրի պարզաբանման համար հենքային նշանակություն ունի Ստեփանոս Օրբելյանի «Սմբատ՝ որդի Սահակայ՝ որդւոյ Աշոտոյ ... յարեալ ի մեծ Աթաբակն որ էր ի Թավրէժ յԱտրպատական աշխարհի» հիշատակությունը, քանի որ դա հուշում է, որ խնդրո առարկա իրադարձությունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Ռավվադյանները տիրում էին միայն Թավրիզին: Ի դեպ, Թավրիզը հետագայում էլ նրանց կարևոր կենտրոնն էր [239]: Ստեփանոս Օրբելյանի հիշատակությունն ամենայն հավանականությամբ հենց Ռավվադյաններին միաբանվելու մասին է, ըստ որում՝ այն ժամանակ, երբ նրանք մտորում էին ողջ Ատրպատականին տիրելու մասին և դաշնակցի կարիք ունեին: Այդպիսին դարձավ Սմբատ Սյունին: Վերջինիս ծրագրերը հաջողությամբ պսակվեցին, և նրան աջակցողները, ինչպես տեղեկացնում է Սյունյաց պատմիչը, «...վասն առաւել սիրոյ ծանուցանեն մեծի սուլտանին Խորասանու, և հրաման առեալ ի նմանէ թագ կապեն գեղեցկահասակ և

---

237 Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 167-168:

238 Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 192:

239 Տե՛ս **Ասողիկ**, էջ 818:

վայելչադիտակ առնն հայկազնոյ Սմբատայ՝ Սիւնեաց տեառն»: Այդ իրադարձության ամենահավանական թվականը, այսպիսով, 983-ն է, երբ Ռավվադյանները ձգտում էին տիրել բովանդակ Ատրպատականին, և այդ ճանապարհին նրանց շահերը համընկան թագի ձգտող Սյունյաց իշխանի նկրտումների հետ:

Ի դեպ, վերադառնալով Սմբատ Սյունու թագավոր հռչակվելու վերաբերյալ Ստեփանոս Օրբելյանի հավաստիացումներին՝ ցանկալի է նշել, որ այդ իրադարձությունը, իրոք, հանցանք համարել չի կարելի այն պարզ պատճառով, որ այդ ժամանակ Հայաստանի գրեթե բոլոր քիչ թե շատ նշանակալի իշխանությունները (Վասպուրական, Փառիսոս) վերածվել էին թագավորությունների, իսկ Բագրատունիների շրջանում, բացի Անիի Բագրատունիների տերությունից, արդեն առկա էր ևս երեք թագավորություն՝ Կարսի, Տաշիրքի և Կղարջքի: Նման պայմաններում միայն Սյունիքն էր, որ նման հավակնություններ մինչև 980-ական թթ. սկիզբը չէր դրսևորել:

Փաստորեն, ճիշտ էր Ն. Ադոնցը, երբ կարծում էր, որ Փառիսոսում Սենեքերիմ իշխանաց իշխանը թագավոր է հռչակվել միևնույն ժամանակ և միևնույն պայմաններում, ինչ Սյունիքում Սմբատ Սահակյանը: Այստեղ ևս կարևոր դեր է ունեցել Իբն Խոսրով Ադուդ ալ-Դաուլան: Պետք է հավելել նաև, որ «Աղվանից տերերը», որոնք «Խորասանի սուլթանին» հայտնել էին Սմբատ Սյունու թագավոր դառնալու ցանկության մասին, հենց Փառիսոսի թագավոր Սենեքերիմն ու իր եղբայր Գրիգորն էին, որոնք մինչ այդ արդեն արժանացել էին նրա բարեհաճությանը: Սակայն թագավոր հռչակվելով՝ Սմբատ Սյունին կապերը չխզեց Սմբատ Բ-ի հետ: Ի վերջո, պետք է հավելել, որ 988 թ. Սյունյաց զորքը մասնակցեց աբխազաց թագավորի դեմ արշավանքին, որից, ինչպես տեսանք, Բ. Հարությունյանը բխեցրել է, որ Սյունյաց թագավորը ընդունում էր Բագրատունիների շահնշահական իրավունքը:

Ինչ վերաբերում է Սյունիքի թագավորության տարածքին, ապա Բ. Հարությունյանը ճշտել է, որ գոյության առաջին շրջանում այն ընդգրկում էր Սյունյաց աշխարհի 12 գավառներից 9-ը

[Վայոց ձոր, Ծղուկք, Ճահուկ, Հաբանդ (Ձագեձոր), Երնջակ, Ձորք, Բաղք, Արևիք և Կովսական][240]: Դուրս էին մնում Գեղարքունիքը, Սոթքը և Աղահեճքը, որոնցից առաջինը պատկանում էր Բագրատունիներին, իսկ մյուս երկուսը գտնվում էին Խաչենի տերերի իշխանության ներքո:

---

240 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 125:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
# ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՄԲԱՏ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

## 3.1. Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանի և հայերի նկատմամբ 970-ական թթ. վերջին և 980-ական թթ.

Սմբատ Բ Տիեզերակալի գահակալության շրջանում ներքաղաքական կյանքը Բյուզանդիայում փոթորկվում էր, որի արդյունքում Բյուզանդիան Հայաստանի գործերին խառնվելու ժամանակ չուներ: Եվ միայն մեկ պարագայում էր, որ կայսրությանը հաջողվեց խառնվել Հայաստանի գործերին՝ իր դաշնակից Տայքի կուրապաղատ Դավթի միջոցով նրան հանձնելով զգալի տարածություններ Հայաստանի արևմտյան և կենտրոնական հատվածներում: Բյուզանդական զորահրամանատար Վարդաս Սկլերոսի ապստամբության ժամանակ (976-979 թթ.) կայսր Վասիլ (Բարսեղ) Բ-ն (976-1025 թթ.) Տայքի Դավիթ կուրապաղատին «խոստանայ տալ ...զԽաղտոյառիճ Կղէսուրաւն, զՉորմայրի եւ զԿարին, զԲասեան եւ զՍեւուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք եւ Ապահունիս (զորս եւ ետ իսկ) որպէս զի զաւր առաքեսցէ յաւգնականութիւն նմա»[241]: Դավիթ կուրապաղատը հավաքում է զորքը՝ 12 հազար հեծյալ, և ուղարկում կայսերն օգնության[242]: Նրա բանակը, արշավանքը սկսելով Տայքից, ավերում է Վարդաս Սկլերոսի տիրույթները[243]:

Պետք է նշել, որ Վարդաս Սկլերոսին ի սկզբանե միացել էր «զհեծելազունդ զաւրն Հայոց, որ ընդ Յունաց թագաւորութեամբն»[244], այսինքն՝ ամենայն հավանականությամբ Բյուզանդիայի արևելյան բանակաթեմերի հայկական հեծելազորը,

---

[241] **Ասողիկ**, էջ 763-764:

[242] Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 71: Տե՛ս նաև **Ճանաշեան Մ.**, Դավիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ - Ս. Ղազար, 1972, էջ 26-27:

[243] Տե՛ս **Ասողիկ**, էջ 764:

[244] Տե՛ս նույն տեղում, էջ 762:

ինչպես նաև իրենց հայրենի Տարոն գավառի՝ Բյուզանդիային անցնելու հետ չհամակերպված[245] Գրիգոր ու Բագրատ իշխանները և Մոկքի իշխան Զափրանիկը[246]: Հովհաննես Սկիլիցեսը հաղորդում է, որ ապստամբ Վարդասին առաջինը հենց հայերն են միացել[247]: Նրանք մեծապես նպաստել են նշանավոր ապստամբ զորահրամանատարի սկզբնական հաջողություններին: Մասնավորապես, ըստ Ասողիկի՝ Վարդաս Սկլերոսի զորքի կազմում գրոհելով բյուզանդական բանակի վրա՝ «քաջապէս մարտուցեալ զաւրն Հայոց, որպէս որդիք իշխանին Տարաւնոյ, Գրիգոր եւ Բագարատ, եւ Զափրանիկ իշխան Մոկացի, ահաբեկ արարեալ զզաւրսն Յունաց՝ զաւրէն փոթորկեալ մրրկի շփոթէին, զյոլովս սրախողխող արարեալ եւ զբազումս ձերբակալ. ուր սպանեալ եղեւ ներքինին Պետռանոս՝ զլուխ զաւրուն: Եւ ապա ողորմածաբար գթացեալ յաղագս քրիստոսական հաւատոցն՝ մնացելոցն կեանս շնորհէին»[248]:

Ի վերջո, կայսրը մեկ այլ նշանավոր զորահրամանատարի՝ Վարդաս Փոկասին հանձնելով արևմտյան զորքը՝ Տայքի զորախմբի հետ միասին ուղարկում է Վարդաս Սկլերոսի դեմ պատերազմի: Բանակներից մեկին վերջինս հաղթում է, բայց անակնկալ հասնում է մյուսը, և Վարդաս Սկլերոսը փախուստի է դիմում, հասնում Բաղդադ, որտեղ բանտ է նետվում՝ այնտեղ անցկացնելով մի քանի տարի[249]: Վարդաս Սկլերոսի ապստամբության ճնշման գործում Տայքի զորքի մեծ ներդրումն է

---

[245] Տե՛ս **Աղոնց Ն.**, Երկեր, հ. Ե, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 292-293; **Ճանաշեան Մ.**, նշվ. աշխ, էջ 37, **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 156:

[246] Տե՛ս **Ասողիկ**, էջ 764:

[247] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանություն բնագրից, (առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի), Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 56:

[248] Տե՛ս **Ասողիկ**, էջ 763:

[249] Տե՛ս **Ասողիկ**, էջ 764:

պատճառը, որ Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, թե «…յայնժամ զօրքն Հայոց հասանէին ի վերայ նորա և յաղթահարեցին անօրէն իշխանին այն մեծաւ յաղթութեամբ, և կոտորածով փախստական արարին զնա»[250]:

Փաստորեն, ըստ Ասողիկի՝ 970-ական թթ. վերջին Դավիթ կուրապաղատը, բացի Տայքի իր տիրույթներից, սկսեց տիրել Կարին գավառի արևմտյան սահմանին գտնվող Խաղտոյառիճից [շրջակա կղեսուրքով (կլեիսուրա, բառացի՝ կիրճ, այստեղ՝ սահմանային ռազմական շրջան կամ բանակաթեմ իմաստով[251])] և հյուսիսարևմտյան սահմանին գտնվող Չորմայրի լեռից դեպի հարավ-արևմուտք տարածվող Բարձր Հայքի Կարին, Այրարատի Բասեն, Տուրուբերանի Մարդաղի գավառներին, իսկ հետագայում՝ նաև Հարք և Ապահունիք գավառներին:

Ն. Ադոնցը, քննության ենթարկելով Ասողիկի տեղեկությունը, նշում է, որ այդ գավառների մի մասը՝ Կարինն ու Բասենը, արդեն պատկանում էր կուրապաղատին, Չորմայրին և Խաղտոյառիճը՝ նրա վասալ Թոռնիկի ընտանիքին, իսկ մյուս մասը՝ Ապահունիքն ու Հարքը, բյուզանդական տիրապետությունից դուրս էր՝ ենթակա մուսուլման ամիրաների, ուստի կայսրը դրանք Դավթին հանձնել չէր կարող: Իսկ Տայքից հարավ ընկած շրջանները կայսրը նրան էր հանձնել ցմահ[252]: Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում է, որ Հայաստանի արևմտյան գավառների ամբողջ հյուսիսային կեսը բաժին հասավ Դավիթ կուրապաղատին, Կայսիկների ամիրայության հարավային հատվածը՝ Մրվանյան Բադ ալ-Քուրդի (Բատ) ամիրային, իսկ Տարոնը՝ Բյուզանդիային[253]: Վ. Ստեպանենկոն ենթադրում է, որ Բասենն

---

[250] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 40:

[251] Տե՛ս «The Oxford Dictionary of Byzantium», prepared at Dumbarton Oaks, ed. Alexander P. Kazhdan, New York-Oxford, Oxford University Press, 1991, p. 1132: Մ. Ճանաշյանի կարծիքով կայսրը Դավիթ կուրապաղատին է հանձնել Խաղտոյառիճը՝ իր մոտակա լեռնանցքով: Տե՛ս **Ճանաշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 35:

[252] Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ե, էջ 347-352:

[253] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 190:

արդեն պատկանել է կուրապաղատին 976-979 թթ. դրությամբ, ուստի իրականում կայսրը նրան կարող էր հանձնել միայն Կարինի շրջանը, որը գրավել էր 949 թ.: Քանի որ այդ ժամանակ Ապահունիքը և Հարքը գտնվում էին Բատ ամիրայի իշխանության ներքո, ապա կայսրը միայն կարող էր Դավիթ կուրապաղատին «հանձնել» այդ գավառների գրավման իրավունքը՝ այդպիսով իրար դեմ հանելով վերջինիս և Բատ ամիրային[254]: Ա. Ակոպովը նույնպես հակված է Ն. Ադոնցի և Վ. Ստեպանենկոյի տեսակետների կողմը՝ հավելելով, որ Դավիթ կուրապաղատը նույնպես ուներ իր նպատակը՝ ընդարձակելու իր իշխանության սահմանները[255]: Կ. Յուզբաշյանը վստահ է, որ Դավիթ կուրապաղատը տիրել է իրեն հանձնված տարածքներին, բացի Հարքից ու Ապահունիքից, որոնք, ըստ նրա, կտրված էին մյուս տիրույթներից, և որոնք կուրապաղատը գրավելու էր հետագայում: Ի դեպ, հետազոտողը համաձայն չէ Ն. Ադոնցի այն տեսակետին, որ «ստացած» հողերի մի մասին կուրապաղատն արդեն տիրում էր, հակառակը, Ասողիկի տեղեկությունը ճշմարտապատում է, և բացի Հարքից ու Ապահունիքից՝ Դավթին հանձնված բոլոր տարածքները մինչ այդ պատկանում էին Բյուզանդիային և Դավիթ կուրապաղատին էին փոխանցվել ցմահ տիրելու իրավունքով[256]:

Պետք է նկատի ունենալ նաև, որ 971-975 թթ. թվագրվող բյուզանդական «էսկուրիալյան տակտիկոնի»[257] համաձայն՝

---

[254] Տե՛ս **Степаненко В.**, Апахуник в византийско-таоских отношениях в период мятежа Варды Склира (976-979), «Античная древность и средние века», 1973, вып. 10, с. 221-222:

[255] Տե՛ս **Ակոպով Ա.**, Տայքը X դարում (պատմական ակնարկ), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», 2007, № 10, էջ 156:

[256] Տե՛ս **Юзбашян К.**, նշվ. աշխ., էջ 136-137:

[257] «Տակտիկոն» էին կոչվում բյուզանդական տիտղոսների և պաշտոնների ցանկերը, որոնք օգտագործվում էին, մասնավորաբար, արքունի տարբեր արարողությունների ժամանակ: Այդ ցանկերում տիտղոսներն ու պաշտոնները ներկայացված էին ըստ աստիճանակարգի: Տե՛ս «The Oxford Dictionary of Byzantium», p. 2007:

մասնավորապես Դավիթ կուրապաղատին հանձնված տարածքներում գոյություն ունեին ստրատեգների կողմից ղեկավարվող բյուզանդական փոքրիկ բանակաթեմեր, որոնցից հանվանե հիշատակված են Կարինի, Հավճիչի, Արծնի և ամենայն հավանականությամբ Մարդաղիի ու Օկոմիի (Բասենում) ստրատեգները[258]: Ի դեպ, ինչպես դիպուկ նկատել է Է. Դանիելյանը, մոտ 950-952 թթ. Բասենը բաժանվել էր Բյուզանդիայի և Տայքի տերերի միջև[259], և Կարինի հարակից հատվածն անցել էր Բյուզանդիային, որտեղ, փաստորեն, բանակաթեմ էր ստեղծվել, իսկ Տայքին հարակից հատվածը՝ վերջինիս տերերին (այսպես կոչված՝ իբերներին)[260]: Ուստի Բասենի առումով Ասողիկի տեղեկությունը կասկածելի համարել չի կարելի՝ հաշվի առնելով, որ կայսրությունը կարող էր օգնության դիմաց Դավիթ կուրապաղատին նվիրաբերել Բասենի իր բաժինը: Պետք է հավելել նաև, որ Դավիթ կուրապաղատին հանձնվող տարածքների քարտեզագրումը ցույց է տալիս, որ Ասողիկի տեղեկության բառացի ընդունումը հետազոտողներին դրել է դժվարին դրության մեջ, քանի որ Դավիթ կուրապաղատի նոր տիրույթներից Բասենն ու Մարդաղին Ապահունիքից ու Հարքից բաժանված էին Տուրուբերանի Վարաժնունիք, Դասնավորք, Տվարածատափ և Դալառ գավառներով[261]: Եթե ենթադրենք, որ Ապահունիք ասելով՝ պատմիչը նկատի ունի ոչ թե միայն բուն Ապահունիք

---

[258] Տե՛ս **Юзбашян К.**, «Эскуриальский тактикон»–новый византийский источник по истории Армении, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 5, էջ 96-97:

[259] Տե՛ս **Դանիելյան Է.**, Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայբյուզանդական հարաբերություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 10, էջ 67:

[260] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, «Բյուզանդական աղբյուրներ», Բ, **Կոստանդին Ծիրանածին**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 18:

[261] Տե՛ս **Հարությունյան Բ.**, «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի», քարտեզ, «Հայաստանի պատմության ատլաս» (Ա մաս), Եր., «Մակմիլան Արմենիա ՀՁ ՓԲԸ», 2005, էջ 42-43:

գավառը, այլ նախկինում Կայսիկների ամիրայությանը պատկանող տարածքը, որը ընդգրկում էր վերոհիշյալ գավառների մեծ մասը[262], ինչը խիստ հավանական է, կստացվի, որ Դավիթ կուրապաղատի իշխանության ներքո միավորվելու էին մարդկային ու տնտեսական մեծ ներուժ ունեցող շրջաններ, որի շնորհիվ նա դառնում էր տարածաշրջանի ամենաազդեցիկ տիրակալներից մեկը՝ միջամտելով նույնիսկ մինչ այդ տարածաշրջանում գերակա Բագրատունիների ներքին գործերին: Ի դեպ, ուսումնասիրողների կասկածները Ասողիկի տեղեկության մեջ առկա, Դավիթ կուրապաղատին կայսեր կողմից նվիրաբերված տարածքների և դրանք Տայքի կուրապաղատությանը միացվելու վերաբերյալ անհիմն են, քանի որ Ասողիկը, թվարկելով դրանք, հավելում է, թե կայսրը «զորս եւ ետ իսկ»՝ փաստելով խոստման կատարումը կայսեր կողմից: Ինչ վերաբերում է նշված տարածքներին Դավիթ կուրապաղատի տիրելու ժամանակաշրջանին, ապա ամենայն հավանականությամբ սկզբում նրա իշխանության ներքո էին անցել միայն Տայքին հարևան շրջանները, իսկ Ապահունիքին՝ Մանազկերտ կենտրոնով, Դավիթ կուրապաղատը տիրացավ միայն այն բանից հետո, երբ տեղի քուրդ ամիրա Բադ ալ-Քուրդին 990 թ. պարտվեց Համդանյանների ամիրայության դեմ պատերազմում, գերեվարվեց ու գլխատվեց, իսկ նրա տիրույթներին սկսեց հավակնել քրոջ որդին[263]: Վերջին իրողության պատճառով Դավիթ կուրապաղատը, շտապ զորաշարժ կատարելով, ռազմակալեց Ապահունիքը, ամենայն հավանականությամբ 990 կամ 991 թ.[264]՝ արդեն Գագիկ Ա Բագրատունու թագավորության շրջանում[265]:

Փաստորեն, Դավիթ կուրապաղատը կայսրությունից իրավունք էր ստացել տիրելու ավելի ընդարձակ տարածքների, քան կարող է թվալ Ասողիկի տեղեկություններից, ըստ որում՝ ցմահ

---

[262] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-13: Տե՛ս նաև **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 146:

[263] Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 205:

[264] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 194-195:

[265] Տե՛ս **Ասողիկ**, էջ 815-816:

տիրելու իրավունքով: Վերջինս այդ պատմաշրջանում օրինաչափ երևույթ էր: Մասնավորապես, հայտնի է, որ նույն Դավիթ կուրապաղատը Սմբատ Բ թագավորին, ի պատասխան նրա կողմից ստացած աջակցության, 988 թ. ցմահ հանձնեց Սակուրեթ բերդը[266]: Ըստ Արիստակես Լաստիվերտցու՝ Դավիթ կուրապաղատը պարգև ստացած տարածքները «կալեալ էր ... ոչ իբրև զիւր հայրենի ժառանգութիւն, այլ պարգևք էին այսօքիկ ի թագաւորէն վասն նորա միամիտ հնազանդութեանն. և զի խոստացեալ էր՝ յետ իւր վախճանին զիւր գաւառն տալ ի թագաւորն...»[267], այսինքն՝ հանձնվել էին Դավիթ կուրապաղատին նույն կարգով, ինչպես Սակուրեթը՝ Սմբատ Բ-ին:

Վարդաս Սկլերոսի ապստամբության ճնշումից հետո՝ 980-ական թթ. կեսերին, Բյուզանդիան հալածանքներ սկսեց իր տիրապետության ներքո գտնվող հայկական հողերում բնակվող հայերի նկատմամբ, որը, թերևս, կապված էր նաև Վարդաս Սկլերոսի ապստամբությանը նրանց մասնակցության հետ: Ասողիկը հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Վասիլ Բ-ի կողմից Բյուզանդիայում բնակվող հայերին Մակեդոնիա տեղափոխելու մասին: Ըստ նրա՝ հայոց 435 թ. (մարտ, 986 թ.-մարտ, 987 թ.) Վասիլ Բ-ն «...կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն, անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն: Որ եւ տարեալ բնակեցոյց զյոլովս յաշխարհն յայն»[268]: Փաստորեն, հայերին տեղափոխել են Մակեդոնիա երկու նպատակով՝ բուլղարների դեմ պայքարելու և երկիրը շենացնելու: Տեղափոխվածներից երկուսը, որոնք Դերջանից էին և Կոմսաձագ (կոմիտոպուլ) էին կոչվում[269], որոնցից ավագի անունը Սամուել էր[270], ապստամբել էին Բյուզանդիայի դեմ ու անցել բուլղարների կողմը և իրենց քաջու-

---

[266] Տե՛ս **Ասողիկ**, էջ 806:

[267] **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 23:

[268] **Ասողիկ**, էջ 769:

[269] Տե՛ս «The Oxford Dictionary of Byzantium», pp. 1140-1141:

[270] Սամուելի մասին մանրամասնորեն տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ե, էջ 418-470, **Հովհաննես Սկիլիցես**, էջ 312-314, ծանոթ. 286:

թյան համար պատվավոր տեղ ստացան նրանց թագավորի կողմից[271]: Իսկ երբ պատերազմում բուլղարաց թագավորը գերի ընկավ, Կոմսաձագերը «տիրեալ ի վերայ աշխարհին Բուլղարաց՝ ընդդէմ կացին խիստ մարտիւք թագաւորին Յունաց»[272]: Հետաքրքրական է այն, որ երբ բուլղարների դեմ արշավեց Վասիլ Բ-ն, նրա բանակն ընկավ շրջափակման մեջ, իսկ կայսերը փրկեց նրա բանակի կազմում կռվող հայերի հետնակ գունդը և հասցրեց Մակեդոնիա[273]:

Շուտով՝ հայոց 435 թ. (մարտ, 986 թ.-մարտ, 987 թ.), հույն հոգևորականները սկսում են նեղել հայերին «վասն հաւատոյ», իսկ Սեբաստիայի հայ գլխավոր քահանաներին երկաթեղեն կապանքներով տեղափոխում են Կոստանդնուպոլիս: Նրանցից մեկին՝ Գաբրիելին[274], նույնիսկ չարչարելով սպանում են: Ցավոք, ճնշումներն ազդում են Սեբաստիա և Լառիսա քաղաքների հայ եպիսկոպոսների վրա, որոնք ընդունում են քաղկեդոնականություն[275]: «Եւ յայնմհետէ արգելին զժամաձայն Հայոց ի քաղաքէն Սեբաստիոյ մինչեւ ցգալ թագաւորին Վասլի յաշխարհն արեւելից»[276]: Բյուզանդիայի այս քաղաքականությունը սկիզբ դրեց դավանաբանական նոր բանավեճի, որ բյուզանդական հոգևորականների հետ հայոց եկեղեցին վարում էր անձամբ Խաչիկ Ա կաթողիկոսի (972-991 թթ.) գլխավորությամբ[277]:

Վարդաս Սկլերոսի ապստամբության պարտությունից հետո կյանքը Բյուզանդիայում չխաղաղվեց: Արդեն 986 թ. Բաղդադից մուսուլմանների օգնությամբ նա վերադարձավ Բյուզանդիա

---

[271] Տե՛ս **Ասողիկ**, էջ 801:

[272] Նույն տեղում:

[273] Տե՛ս նույն տեղում:

[274] Տե՛ս նույն տեղում, էջ 801-802:

[275] Տե՛ս նույն տեղում, էջ 769:

[276] Նույն տեղում, էջ 769-770: Խոսքը 1000 թ. Վասիլ Բ-ի՝ Մելիտինե գալու մասին է: Տե՛ս նույն տեղում, էջ 822:

[277] Այդ բանավեճին վերաբերող երկարաշունչ գրություններից մեկն իր աշխատության մեջ պահպանել է Ասողիկը: Տե՛ս նույն տեղում, էջ 770-800:

և դարձյալ ապստամբություն բարձրացրեց: Նրան հարեցին նաև հայեր[278]: Վասիլ Բ-ն նրա դեմ զորք ուղարկեց Վարդաս Փոկասի գլխավորությամբ: Վերջինս խորամանկությամբ Վարդաս Սկլերոսին առաջարկեց միավորվել, տապալել Վասիլ Բ-ին և միմյանց միջև բաժանել կայսրությունը: Հանդիպման ժամանակ, սակայն, Վարդաս Փոկասը ձերբակալեց Վարդաս Սկլերոսին: Այնուհետև Վարդաս Փոկասն իրեն կայսր հռչակեց[279]: Դատելով աղբյուրների տեղեկություններից՝ այս անգամ ևս Դավիթ կուրապաղատը դաշնակցում էր Վարդաս Փոկասի հետ: Թեև Հովհաննես Սկիլիցեսը Վարդաս Սկլերոսի առաջին ապստամբության ժամանակ կուրապաղատի միավորվելը Վարդաս Փոկասի հետ բացատրում է նրանց ջերմ հարաբերություններով[280], ըստ Հ. Բարթիկյանի և Է. Դանիելյանի՝ նա երկրորդ անգամ Վարդաս Փոկասին միացել էր ոչ թե այդ պատճառով, այլ կայսեր խոստմանը չվստահելով և փորձ կատարելով՝ վերջինիս հաղթանակի պարագայում իր ցմահ տիրույթները դարձնել ժառանգական[281]: Վարդաս Փոկասն այնուհետև հունաց ու վրաց (իմա՛ տայոց) զորքերով արշավեց դեպի Կոստանդնուպոլիս[282]: Պայքարը տևեց երկու տարի: Ի վերջո, վճռական ճակատամարտից առաջ Վարդաս Փոկասը «արձակեալ յինքենէ զզաւրսն Վրաց», այսինքն՝ Դավիթ կուրապաղատի զորաջոկատը և հիմնական զորքով ուղղություն վերցրեց մայրաքաղաք: Որոշիչ ճակատամարտը տեղի ունեցավ հայոց 438 թ. (մարտ, 989 թ. – մարտ, 990 թ.),

---

278 Տե՛ս «Император Василий Болгаробойца», с. 22:

279 Տե՛ս **Ասողիկ**, էջ 802-803, «Император Василий Болгаробойца», с. 23:

280 Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**, էջ 64-65:

281 Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, «Պատմաբանասիրական հանդես», 1970, № 2, էջ 85-86: Հմմտ. **Դանիելյան Է.**, Վասիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և երթուղին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 10, էջ 62:

282 Տե՛ս **Ասողիկ**, էջ 803: Տե՛ս նաև **Михаил Пселл**, Хронография (այսուհետև՝ **Михаил Пселл**), перевод, статья и примечания Я. Н. Любарского, М., изд. «Наука», 1978, с. 9:

որի ընթացքում Վարդաս Փոկասը անակնկալ վախճանվեց[283]: Թե ո՞րն է եղել Դավիթ կուրապաղատի զորքը արձակելու պատճառը, դժվար չէ կռահել: Ամենայն հավանականությամբ վերջին պահին Տայքի տիրակալը, հասկանալով Վարդաս Փոկասի անխուսափելի պարտության հեռանկարը, լքել է նրան: Ի դեպ, կարելի է կարծել նաև, որ ի սկզբանե Դավիթ կուրապաղատի զորագունդը, ինչպես և Վարդաս Սկլերոսի առաջին ապստամբության ժամանակ, միացել է կայսեր կողմից ուղարկված Վարդաս Փոկասի զորքին, սակայն, երբ վերջինս հռչակվել էր կայսր և արշավել Կոստանդնուպոլսի վրա, Դավիթ կուրապաղատը քակտել էր նրա հետ դաշինքը[284]: Ըստ որում՝ պատճառը կարող էր լինել այն, որ այդ կերպ նա կարող էր զրկվել Վասիլ Բ-ից ստացած տիրույթներից, որոնց մի մասը, փաստորեն, ստացել էր, իսկ մյուս մասին նախապատրաստվում էր տիրել: Վարդաս Փոկասի պարտությունից հետո ապստամբներից ոմանք դեռ մնացել էին, օրինակ՝ Չորտվանել մագիստրոսը, որը տիրում էր Դերջանին ու Տարոնին: Նրա դեմ ուղարկվեց Ժան պատրիկը, որը երկրորդ փորձից Դերջան գավառի Բագառիճի դաշտում պարտության մատնեց ու սպանեց նրան հայոց 439 թ. (մարտ, 990 թ. - մարտ-991 թ.)[285]: Սակայն ապստամբությանը գործնականում չմասնակցելը Դավիթ կուրապաղատին չազատեց կայ-

---

[283] Տե՛ս **Ասողիկ**, էջ 802-804: Ըստ Ասողիկի՝ նա սպանվել է Բյութանիայում տեղի ունեցած երկրաշարժի տարում, որի հետևանքով վթարվեց նաև Ս. Սոֆիայի տաճարը: Այդ երկրաշարժը տեղի է ունեցել 989 թ. հոկտեմբերի 26-ին: Տե՛ս **Ambraseys N.**, Earthquakes in the Eastern Mediterranean and the Middle East, A Multidisciplinary Study of Seismicity up to 1900, Cambridge University Press, 2009, p. 256: Տե՛ս նաև **Հովհաննես Սկիլիցես**, էջ 73:

[284] Պահպանվել է տեղեկություն այն մասին, որ Վարդաս Փոկասի վերջին ճակատամարտի ժամանակ, երբ ինքնահռչակ կայսրը սպանվեց, «իբերները (իմա՛ Տայքի զորագունդը –Ա. Ե.) արդեն ցրվել էին» (**Михаил Пселл**, էջ 11), որից կարելի է ենթադրել, որ Դավիթ կուրապաղատի զորքը Վարդաս Փոկասին լքել է վճռական ճակատամարտից անմիջապես առաջ կամ նույնիսկ ճակատամարտի ընթացքում:

[285] Տե՛ս **Ասողիկ**, էջ 805:

սեր ցասումից, որը ստիպեց նրան տիրույթները կտակել կայսրությանը[286]:

Ըստ Յահիա Անտիոքցու՝ Վարդաս Փոկասին աջակցելու պատճառով կայսրը բարկացել էր Դավիթ կուրապաղատի վրա, որը ներում է խնդրել, հնազանդություն հայտնել և խոստացել, որ իր մահից հետո, քանի որ անզավակ է, իր հողերը կթողնի կայսրությանը: Այդ նպատակով Դավիթ կուրապաղատը Կոստանդնուպոլիս ուղարկեց երկրամասի աշխարհիկ և հոգևոր տերերից բաղկացած մի պատվիրակություն՝ խոստումը երդմամբ ամրագրելու համար[287]: Դավիթ կուրապաղատի անժառանգության պատճառով սեփական տիրույթները Բյուզանդիային ժառանգելու մասին հիշատակում են նաև Ասողիկը[288], Վարդան վարդապետը[289], Արիստակես Լաստիվերտցին[290], Հովհաննես Սկիլիցեսը[291]:

Վրացական պատմագիտության մեջ առկա է «բանավեճ», թե որ տարածքներն են կտակվել կայսրությանը՝ ողջ կուրապաղատությո՞ւնը, թե՞ միայն Բյուզանդիայից ստացված տարածքները[292]: Ս. Ջանաշիան, օրինակ, համարում էր, որ խոսքը միայն Բյուզանդիայից ստացված հողերի մասին է[293]: Սակայն նման քննարկումն ինքնին բռնազբոսիկ է, քանի որ Բյուզանդիայից տարածքները Դավիթ կուրապաղատին պարգև էին տրվել ցմահ

---

286 Տե՛ս «The Oxford Dictionary of Byzantium», p. 590: Տե՛ս նաև **Garsoyan N.**, The Independent Kingdoms of Medieval Armenia, «The Armenian People from Ancient to Modern Times», Volume I: «The Dynastic Periods: From Antiquity to the Fourteenth Century», ed. by Richard G. Hovannisian, New York, St. Martin's Press, 1997, p. 168:

287 «Император Василий Болгаробойца», с. 27.

288 Տե՛ս **Ասողիկ**, էջ 822:

289 Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 93:

290 Տե՛ս **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 23:

291 Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**, էջ 75:

292 Տե՛ս «Очерки истории Грузии», том II, Тб., «Мецниереба», 1988, с. 330-332:

293 Տե՛ս **Джанашиа С.**, Об одном примере искажения исторической правды, Тб., изд. «Заря востока», 1947, с. 29:

սկզբունքով և ինքնըստինքյան պետք է վերադարձվեին կայսրությանը նրա մահից հետո: Ուստի ժառանգությունը պետք է վերաբերեր բուն Տայքին, և պատահական չէ, որ Արիստակես Լաստիվերտցին գրում է, որ Դավիթ կուրապաղատը «խոստացեալ էր՝ յետ իւր վախճանին զիւր գաւառն տալ ի թագաւորն...»[294]: Ակնհայտ է, որ «զիւր գաւառը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ Տայքը:

Այդպիսով Դավիթ կուրապաղատի օրոք հզորության գագաթնակետին գտնվող Տայքի կուրապաղատությունը, որը տիրում էր նաև դեպի հարավ տարածվող երկրամասերին, դատապարտվեց, քանի որ Բյուզանդիան այդ ժամանակ գտնվում էր հզորության գագաթնակետին և հազիվ թե ձեռքից բաց թողներ Տայքի հողերին տիրելու հնարավորությունը: Սակայն մինչև 1000 թ. կուրապաղատը բավականին ակտիվ գործունեություն էր ծավալում՝ ազդեցիկ դերակատարություն ունենալով այսրկովկասյան գործերում:

Վարդաս Փոկասի ապստամբությունից հետո դարձյալ հայտնվեց Վարդաս Սկլերոսը՝ փորձելով վերսկսել ապստամբությունը, սակայն Վասիլ Բ-ին հաջողվեց նրան համոզել վայր դնել զենքերը և անցնել ծառայության բյուզանդական արքունիքում կուրապաղատի պատվաստիճանով[295]:

Սմբատ Բ-ի օրոք, փաստորեն, կապված ներքաղաքական ճգնաժամի հետ, Բյուզանդիան ժամանակավորապես կասեցրել էր իր ծավալապաշտական քաղաքականությունը Հայաստանում, սակայն հալածանքներ էին սկսվել կայսրության սահմաններում բնակվող հայերի նկատմամբ՝ ընդհուպ մինչև նրանց բռնի տեղափոխությունը Բալկաններ՝ Բուլղարիայի դեմ պայքարում նրանց ուժը օգտագործելու նպատակով: Այս շրջանում Բյուզանդիայի միակ «հաջողությունը» քրիստոնյա Արևելքում Տայքի Դավիթ կուրապաղատի ժառանգությունն էր, որին տիրանալու համար կայսրը ստիպված էր սպասել մինչև Դավիթ կուրապաղատի մահը (1000 թ.):

---

[294] **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 23:

[295] Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**, էջ 74, նաև **Михаил Пселл**, էջ 12-15:

## 3.2. Սմբատ Բ-ի մասնակցությունը Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին

Սմբատ Բ-ի գահակալության շրջանում կարևոր իրադարձություններ էին տեղի ունենում Այսրկովկասում, որոնց սկսում է ակտիվ մասնակցություն ունենալ հայոց թագավորությունը: Եվ դա պատահական չէր, քանի որ չնայած մասնատվածության՝ հայությունը պահպանում էր իր ռազմական ներուժը: Այդ առումով հույժ բնորոշիչ է Հ. Մանանդյանի հետևյալ տեսակետը. «Բաժանված լինելով անջատ մանր թագավորությունների՝ Հայաստանը թեև քաղաքականապես շատ թույլ էր, սակայն ռազմական տեսակետից հայությունը Առաջավոր Ասիայի զորեղ ժողովուրդներից մեկն էր»[296]:

Այդ ժամանակ հատկապես Վիրքում վճռական դերակատարություն ուներ Տայքի Դավիթ կուրապաղատը, որը կարողացել էր 975 թ. Վիրքից դուրս մղել Կախքի քորեպիսկոպոսության զորքը և Տայքի, Քարթլիի և Աբխազիայի գահաժառանգ կարգել աբխազաց Գեորգի Բ թագավորի (929-957 թթ.) դուստր Գուրանդուխտի և Կղարջքի Բագրատունիներից Գուրգեն Բագրատունու որդի Բագրատին (Բագրատ Գ)[297]: Բագրատ Գ-ն հանդես էր գալիս որպես Գեորգի թագավորի ժառանգ[298]: Սակայն արդեն Սմբատ Բ թագավորի օրոք՝ 978 թ., Վիրքի իշխանները խռովու-

---

[296] Տե՛ս **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Սելջուկյան շրջանից մինչև Սեֆյանների հաստատումը Իրանում (XI-XV դդ.), Երկեր, հ. Գ, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 15:

[297] Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 71:

[298] Այդ է վկայում Բագրատ Գ-ի հանձնարարությամբ գրված «Աբխազաց թագավորների դիվանի» վերջաբանը. «Նրանցից (իմա՛ աբխազաց թագավորներից –Ա. Ե.) հետո կամեցավ աստված, և ես՝ Բագրատ Բագրատունիս, երանելի Գուրգենի որդին, աբխազաց թագավոր Գեորգիի դստեր որդին, տիրեցի Աբխազաց երկրին՝ իմ մայրենի ժառանգության, և որքան ժամանակ կթագավորեմ, հայտնի է [միայն] աստծուն»: Տե՛ս «Сообщения средневековых грузинских письменных источников об Абхазии», Сухуми, «Алашара», 1986, с. 13:

թյուն բարձրացրին, հրավիրեցին Կախքի քորեպիսկոպոսին, նրան հանձնեցին Ուփլիսցխե ամրոցը և ձերբակալեցին Բագրատին՝ ծնողների հետ միասին: Դավիթ կուրապաղատը միջամտեց՝ վերադարձնելով ամեն ինչ նախկին վիճակին[299]: Այդ ժամանակ նրան դիմեցին վրաց և աբխազաց իշխանները՝ խնդրելով արդեն չափահաս տարիքի հասած Բագրատին դարձնել իրենց թագավոր, ինչը և իրականացրեց Դավիթ կուրապաղատը[300]:

Փաստերը ցույց են տալիս, որ Սմբատ Բ-ն կարևոր մասնակցություն է ունեցել 978 թ. իրադարձություններին: Իր ծրագրերն իրականացնելու համար Դավիթ կուրապաղատը կարիք ուներ ուժեղ դաշնակցի, ուստի օգնության համար դիմեց հայոց թագավոր Սմբատ Բ-ին: Ըստ Ասողիկի՝ «...կիւրապաղատն Դաւիթ եւ Սմբատ արքայ Հայոց թագաւորեցուցին Ափխազաց զՍմբատ՝ որդի Գուրգենայ, թոռն Բագարատայ թագաւորին Վրաց[301]»[302]: Աբխազաց գահին բազմած Սմբատը ոչ այլ ոք է, եթե ոչ Բագրատ Գ Բագրատունին (978-1014 թթ.): Սմբատ Բ-ն, փաստորեն, ուղղակի մասնակցություն է ունեցել Բագրատ Գ-ի՝ աբխազաց թագավոր հռչակվելու գործին: Զ. Անչաբաձեն այդ տեղեկությունը կասկածի չի ենթարկում, որովհետև անհնար էր, որ Դավիթ կուրապաղատը նման ծրագիր իրականացներ՝ առանց ստանալու տարածաշրջանի հզորագույն տիրակալի՝ Սմբատ Բ-ի օգնությունը[303]: Դավթի որդի Սմբատը տեղեկացնում է, որ Բագրատին «դարձրին աբխազաց թագավոր»[304], ինչը հիմնավորում է Ասողիկի տեղեկության իսկությունը:

---

[299] Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 72:

[300] Տե՛ս նույն տեղում:

[301] Իմա՛ վրաց թագավոր Բագրատ Խն (958-994 թթ.):

[302] Տե՛ս **Ասողիկ**, էջ 805:

[303] Տե՛ս **Анчабадзе З.**, Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959, с. 168:

[304] Տե՛ս «Жизнь и известие о Багратидах, царях наших грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузинским, которое написал Сумбат, сын Давида», пер. Е. Та-

Հայտնի է, որ երբ 981 թ. Սմբատ Բ-ն Կարս թագավորությունից խլեց Շատիկ բերդը, Կարսի Մուշեղ թագավորն օգնության կանչեց Դավիթ կուրապաղատին, որը զորքով ժամանեց Շիրակ, պահանջեց Մուշեղին վերադարձնել Շատիկը, սակայն երկրին վնասներ չհասցրեց[305]: Փաստերը ցույց են տալիս, որ այդ միջադեպը բացասական ազդեցություն չի ունեցել Սմբատ Բ-ի և Դավիթ կուրապաղատի հարաբերությունների վրա: Տարիներ անց իրավիճակը փոխվեց: 988 թ., երբ աբխազաց Բագրատ Գ թագավորն արշավանքի դուրս եկավ Թռեղքի իշխան Ռատ Լիպարիտյանի դեմ, Դավիթ կուրապաղատին հայտնեցին, թե Բագրատը զորքով գալիս է իր դեմ՝ ցանկանալով սպանել նրան[306]: Ըստ Ասողիկի՝ «...թագաւոր Ափխազաց խաղայ զաւրաւք բազմաւք ի Սարմատացւոց աշխարհէն ի վերայ կիւրապաղատին Տայոց Դաւթի ... գայ բանակի յեզերս Կուրն կոչեցեալ գետոյն»[307]: Ի դեպ, Բագրատ Գ-ն ամենայն հավանականությամբ օգտվել է այն առիթից, որ Դավիթ կուրապաղատի զորքի մի մասն այդ ժամանակ գտնվում էր Վարդաս Փոկասի ճամբարում, և նա անպատրաստ էր պատերազմի: Դավիթ կուրապաղատն անմիջապես հավաքեց իր մնացյալ զորքը և «իրազեկ դարձրեց հայոց թագավորներին»: Ասողիկը տեղեկացնում է, որ «Եւ կիւրապաղատն Տայոց Դաւիթ եւ թագաւորն Վրաց Բագարատ[308] առաքեն առ թագաւորն Հայոց Սմբատ՝ կոչել յաւգնականութիւն իւրեանց: Եւ նորա առեալ զամենայն զաւրս Հայոց եւ զԳագիկ՝ զեղբայր իւր, գնաց առ նոսա ի գաւառն Ջաւախաց. եւ բանակին

---

кайшвили, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 28, Тифлис, 1900, с. 154: Դավթի որդի Սմբատի երկի այլ թարգմանություններում սույն հատվածը թարգմանված է հետևյալ կերպ. «...Այս Բագրատը դարձավ Աբխազիայի թագավոր» («Картлис цховреба (История Грузии)», Тб., изд. «Артануджи», 2008, с. 228), որն այնքան էլ ճիշտ չէ:

[305] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760-761:

[306] Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 72:

[307] **Ասողիկ**, էջ 805-806 :

[308] Իմա՝ վրաց թագավոր Բագրատ Խն (958-994 թթ.):

ի գիւղն, որ կոչի Դլիւեկն, եւ մանուկն Աբաս՝ թագաւորն Կարուց, կարմրազգեստ զգունդն իւր ունելով: Եւ ամենայն զաւրն Վրաց եւ Վասպուրականի, Սիւնեաց եւ Աղուանից իշխանքն միահաւաք լինէին ընդդէմ Ափխազաց զաւրուն»[309]: Փաստորեն, աբխազաց թագավորության բանակի դեմ պատերազմին մասնակցելու համար Ջավախք են ժամանել Բագրատունիների (Անիի և Կարսի), Վասպուրականի, Սյունյաց ու թերևս նաև Տաշիրքի (Աղվանից կոչված)[310] զորամիավորումները: Քանի որ Սմբատ Բ-ն Դավիթ կուրապաղատին օգնության էր տարել նման ծանրակշիռ ռազմական ուժեր՝ նպաստելով Բագրատ Գ-ին խաղաղություն պարտադրելուն[311], կուրապաղատը վերջինիցս վերցրեց Սակուրեթ բերդն ու ցմահ հանձնեց Սմբատ Բ-ին՝ «շնորհ նմա արարեալ վասն աւգնականութեանն. զոր ի մահուն Սմբատայ դարձեալ հանեն ի Հայոց զբերդն Սակուրէթ»[312]:

Հայկական և վրացական աղբյուրների տեղեկությունները, սակայն, նշված արշավանքի կապակցությամբ այդքան էլ միանշանակ չեն: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ Դավիթ կուրապաղատը Բագրատ Գ-ի դեմ զորք հավաքեց և «իրազեկ դարձրեց հայոց թագավորներին»[313]: Մինչդեռ ըստ Ասողիկի՝ Դավիթ կուրապաղատը և վրաց թագավոր Բագրատը օգնության համար դիմել են Սմբատ Բ-ին: Վերջինս համախմբել է ողջ հայոց զորքը, որը, դատելով պատմիչի տեղեկությունից, ներառել է Վասպուրականի, Սյունյաց և Աղվանից (իմա՛ Հայոց արևելից կողմերի)

---

[309] **Ասողիկ**, էջ 806:

[310] Նախկինում կարծիք ենք հայտնել, թե խոսքը Հայոց արևելից կողմերի զորամիավորման մասին է (տե՛ս **Եղիազարյան Ա.**, Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 95), բայց այժմ, քանի որ ցանկում բացակայում է Տաշիրքի թագավորության անվանումը, իսկ վերջինս երբեմն կոչվել է նաև Աղվանից թագավորություն (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 22), հակված ենք համարելու, որ խոսքը հենց Տաշիրքի թագավորության մասին է:

[311] Տե՛ս **Ասողիկ**, էջ 806:

[312] Նույն տեղում:

[313] «Քարթլիի մատյան», էջ 72-73:

զորազնդերը, և մեկնել օգնության[314]: Եթե հավատ ընծայենք վրացական աղբյուրին, ապա կարելի է կարծել, որ Դավիթ կուրապաղատը առանձին-առանձին օգնության է կանչել հայոց թագավորներին, սակայն դեպքերի ժամանակակից Ասողիկը դժվար թե աչքաթող աներ նման փաստը: Բայց «Քարթլիի մատյանի» տեղեկությունն էլ վստահաբար հենց այնպես չի ծնվել և պարունակում է պատմական իրողության տարրեր: Այդ առումով կարևոր է այն, որ Ասողիկը Կարսի գունդը հիշատակում է Սմբատ Բ-ի գլխավորությամբ արշավանքի դուրս եկած զորքերից առանձին [«Եւ նորա (իմա՛ Սմբատ Բ – Ա. Ե.) առեալ զամենայն զաւրս Հայոց եւ զԳագիկ՝ զեղբայր իւր, գնաց առ նոսա ի գաւառն Ջաւախաց. եւ բանակին ի գիւղն, որ կոչի Դլիւեկն, եւ մանուկն Աբաս՝ թագաւորն Կարուց, կարմրազգեստ զգունդն իւր ունելով»], որի պատճառով Ն. Էմինը Ասողիկի երկի ռուսերեն թարգմանության մեջ կատարել է հավելում՝ ստանալով հետևյալը. «Այս վերջինը (իմա՛ Սմբատը –Ա. Ե.), վերցնելով ողջ հայոց զորքը և իր եղբայր Գագիկին[315], մեկնեց նրանց մոտ՝ Ջավախք գավառը, և ճամբար դրեց Դլիվեկ կոչվող գյուղում: [Այստեղ էր գտնվում նաև] Կարսի թագավոր մանուկ Աբասը՝ իր՝ կարմիր հագած ջոկատով»[316]: «Այստեղ էր գտնվում նաև» հավելումը, որը, դատելով Ասողիկի տեղեկության տրամաբանությունից, հույժ իրական է, կարևոր հետևություններ է ծնում, քանի որ այլ կենտրոնախույս թագավորություններ, ինչպիսիք էին Վասպուրականը, Սյունիքը և ամենայն հավանականու-

---

314 **Ասողիկ**, էջ 806:

315 Հետաքրքիր է, որ խոսք չկա հայոց սպարապետի մասին: Օրինակ՝ Սմբատ Բ-ի օրոք հիշատակվում է հայոց սպարապետ Գրիգոր Պահլավունին (տե՛ս **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 146), որին 980-ական թթ. վերջին ենթադրաբար փոխարինել է որդին՝ Վասակ Պահլավունին: Տե՛ս **Վարդանյան Վ.**, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2008, էջ 24-27:

316 «Всеобщая история Степ'аноса Таронского Асох'ика по прозванию», с. 181.

թյամբ նաև Փառիսոսը (թերևս, «Աղվանից»-ի ներքո ընկալելի է նաև Փառիսոսը), աբխազաց թագավորի դեմ արշավանքին մեկնել են Սմբատ Բ-ի գլխավորությամբ, իսկ Կարսի թագավորը, փաստորեն, իր գնդով Ջավախք է ժամանել նրանցից առանձին: Դավիթ կուրապաղատը, ամենայն հավանականությամբ ելնելով Կարսի թագավորության հետ դաշնակցային հարաբերություններից, Աբասին օգնության է կանչել Սմբատ Բ-ից առանձին: «Քարթլիի մատյանն» էլ արձագանքել է այդ իրողությանը՝ նշելով, որ Դավիթ կուրապաղատը օգնության է կանչել հայոց թագավորներին՝ նկատի ունենալով շահնշահ Սմբատ Բ-ին և Կարսի թագավոր Աբասին:

Փաստորեն, չնայած ներքին ու արտաքին դժվարություններին՝ Սմբատ Բ-ն, իր շուրջը համախմբելով հայոց մեծամեծերին, էական մասնակցություն է ունեցել Այսրկովկասում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

## 3.3. Բագրատունյաց թագավորությունը և ամիրայությունները Սմբատ Բ-ի օրոք

Սմբատ Բ-ի գահակալության շրջանում դարձյալ ակտիվացան տեղական ամիրայությունները: Դրանցից հատկապես նշելի են Գողթնի և Մանազկերտի ամիրայությունները: Մյուս կողմից, հայոց թագավորությունը սկսեց թիրախավորվել հարևան ամիրայությունների կողմից: Ատրպատականի ամիրա Սալարյան Աբու ալ-Հայջան 982 թ. Շիրակից հեռացավ և պատերազմեց այդ ժամանակ հզորացած Գողթնի ամիրա Աբուտլուփի (Աբու Դուլաֆ) հետ ծանր պարտություն կրեց, կալանավորվեց ու ազատության դիմաց նրան զիջեց Դվինը և Հայաստանում ունեցած մյուս քաղաքները: Այնուհետև Աբու Դուլաֆը Դվինին տիրեց մինչև 987 թվականը[317]: Իսկ Աբու ալ-Հայջան թափառական կյանք վարեց Հայաստանում և Վիրքում, այնուհետև մեկնեց Բյուզանդիա՝ փորձելով օգնություն ստանալ, բայց անհաջողության մատնվելով՝ գնաց Ուղթիս, որտեղ էլ, ի վերջո, սեփական ծառաների ձեռքով սպանվեց[318]:

Փաստորեն, Հայաստանում Սալարյանների տիրույթներն անցան Գողթնի ամիրային: Վերջինս շուտով թիրախավորեց Վասպուրականը, որի դեմ արշավանքի դուրս եկավ Աբու ալ-Հայջայի հետ հաշվեհարդարից հետո՝ 983 թ.: Աբու Դուլաֆի զորքին միացել էին նաև մահմեդական կամավորականներ, որոնք հանուն հավատի կռվում էին Բյուզանդիայի դեմ[319]: Վասպուրականի զորքը Աշոտ թագավորի (969-991 թթ.) հրամանով ընդառաջ դուրս եկավ նրանց իշխանաց իշխան Ապլղարիբի գլխավորությամբ և բանակեց Ճվաշ գավառի Բակյար վայրում: Սակայն Վասպուրականի հեծյալներն իրենց ձիերին անհոգաբար արձակեցին արածելու, և մահմեդականներին հաջողվեց տիրանալ դրանց: Վասպուրականի զորքը ստիպված ապաստանեց տեղի ամրոցում: Աբու Դուլաֆի բանակը պաշարեց ամրոցը

---

[317] Տե՛ս **Ասողիկ**, էջ 767-768:

[318] Տե՛ս նույն տեղում, էջ 761:

[319] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 178:

և խորամանկությամբ համոզեց Վասպուրականի զինվորներին կյանքը պահպանելու պայմանով հանձնել զենքերը, որից հետո բոլորին սպանեցին, իսկ Ապլղարիբին երկու այլ իշխանների հետ գերեվարեցին: Վերջիններս հետագայում փրկագնվեցին[320]: Աբու Դուլաֆի զինվորները անարգեցին սպանվածների մարմինները, որի համար, ըստ պատմիչի, հետագայում պատժվեցին ու պարտվեցին այլազգիներից[321]: Հավանաբար խոսքը հավատքի համար մարտնչող մահմեդական կամավորականների մասին է, քանի որ Աբու Դուլաֆը պահպանեց իր հզորությունը նաև հետագայում և մի պահ նույնիսկ Ատրպատականի նոր տերերի՝ Ռավվադյանների դեմ Սմբատ Բ-ի հետ համագործակցություն հաստատեց[322]:

Հետաքրքրական է, որ Աբու Դուլաֆը չշարունակեց արշավանքը դեպի Վասպուրականի խորքը: Որպես պատճառ կարելի է բերել այն, որ արշավանքի նպատակը Վասպուրականի թագավորության՝ Գողթնի ամիրայությանը հարևան հյուսիսարևելյան շրջանների ասպատակությունն էր, բայց, ամենայն հավանականությամբ, այստեղ կար նաև երկրորդ պատճառը: Այդ ժամանակ Ատրպատականում ստեղծվել էր անորոշ վիճակ, որը հնարավորություն տվեց քրդական ծագմամբ Ռավվադյաններին տիրելու այդ երկրամասին 984 թ.: Պատահական չէ, որ Ատրպատականի Ռավվադյան ամիրա Աբլհաճը (Աբու ալ-Հայջա) 988 թ. 100 հզ բանակով արշավեց հենց Գողթնի ամիրայի դեմ և նրանից խլեց նախկինում Սալարյաններին պատկանող քաղաքները՝ Դվինը և Նախճավանը: Նա ավարի առավ Գողթնը և Սմբատ Բ-ից պահանջեց նախորդ տարիների հարկը («հարկս զանցեալ ամացն»)[323], ինչը ցույց է տալիս, որ Սմբատ Բ-ն նախկինում հարկատու էր նրան: Քանի որ Ռավվադյաններն Ատրպատականին տիրել էին 984 թ., հավանական է, որ հենց այդ ժամանակ նրանց սպառնալիքը երկրից հեռացնելու համար Սմբատ Բ-ն

---

[320] Տե՛ս **Ասողիկ**, էջ 762:

[321] Տե՛ս նույն տեղում:

[322] Տե՛ս նույն տեղում, էջ 769:

[323] Նույն տեղում, էջ 767-768:

հարկ վճարելու հանձնառություն էր ստանձնել: Սմբատ Բ-ն կատարեց նրա պահանջը և դրանով հեռացրեց վտանգը: Այդ ժամանակ Վասպուրականի թագավորությունը հարձակման թիրախ դարձավ նաև Ռավվադյանների համար: Աբու ալ-Հայջա Ռավվադյանը 988 թ. Հերի Ալնոր ամիրայի դրդմամբ ներխուժեց Վասպուրական, զորքը երեք մասի բաժանեց՝ մտադրվելով ասպատակել ողջ երկիրը, սակայն լայնածավալ հարձակմանը նախորդող գիշերը սպանվեց, որով Վասպուրականը փրկվեց մեծ վտանգից[324]: Օգտվելով նրա մահվան պատճառով Ատրպատականում ստեղծված վիճակից՝ Գողթնի ամիրան վերագրավեց Դվինն ու հայոց կաթողիկոս Խաչիկ Ա-ի միջնորդությամբ խաղաղություն հաստատեց Սմբատ Բ-ի հետ[325]: Անկասկած, Սմբատ Բ-ի հետ խաղաղությունը նրան պետք էր Ատրպատականի տերերի դեմ հակամարտության ընթացքում թիկունքն ամրապնդելու համար:

Մատթեոս Ուռհայեցին պահպանել է մի տեղեկություն, ըստ որի՝ Վասպուրականի նախկին սպարապետ Ապլղարիբը, վիրավորված այն բանից, որ իրեն զրկել էին սպարապետությունից, դիմել է Հերի (՞) Ապլհաճ ամիրային՝ Վասպուրականի բանակը մատնելով նախճիրի: Ապլհաճ ամիրան այդ ընթացքում գերեվարված Անձևացյաց Դերենիկ թագավորին պահում էր կալանքի տակ: Մի օր նա Դերենիկին տարել էր Հերի դաշտը՝ գունդ խաղալու, որից օգտվել է զղջացած Ապլղարիպը և կազմակերպել Դերենիկի փրկության գործողությունը՝ Ապլհաճին հետապնդելով մինչև Հերի դարպասը[326]: Ի վերջո, Մատթեոս Ուռհայեցին ամփոփում է, թե «այս եղեւ ի Ճուաշ գաւառին Հայոց աշխարհին, ի գեւղն՝ որ կոչի Բակ, սահմանակից Վասպուրականայ»[327]: Վ. Վարդանյանը փորձում է հիմնավորել, որ Հերի

---

[324] Տե՛ս նույն տեղում, էջ 768-769:

[325] Տե՛ս նույն տեղում, էջ 769:

[326] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 36-38:

[327] Նույն տեղում, էջ 38: Նույնը տե՛ս «Ժամանակագրութիւն Սմբատայ սպարապետի», Վենետիկ, Ս. Ղազար, Հրատարակութիւն Հայկական բարեգործական ընդհանուր միութեան, 1959, էջ 13-15:

Ապլհաճ ամիրայի՝ Մատթեոս Ուռհայեցու հիշատակած արշավանքը տեղի է ունեցել 990-ական թթ. սկզբին (990-992 թթ.), և դեպքերը զարգացել են միևնույն՝ Բակ-Բակյար վայրում: Ըստ նրա՝ Անձևացյաց թագավոր Դերենիկը Վասպուրականում 990 թ. թագավորած Գուրգեն Արծրունու որդին էր[328]: Իրականում դատելով երկու հիշատակություններում առկա նմանություններից՝ ակնհայտ է, որ Մատթեոս Ուռհայեցու տեղեկության մեջ միահյուսված են Գողթնի Աբու Դուլաֆ ամիրայի 983 թ. և Ռավվադյան Աբու ալ-Հայջա ամիրայի 988 թ. արշավանքներին առնչվող իրողությունները: Աբլհաճ ամիրային Հերի հետ կապելը հուշում է, որ տեղեկությունը մասամբ վերագրելի է Ռավվադյան Աբու ալ-Հայջայի 988 թ. արշավանքին, որը, ինչպես տեսանք, տեղի էր ունեցել հենց Հերի ամիրայի դրդումով: Մյուս կողմից Ապլղարիբի և Ճվաշ գավառի Բակ գյուղի հիշատակությունը տեղեկությունը մասամբ կապում է Աբու Դուլաֆի 983 թ. արշավանքի հետ, երբ Բակ գյուղի փոխարեն հիշված է Բակյար վայրը: Այն Բակ է կոչված նաև մանր ժամանակագրություններից մեկում, որտեղ 983 թ. ներքո մասնավորապես հիշատակված է. «Բակին կոտրումն յԱպուտլփոյ»[329]: Ակնհայտ է, որ ժամանակագիրը Բակի դեպքը կապում էր Աբու Դուլաֆի 983 թ. արշավանքի հետ: Ի վերջո, քանի որ իրադարձությունների զարգացումը տարբեր կերպ է նկարագրված Ասողիկի և Մատթեոս Ուռհայեցու երկերում, կարելի է եզրակացնել, որ Մատթեոս Ուռհայեցին նկարագրել է 988 թ. արշավանքի՝ Ասողիկի կողմից չմանրամասնեցված իրողությունները՝ երբեմն դրանք սխալմամբ միահյուսելով 983 թ. արշավանքին առնչվող դեպքերին: Ինչ վերաբերում է Անձևացյաց Դերենիկ թագավորի պարագային, ապա դա պարզ թյուրիմացություն է, քանի որ Վասպուրականի թագավոր Դերենիկը (Գրիգոր-Դերենիկ) վախճանվել էր

[328] Տե՛ս **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 189-191:

[329] «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 26:

նշված դեպքերից տասնամյակներ առաջ՝ 959 թ.[330], իսկ մյուս կարծեցյալ Դերենիկը իշխել է 990 թվականից սկսած: Մինչդեռ 988 թ. դրությամբ Անձևացյաց թագավորն էր Գուրգենը[331]:

Ի վերջո, անդրադառնալով Մանազկերտին՝ նշենք, որ այն 969 թ. ավերվել էր նահանջող բյուզանդական զորքի կողմից, որից հետո քաղաքը և շրջակայքը անցել էին Աշոտ Գ-ի տիրապետության ներքո: Այդ իրավիճակը պահպանվեց մինչև Աշոտ Գ-ի մահը[332]: Ըստ Ասողիկի՝ Բյուզանդիայում Վարդաս Սկլերոսի ապստամբության ընթացքում (976-979 թթ.)՝ 979 թ., Մանազկերտին տիրել և այն վերակառուցել է Նփրկերտի ամիրա Բատը (Բադ ալ-Քուրդի): Պատմիչը տեղեկացնում է, որ «... մինչ զայսու շփոթմամբ էր թագաւորութիւնն Յունաց, Խլաթայ եւ Նփրկերտոյ ամիրայն Բատն վերստին շինէ զքաղաքն Մանազկերտ եւ սրով եւ գերութեամբ անմարդացոյց զգաւառն Տարաւնոյ, յաւարի առեալ զքաղաքն Մուշ, խողխողեալ զքահանայս յեկեղեցւոջն, որ սուրբ Փրկիչ անուանի՝ ողորմելի տեսակաւ. յորում արեան ներկուածք ցարդ եւս ցուցանին ի նոյն յեկեղեցւոջ»[333]: Թեև պատմիչը Բատի կողմից Մանազկերտին տիրելը բացատրում է կայսրությունում տիրող խառնակ վիճակով՝ նկատի ունենալով Վարդաս Սկլերոսի ապստամբությունը, սակայն պետք է նշել, որ, փաստորեն, Սմբատ Բ-ն էլ որևէ կերպ չի կարողացել ընդդիմանալ Մանազկերտի զավթմանը, քանի որ Բատը, լինելով բավականին հզոր և ասպատակելով Տարոնը, հայոց թագավորի համար վտանգավոր հակառակորդ կարող էր դառնալ: Բադ ալ-Քուրդիին հիշատակում է նաև Իբն ալ-Ասիրը: 983-984 թթ. իրադարձությունների մասին պատմելիս հեղինակը տեղեկացնում է, որ Բատը քուրդ էր և սկզբում բյուզանդացիների դեմ մարտնչում էր Դիար Բաքրի կողմերում: Այնտեղ հզորանալով՝

---

[330] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ Ողորմած. թագավոր հայոց, էջ 75, ծանոթ. 262:

[331] Տե՛ս **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 181:

[332] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ Ողորմած. թագավոր հայոց, էջ 46-48:

[333] **Ասողիկ**, էջ 763:

նա գրավեց Նփրկերտը, Դիար Բաքրի մեծ մասը, Մծբինն ու Մոսուլը: Իբն ալ-Ասիրը ճշգրտում է, որ Բատն ամենասկզբում գրավել է Արճեշ քաղաքը, որից հետո միայն՝ վերոհիշյալ քաղաքները[334]: Թերևս հենց Արճեշին տիրելու հետ միաժամանակ Բատը տիրել է Ապահունիք գավառին և վերակառուցել Մանազկերտը, որտեղից էլ այնուհետև արշավել է Տարոն: Ասողիկը 986 թ. դրությամբ Բատին կոչում է «Բատն Ապահունեաց եւ Նփրկերտոյ ամիրայն»[335]՝ փաստորեն, ներկայացնելով նրա իշխանության սահմանները:

Բատի հզորությանը, սակայն, շուտով ծանր հարված հասցվեց: 987 թ.՝ Վարդաս Սկլերոսի զորքի կազմում կռվող մուսուլմանական զորախումբը վերջինիս պարտությունից հետո վերադառնալիս, ասպատակեց Ապահունիքը: Ըստ Ասողիկի՝ այդ զորախմբի զինվորները «... գերեն առիւ ի հարաւոյ մինչեւ յԱպահունիս»[336]: Նշված աշխարհագրական միջավայրը համապատասխանում է Բատի ամիրայությանը, որի բնակիչները, փաստորեն, գերեվարվել են: Դրանով իսկ Բատի հզորության ուժգին հարված հասցվեց: 990 թ.՝ Համդանյանների ամիրայության դեմ պատերազմում, Բատը պարտվեց, գերեվարվեց ու գլխատվեց, իսկ նրա տիրույթները, բացառությամբ Ապահունիքի, բաժին հասան քրոջ որդուն[337]:

Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքում ձևավորված մյուս՝ Գանձակի Շադդադյան ամիրայությանը, ապա 978 թ.՝ Լաշքարի ամիրայի[338] մահից հետո, այնտեղ խառնաշփոթ վիճակ էր, և կայունություն հաստատվեց միայն 980-ական թթ. երկրորդ կեսին[339]: 980-ական թթ. ողջ ընթացքում Շադդադյան ամիրայությունն առանձնակի ակտիվությամբ աչքի չի ընկել:

---

[334] Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 203:

[335] **Ասողիկ**, էջ 802:

[336] Նույն տեղում, էջ 803:

[337] Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 205:

[338] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ Ողորմած. թագավոր հայոց, էջ 106-107:

[339] Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 16, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյան-

## 3.4. Թագավորության արտաքին և ներքին դրությունը 980-ական թթ. երկրորդ կեսին

Բագրատունիների թագավորության՝ 980-ական թթ. երկրորդ կեսի զարգացումների վերաբերյալ շատ բան հայտնի չէ: Սակավ տեղեկություններից մեկն էլ հնարավորություն է տալիս հստակեցնելու Ատրպատականի Ռավվադյան տիրակալների հետ Սմբատ Բ-ի հարաբերությունների էությունը: Ըստ Ասողիկի՝ Ռավվադյան Աբու ալ-Հայջա ամիրան 100 հազար բանակով արշավեց Գողթնի ամիրայի դեմ և գրավեց նախկինում Սալարյաններին պատկանող քաղաքները, որոնց թվում՝ Դվինը: Այնուհետև նա «խնդրէ հարկս զանցեալ ամացն ի Հայոց. զոր ընդդէմ յուղարկեալ զհարկսն թագաւորն Սմբատ մեծամեծ ընչիւք՝ դարձոյց»[340]: Պատմիչի այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Ռավվադյան ամիրայի արշավանքի բուն թիրախը Գողթնի ամիրայությունն էր, որի հզորությունը հաշվի առնելով՝ նրա դեմ արշավել էր հսկա բանակով: Այնուհետև Ռավվադյանների բանակը հասել է Դվին, գրավել այն, որից հետո միայն ամիրան «խնդրէ հարկս զանցեալ ամացն ի Հայոց», ինչը հուշում է, որ Սմբատ Բ-ն Ռավվադյանների ամիրայությանը հարկատու էր դարձել տարիներ առաջ՝ ամենայն հավանականությամբ նրանց՝ Ատրպատականին տիրանալու շրջանից՝ 983 թվականից[341]: Այդ ժամանակ Փառիսոսում և հատկապես Սյունիքում տեղական թագավորությունների հռչակումը, որոնցից վերջինը, ինչպես տեսանք, տեղի էր ունեցել Ռավվադյանների աջակցությամբ, Անիի Բագրատունի գահակալին դրել էր ծանր վիճակի մեջ, և Ատրպատականի նոր տերերի վտանգը երկրից հեռացնելու համար Սմբատ Բ-ն հարկատվական պարտավորություն էր ստանձնել: Ի դեպ, վերջին իրողությունը, փաստորեն, ձևական բնույթ էր կրել, քանի որ 987 թ. դրությամբ,

ների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 480, **Վարդան վարդապետ**, էջ 100:

340 **Ասողիկ**, էջ 767-768:

341 Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 164, 168:

պարզվում է, հարկերը չէին վճարվել, և միայն այդ ժամանակ Ռավվադյան ամիրան պահանջեց ու ստացավ նախորդ տարիների հարկերը: Ըստ որում՝ հարկերի հետ միասին Սմբատ Բ-ն նրան մեծամեծ նվերներ ուղարկեց, որի շնորհիվ հնարավոր եղավ խուսափել թշնամական զորքի ներխուժումից:

Արդեն հաջորդ՝ 988 թ., երբ Վասպուրական արշավելիս մեռավ Աբու ալ-Հայջա Ռավվադյանը, Սմբատ Բ-ն սկսեց դաշնակցել Գողթնի ամիրայի հետ, որը կրկին տիրել էր Դվինին: Ըստ որում՝ հարկ եղավ դաշինքը երդմամբ հաստատելու համար որպես միջնորդ առաքել Խաչիկ Ա կաթողիկոսին[342]: Խնդիրն այն է, որ, ինչպես ներկայացնում է Ասողիկը, Սմբատ Բ-ն «...ստեաց ... երդմանն. զոր հաստատեալ էր նա առ ամիրայն Գողթան, զոր նա ըստ հեթանոսական դենին պահեաց, եւ սա քրիստոսական աւրինաւք ոչ պահեաց. այլ ուխտադրուժ եղեալ՝ տայ զզաւրսն Հայոց աւգնական Սալարին՝ ամիրայացուցանել զնա, որ մերժեալն էր յԱստուծոյ. եթէ ոչ էր խափանեալ ի կասկածանաց նենգոյ եղբաւր իւրոյ Գագկայ»[343]: Փաստորեն, Սմբատ Բ-ն և Գողթնի ամիրան նախկինում ամենայն հավանականությամբ երդմամբ պայմանավորվել էին չաջակցել մեկը մյուսի թշնամիներին, սակայն Բագրատունի տիրակալը երդմնադրուժ էր եղել և զորք ուղարկել Սալարյան ամիրային՝ օգնելու նրան իր աթոռին վերահաստատվելու: Դատելով Ասողիկի վկայությունից՝ նա իր մտադրությունից ի վերջո հրաժարվել է եղբոր՝

---

[342] Տե՛ս **Ասողիկ**, էջ 769: Տրամաբանական է կարծել, որ այդ դաշինքով «հայոց թագավորությունն ապահովագրվում էր մահմեդական ամիրայությունների հարձակումներից, Հայաստանում նրանք այլևս չէին շարունակելու կենտրոնախույս ուժերին խրախուսելու իրենց գործելակերպը»: **Ալեքսանյան Վ.**, Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի աթոռակալությունը և հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտությունը 10-րդ դարի վերջին քառորդին, «Վէմ» համահայկական հանդես, 2020, № 3, էջ 77:

[343] **Ասողիկ**, էջ 807:

Գագիկի պատճառով[344]: Այդ իրադարձությունը կարելի է վերագրել միայն 982 թ., երբ Աբու ալ-Հայջա Սալարյանը մեծ զորքով հարձակվել էր Գողթնի ամիրայության վրա, բայց պարտություն էր կրել ու կորցրել իր տիրույթները, իսկ այնուհետև՝ նաև իշխանությունը Ատրպատականում (Ասողիկի երկի համապատասխան գլուխը [գիրք Գ, գլուխ 12) կոչվում է «Վասն ... բառնալոյ իշխանութեան նորա (իմա՛ Աբու ալ-Հայջա Սալարյանի – Ա. Ե.)»][345]: Ըստ Ասողիկի՝ նա այնուհետև շրջում էր Հայաստանում և Վիրքում՝ պատմելով, թե «Քրիստոսի խաչին թշնամի լինելու պատճառով» է զրկվել իշխանությունից[346]: Անկասկած, հենց այդ ժամանակ էլ Սմբատ Բ-ն որոշել է զորք ուղարկել նրան օգնելու: Ոչ վաղ անցյալի թշնամուն աջակցելու՝ Սմբատ Բ-ի՝ առաջին հայացքից խիստ հակասական քայլի պատճառն ակնհայտ է: Գողթնի ամիրան, որին երդմամբ կապված էր Սմբատ Բ-ն, հաղթելով Սալարյան ամիրային, տիրացել էր նրան պատկանող քաղաքների շարքում նաև Դվինին[347]՝ վտանգ ստեղծելով Բագրատունյաց տիրույթների համար, ուստի իր այդ քայլով Սմբատ Բ-ն փորձում էր բարդ դիվանագիտական հնարք կատարել՝ երկրում թափառող Սալարյան ամիրային օգնելու և ամենայն հավանականությամբ Գողթնի ամիրայությանը հակադրելու ճանապարհով վերջինիցս եկող վտանգը չեզոքացնելու համար: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Սմբատ Բ-ի այդ քայլի նպատակը Դվինը, Նախճավանը և Գողթնը իրեն ենթարկելն էր[348]: Սակայն

---

[344] Պետք է նշել, որ Վարդան վարդապետից հայտնի է, թե «Եւ Գագիկ սակաւ ինչ կեցեալ ընդ եղբօրն, հալածական լինի վասն կարծեաց ինչ դրժանաց»: **Վարդան վարդապետ**, էջ 90: Կարելի է ենթադրել, որ խոսքը հենց նշված իրադարձության մասին է, քանի որ «սակաւ ինչ կեցեալ ընդ եղբօրն» արտահայտությունը հուշում է, որ Սմբատ Բ-ի գահ բարձրանալուց կարճ ժամանակ անց է դա տեղի ունեցել, իսկ ենթադրյալ 982 թվականը համապատասխանում է դրան:

[345] Տե՛ս **Ասողիկ**, էջ 761:

[346] Տե՛ս նույն տեղում:

[347] Տե՛ս նույն տեղում:

[348] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 179:

Սմբատ Բ-ի մտադրությունը ի կատար չէր ածվել, և Աբու ալ-Հայջա Սալարյանը հեռացել էր Հայաստանից[349], բայց Գողթնի ամիրան տեղյակ էր Սմբատ Բ-ի արարքի մասին, և այնժամ, երբ նրանց շահերը համընկել են ընդհանուր հակառակորդի դեմ պայքարում, Գողթնի ամիրայի հետ դաշինքը վերահաստատելու համար անհրաժեշտ էր եղել հայոց կաթողիկոսի միջնորդությունը:

Դվինը վերստին Ռավվադյաններից հետ խլած Գողթնի ամիրայի հետ դաշինքի իրողությունը ցույց է տալիս, որ Սմբատ Բ-ն փորձ է կատարել ազատվել Ռավվադյան ամիրաներից ունեցած կախվածությունից, ինչը հաջողությամբ է պսակվել: Ավելին՝ այդպիսով Սմբատ Բ-ն ամրապնդել է թիկունքը և անմիջապես Տայքի Դավիթ կուրապաղատի խնդրանքով, ինչպես տեսանք, 988 թ. հայոց միացյալ բանակով շարժվել նրան օգնության՝ ընդդեմ աբխազաց թագավորի բանակի:

Անկասկած, թագավորության վերջին տարիներին Սմբատ Բ-ի գործերը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին հարաբերություններում հաջող ընթացք էին ստացել, քանի որ Ասողիկը հաղորդում է, որ «...յաջողեցաւ գործ թագաւորին Հայոց Սմբատայ ի ներքնոց եւ յարտաքնոց»[350]: Ըստ որում՝ պատմիչը տեղեկացնում է, որ «...մեծացաւ յոյժ ի յղփութիւն հացի եւ ի լիութիւն գինւոյ»[351], ինչը հուշում է, որ երկիրը տնտեսական վերելք է ապրել: Բայց միայն տնտեսական զարգացումը չէր Սմբատ Բ-ի «ի ներքնոց» հաջողության վկայությունը, այլ նաև այն, որ գահակալության առաջին շրջանում հարևան մուսուլման տիրակալների աջակցությամբ կենտրոնախույս նկրտումներ դրսևորած տեղական արքայիկները 980-ական թթ. ավարտին արդեն միավորվել էին նրա շուրջը՝ ամենայն հավանականությամբ այդ միավորման մեջ փնտրելով գիշատիչ հարևաններից պաշտպանվելու հնարավորությունը:

---

[349] Տե՛ս **Ասողիկ**, էջ 761:

[350] Նույն տեղում, էջ 806:

[351] Նույն տեղում:

Պետք է նշել նաև, որ Սմբատ Բ-ն ընդարձակում էր արքունի տիրույթները տարբեր արքայիկների հողերի հաշվին: Ինչպես վկայում է Ասողիկը, Գագիկ Ա թագավորը «տիրեաց ... յոլով բերդից եւ գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ եւ Խաչենոյ եւ Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր»[352], որը հուշում է, որ Գագիկից առաջ նշված ուղղություններով արքունի տիրույթներն ընդարձակել է Սմբատ Բ-ն[353]: Խնդիրն այն է, որ իրենց տարածքներն ընդարձակելու միտումներ դրսևորող Անիի տիրակալները դեպի արևելք՝ Կարսի թագավորության ուղղությամբ տարածվելու հնարավորություն չունեին Դավիթ կուրապաղատի դիմադրության պատճառով, որի հետաքրքրությունների շրջանակում էր նաև Ապահունիքը, իսկ հարավային ուղղությամբ գտնվում էր բավականին հզոր Վասպուրականը, ուստի նրա տարածքներին հավակնելն այնքան էլ հեռանկարային չէր:

Ի վերջո, անհրաժեշտ է անդրադառնալ նաև հայագիտության մեջ շրջանառված այն տեսակետին, որ Սմբատ Բ-ին հաջողվել էր Դվինը միացնել իր տիրույթներին: Բ. Առաքելյանը ենթադրում էր, որ Սմբատ Բ-ին դա հաջողվել էր Սալարյան ամիրային աջակցելու և Գողթնի ամիրային իրենից կախման մեջ գցելու շնորհիվ[354]: Ս. Երեմյանը համարում էր, որ 982 թ. Սմբատ

---

[352] **Ասողիկ**, էջ 808:

[353] Լեոն կասկածում էր, որ Ասողիկի հիշատակության մեջ նշված «զեղբայր իւր»-ը վերաբերում էր Սմբատ Բ-ին. «...Չգիտենք էլ, թե այդ ո՞ր եղբայրն էր – Սմբա՞տը, թե՞ Գուրգենը...» (**Լեո**, նշվ. աշխ., էջ 600, ծանոթ. 1): Սակայն մեծանուն հայագետի կասկածն անտեղի է, քանի որ Ասողիկը հիշատակում է նրա կատարած նվաճումների ուղղությունները դեպի Վայոց ձոր, Խաչեն և Փառիսոս, որոնցից առաջին երկուսը Տաշրաց թագավոր Գուրգենի համար անհասանելի էին վերջինիս թագավորության հետ դրանց ընդհանուր սահմանի բացակայության պատճառով: Ավելին՝ անհավանական է, որ Ասողիկը, ներկայացնելով Գագիկ Ա-ի կողմից արքունի տիրույթների ընդարձակումը, նրա հաջողությունները համեմատեր ոչ թե նրա նախորդի՝ Սմբատ Բ-ի, այլ Տաշրաց Գուրգեն թագավորի ձեռքբերումների հետ:

[354] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 133:

Բ-ն պարտության է մատնել Աբու ալ-Հայջա Սալարյանին և գրավել Դվինի ամիրայությունը: Հետազոտողը կարծում էր, որ այդպիսով Սմբատ Բ-ն այնքան էր հզորացել, որ «Տիեզերակալ» տիտղոսն էր ստացել[355]: Նա հղումը կատարում էր Ասողիկի երկի երրորդ հանդեսի ԺԲ գլխին, որտեղ խոսքն իրականում Գողթնի ամիրայի կողմից Սալարյան Աբու ալ-Հայջայի ջախջախման և նրան պատկանող Դվինին ու մյուս քաղաքներին տիրելու մասին է («Եւ մարտուցեալ [Աբու ալ-Հայջան – Ա. Ե.] ընդ ամիրային Գողթան Աբուտլփոյ՝ պարտեցաւ ի նմանէ. եւ կալանաւոր արարեալ [Գողթնի ամիրան – Ա. Ե.] զնա՝ հանէ ի նմանէ զԴուին և զամենայն քաղաքս նորա»[356]):

Դվինի գրավումը Սմբատ Բ-ի կողմից հիմնավորելու համար Ս. Երեմյանը հղում էր նաև Է. Հոնիգմանի աշխատությանը, որտեղ հեղինակը, հիմնվելով Ասողիկի երկի նույն հանդեսի նույն գլխի վրա, խոսում էր այն մասին, թե Դվինին կարճ ժամանակով՝ մինչև 982 թվականը, տիրել է Կարսի թագավոր Մուշեղը, բայց քաղաքը նրանից խլել է Գողթնի ամիրան[357]: Ակնհայտ է, որ թե՛ Ս. Երեմյանը և թե՛ Է. Հոնիգմանը սխալ են մեկնաբանել Ասողիկի տեղեկությունը: Թերևս այդ իրողությունն է նկատել Վ. Ստեպանենկոն, որը, հղելով Ս. Երեմյանի խնդրո առարկա տեսակետին, Դվինի ամիրայության միացումը Անիի թագավորությանը ընդհանուր առմամբ վերագրում է Սմբատ Բ-ի և Գագիկ Ա-ի գահակալության շրջանին[358]:

---

[355] Տե՛ս **Еремян С.**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 3, էջ 10:

[356] **Ասողիկ**, էջ 761:

[357] Տե՛ս **Honigmann E.**, Die Ostgrenze des byzantinischen Reiches: von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935, S. 158:

[358] Տե՛ս **Степаненко В.**, Политическая обстановка в Закавказье в первой половине XI в., «Античная древность и средние века», Свердловск, 1975, вып. 11, с. 124-125:

Պետք է նշել, որ Դվինի՝ Սմբատ Բ-ին պատկանելը թեականորեն կարելի է բխեցնել Ասողիկի երկում Աբու ալ-Հայջա Ռավվադյանի 987 թ. արշավանքի նկարագրությունից, ըստ որի՝ հարձակվելով Գողթնի ամիրայի վրա և սկզբում նրանից խլելով նախկինում Սալարյաններին պատկանող քաղաքները՝ Ռավվադյան ամիրան այնուհետև «...գայ հասանէ ի Դուին քաղաք եւ առնու զնա, խնդրէ հարկս զանցեալ ամացն ի Հայոց»[359]: Տպավորություն է, որ Դվինը չէր մտնում Աբու ալ-Հայջայի կողմից սկզբում գրավված քաղաքների մեջ, և հայոց հինավուրց մայրաքաղաքի գրավումն ու հայոց թագավորից հարկեր պահանջելը դիտարկելի են ընդհանուր տրամաբանության մեջ, այսինքն՝ Ատրպատականի տիրակալը Դվինը գրավել է Սմբատ Բ-ից[360]: Ուստի Դվինի՝ Սմբատ Բ-ի իշխանության ներքո անցնելու վարկածը ճշգրտման կարիք ունի: Ինչպես վերը տեսանք, 980-ական թթ. Դվինը ձեռքից ձեռք էր անցնում: 982 թ. Ատրպատականի ամիրա Սալարյան Աբու ալ-Հայջան այն զիջեց Գողթնի ամիրա Աբու Դուլաֆին, որը Դվինին տիրեց մինչև 987 թվականը[361]: 987 թ. Դվինը գրավեց Ատրպատականի Ռավվադյան ամիրա Աբու ալ-Հայջան, որի ներխուժումից Սմբատ Բ-ն իր տիրույթները զերծ պահեց մեծամեծ նվերներ ու հարկեր տալով[362]: Իսկ երբ Աբու ալ-Հայջա Ռավվադյանը անակնկալ մահացավ 988 թ., Գողթնի ամիրան վերագրավեց Դվինն ու դաշինք կնքեց Սմբատ Բ-ի հետ[363]: Ակնհայտ է, որ 980-ական թթ. Դվինի միացումը Բագրատունիների արքունի տիրույթներին հավանական չէր[364]:

---

[359] **Ասողիկ**, էջ 767-768:

[360] Մ. Չամչյանցը, որը նկատել էր Ասողիկի տեքստի այդ տրամաբանությունը, հարկ էր համարել Աբու ալ-Հայջայի կողմից Դվինի գրավման մասին խոսելիս հավելել, թե այն «...ևս էր ի ձեռս ապուտէլփայ»: Տե՛ս **Չամչեանց Մ**., նշվ. աշխ., էջ 868:

[361] Տե՛ս **Ասողիկ**, էջ 767-768:

[362] Նույն տեղում:

[363] Տե՛ս նույն տեղում, էջ 769:

[364] Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում էր, որ Գողթնի ամիրայությունը և Դվինն 990-ական թթ. իր իշխանությանն է ենթարկել Գագիկ Ա-ն՝ այն-

Դրա հիմնավորումն է այն, որ 980-ական թթ. երկրորդ կեսին իր «Լավագույն բաժանումները երկրամասերի ճանաչման համար» խորագրով պատմաաշխարհագրական երկը շարադրած արաբ հեղինակ Մուկադդասին հաղորդում է, որ այդ ժամանակ Դվինում մեծամասնություն էին կազմում քրիստոնյաները, այնտեղ էին բնակվում նաև քրիստոնյա ազնվականներ, սակայն «[քաղաքը] պահպանում են քրդերը»[365]: Անկասկած, «քրդեր» ասելով՝ հեղինակը նկատի ունի Ռավվադյաններին, որոնց քրդական ծագման մասին խոսվեց վերը, և նրանց զորքը, ուստի իշխանությունն էլ վերագրելի է 980-ական թթ. երկրորդ կեսին:

Հավելենք նաև, որ Սմբատ Բ-ին չի հաջողվել իրենից կախման մեջ զցել Գողթնի ամիրային, այլ, ինչպես տեսանք, նրա կողմից Դվինը 988 թ. գրավելուց հետո կաթողիկոսի միջնորդությամբ նրա հետ դաշինք է կնքել:

Արտաքին ճակատում Սմբատ Բ-ի հաջողությունները պայմանավորված էին գահակալության վերջին տարիներին Այսրկովկասում նրա դերի բարձրացմամբ և Գողթնի ամիրայի հետ դաշինքի նորոգմամբ, որով էլ ամրապնդվեց Բագրատունյաց թագավորության անվտանգությունը:

---

տեղ նշանակելով ոմն Դավիթ Դվնեցու: Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 179-181, 264: Տե՛ս նաև «Հայոց պատմություն», հ. II, գիրք երկրորդ, էջ 58:

365 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, «Արաբ մատենագիրներ» (Թ-Ժ դարեր), ներածությունը և բնագրերից թարգմանությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2005, էջ 653:

### 3.5. Սմբատ Բ-ի մահվան հանգամանքները

Սմբատ Բ-ի ժամանակակից հեղինակ Ասողիկն իր հիշատակություններում նրա նկատմամբ առանձնապես բարեհաճ չէ: Ավելին, պատմիչը նրան մեղադրում է ծանր հանցանքների մեջ:

Ըստ Ասողիկի, երբ հաջողվեցին Սմբատ Բ-ի գործերը երկրի ներսում և դրսում, ու երկիրը տնտեսական վերելք ապրեց, «անաւրինացաւ նա. բարձրացաւ սիրտ նորա եւ բարձրացաւ առաւել քան զինքն»: Ըստ որում՝ հեղինակը մատնանշում է արքայի գործած երեք չարիք[366]: Առաջին չարիքը խելացնոր, բայց անմեղ մարդուն մահապատժի ենթարկելն էր: Արքունի համբարանոցները իրի ճարակ էին դարձել, և հրկիզողը հայտնի չէր: Բայց մի խելացնոր մարդ եկեղեցուց վերցնում է կրակարանը և փորձում դուրս տանել: Հարցին, թե ուր է տանում, նա պատասխանում է՝ «գնում եմ այրելու թագավորի համբարանոցները»: Սմբատ Բ-ն հրամայում է կուրացնել նրան, իսկ հետո՝ ողջակիզել: Այնուհետև նրա այրված մնացորդները քաղաքի պարսպից դուրս են նետում, բայց կրոնավորներից ոմանք որոշում են դրանք հողին հանձնել քրիստոնյային վայել ձևով: Իմանալով այդ մասին՝ Սմբատ Բ-ն խիստ բարկանում է, հրամայում գերեզմանից հանել այրված մարմինը և նետել շներին: Առավոտյան կրոնավորները տեսնում են դժբախտի՝ շների բաժին դարձած մարմինը և անիծում արքային, թե «այսպէս եւ նորա ոսկերացն ելանել ի գերեզմանէն»[367]:

Սմբատ Բ-ի գործած երկրորդ չարիքը Գողթնի ամիրայի հետ ուխտի դրժումն էր, որի մասին խոսվեց վերը, իսկ երրորդը «սարսափելի եւս է, զի զդուստր քուերն իւրոյ էառ խառնակութեամբ»: Բայց կինը շուտով մահացավ, ինչից հետո՝ նրա մահը ողբալիս, ծանր հիվանդացավ («...հարաւ եւ ինքն բորբոքմամբ տապոյ բոցակէզ ցաւոց...») նաև Սմբատ Բ-ն և վախճանվեց հայոց 438 թ. (մարտ, 989 թ.-մարտ, 990 թ.)[368]:

---

[366] Տե՛ս **Ասողիկ**, էջ 806:

[367] Նույն տեղում, էջ 806-807:

[368] Տե՛ս նույն տեղում, էջ 807:

Ինչպես տեսնում ենք, Ասողիկի կողմից Սմբատ Բ թագավորին վերագրված չարիքները վերաբերում են երեք առանձին դեպքերի՝ անարդար մահապատժի հրամանին, ուխտադրժությանը և արյունապղծությանը, սակայն առնվազն առաջին երկուսի առումով արքայի մեղքը հաստատված համարել չի կարելի: Մասնավորապես, պատմիչն ինքն է հաղորդում, որ մահապատժի դատապարտվածն անձամբ է հայտարարել, որ կրակը ձեռքին գնում է թագավորական համբարանոցները այրելու (թեկուզ և դեպքը տեղի ունեցած լիներ համբարանոցների այրվելուց հետո), ուստի Սմբատ Բ-ին մեղադրել չարիք գործելու մեջ, այնքան էլ արդարացված չէ: Ավելին՝ թվում է, որ ներկայացված պատմության մեջ կրոնավորների նզովքը Ասողիկի հավելումն է, քանի որ նրան հայտնի էր այն, որ մահից հետո Սմբատ Բ-ի մարմինը արտաշիրիմվել է ժողովրդի ու զորքի պահանջով, ուստի հեղինակը հետին թվով փորձել է դա կապել Սմբատ Բ-ի գործած չարիքի հետ:

Երկրորդ դեպքը՝ Գողթնի ամիրայի հետ դաշինքի երդման դրժումը, չարիք համարելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ դա դիվանագիտական հնարք էր՝ երկու թշնամիներին դեմ առ դեմ հանելով՝ վտանգը երկրից հեռացնելու համար: Բայց քանի որ Սմբատ Բ-ի մտադրությունը նրա եղբայր Գագիկի պատճառով չէր իրականացել, ուստի վերջինիս գովերգող հեղինակը թագավորի դիվանագիտական հնարքը որպես չարիք է ներկայացնում:

Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ չնայած Ասողիկի կողմից Սմբատ Բ-ին վերագրվող չարիքներին և կրոնավորների վերաբերմունքին՝ նա ժողովրդի և զորքի կողմից սիրված տիրակալ է եղել: Ըստ Ասողիկի՝ Սմբատ Բ-ի մահից հետո Անիից մի կին երազ է տեսնում և պատմում քաղաքացիներին, որ արքան չի մեռել, այլ գերեզման է դրվել դեղերով թմրեցված վիճակում, կենդանի է և երևացել է իրեն: Լուրն արագորեն տարածվում է քաղաքում, և Գագիկ Ա-ն հրամայում է նույն այն մարդուն, որը գերեզմանից հանել էր Սմբատ Բ-ի հրամանով ողջակեզ արված մարդու մնացորդները, բացել արքայի գերեզմանը և զորքին ու բնակիչներին հավաստիացնել, որ նա իրոք մեռել է: Ըստ Աս-

դիկի՝ այդպես կատարվեց կրոնավորների նզովքը[369]: Փաստորեն, Սմբատ Բ-ի դիակը ստիպված հանել են գերեզմանից, քանի որ անեցիների մեջ տարածվել էր, որ նրան թաղել են կենդանի վիճակում: Ավելին՝ ստիպված եղան Սմբատ Բ-ի մեռած լինելու մասին, անեցիներից բացի, պատմել նաև զորքին, որից կարելի է եզրակացնել, որ հատկապես Անիի կայազորի շրջանում Սմբատ Բ-ի նկատմամբ սերն ու հավատարմությունը խիստ մեծ էր, ուստի անհրաժեշտ էր հենց նրան ապացուցել, որ որևէ դավադրություն չկա, և նա իրոք վախճանվել է:

Ի վերջո, անհրաժեշտ է նշել, որ պատմագիտության մեջ կա տեսակետ, որ Սմբատ Բ-ն զոհ է գնացել եղբոր՝ Գագիկի կազմակերպած դավադրությանը[370]: Այդ ենթադրության համար հիմք է հանդիսացել այն, որ Ասողիկը, գովերգելով Գագիկ Ա-ին, հավելում է, թե «աւա՜ղ միում չարին, որ արգել զբան գովեստի պատմութեան իմոյ»[371]:

Կա տեսակետ, թե Գագիկը Սմբատ Բ-ի օրոք աքսորված էր և վերադարձավ միայն նրա մահից հետո[372], որով կարծես թե Սմբատ Բ-ի սպանության կասկածները նրանից հեռանում են: Այդ տեսակետի հիմքում Վարդան վարդապետի տեղեկությունն է, ըստ որի՝ Գագիկը Սմբատ Բ-ի գահ բարձրանալուց հետո կարճ ժամանակ մնաց նրա հետ, սակայն կասկածվեց դավաճանության մեջ ու աքսորվեց արքունիքից: Եվ միայն Սմբատ Բ-ի մահից հետո, ըստ հեղինակի, «նոյնժամայն կոչեն զհալածեալն Գագիկ, և տան նմա զթագն...»[373]: Սակայն իրականում Գագիկը աքսորից ավելի վաղ էր վերադարձել, քանի որ արդեն 988 թ. Սմբատ Բ-ի կողքին էր՝ Դավիթ կուրապաղատին զորքով օգնության մեկնելիս[374]: Բայց, քանի որ Սմբատ Բ-ի մահը համարվում

---

[369] Տե՛ս **Ասողիկ**, էջ 808:

[370] Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 605, **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 113:

[371] **Ասողիկ**, էջ 808:

[372] Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, § 788, սյուն 1142:

[373] **Վարդան վարդապետ**, էջ 90:

[374] Տե՛ս **Ասողիկ**, էջ 806:

էր «կանխաժաման»[375], ուստի մեծ է հավանականությունը, որ նա դավադրության զոհ է դարձել, և Գագիկի գործած «միում չարինը» իրոք կարող էր վերաբերել Սմբատ Բ-ի սպանությանը: Ըստ որում՝ Հ. Հարությունյանը համարում էր, որ Սմբատ Բ-ի սպանության պատճառն այն էր, որ նա թույլ թագավոր էր և չէր համապատասխանում հայ ավագանու պահանջներին, իսկ վերջինս կարիք ուներ ռազմատենչ գործչի: Ուսումնասիրողը համոզված էր, որ Սմբատ Բ-ի սպանությունը կազմակերպվել էր Գագիկ Բագրատունու և հայ ավագանու կողմից[376]:

Սմբատ Բ-ն, ըստ Ասողիկի, մահացել է հայոց 438 թ. (մարտ, 989-մարտ, 990 թ.), իսկ «ի նոյն ամի» գահը ժառանգած Գագիկ Ա-ն՝ «թագաւորեաց ... ի ՆԼԸ (438 թ. –Ա. Ե.) թուականին, յաւուրս ձմերայնոյ...»[377]: Ակնհայտ է, որ Սմբատ Բ-ն վախճանվել, իսկ Գագիկ Ա-ն գահ է բարձրացել հայոց 438 թ. ձմռանը, այսինքն՝ 989 թ. դեկտեմբեր կամ 990 թ. հունվար-փետրվար ամիսներին: Մ. Չամչյանցը կարծում էր, որ Սմբատ Բ-ն վախճանվել է 989 թ. նոյեմբերին՝ 12 տարի և 7 ամիս գահակալելուց հետո[378], իսկ ըստ Մ. Օրմանյանի՝ 990 թ. սկզբին[379]: Իրականությանն ավելի համապատասխանում է Մ. Օրմանյանի տեսակետը, քանի որ ըստ Ասողիկի՝ Սմբատ Բ-ն գահ էր բարձրացել հայոց 426 թ. (մարտ, 977 թ.-մարտ, 978 թ.)՝ հոր մահից (978 թ. հունվարի 3) անմիջապես հետո, և թագավորել է 13 տարի[380]: Նրա գահակալության 13-րդ տարին լրանում էր 990 թ.: Ըստ այդմ՝ «յաւուրս ձմերայնոյ» արտահայտությունը վերագրելի է հենց 990 թ. հունվար-փետրվար ամիսներին:

Ի վերջո, կարևոր է նաև Սմբատ Բ-ի գերեզմանի տեղորոշումը: Չնայած նրա հայրը՝ Աշոտ Գ Ողորմածը, թաղված էր Հոռոմոսի վանքում, Սմբատ Բ-ն, դատելով Ասողիկի հաղորդու-

---

[375] **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, էջ 178:

[376] Տե՛ս **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 113:

[377] **Ասողիկ**, էջ 808:

[378] Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 871:

[379] Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ա., § 788, սյուն 1142:

[380] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

մից, իր հավերժական հանգիստը գտավ Անիում: Ըստ պատմիչի՝ արքան «...մեռաւ անդէն և թաղեցաւ ի նմին քաղաքի (իմա՛ Անի – Ա. Ե.)»[381]: Թերևս պատճառն այն էր, որ Անին՝ իր նոր ու վեհաշուք կերպարանքով, հենց Սմբատ Բ Տիեզերակալի ստեղծագործությունն էր, ուստի էլ որտե՞ղ, եթե ոչ Անիում պետք է հանգչեր նա[382]: Բայց թե Անիի հատկապես ո՞ր մասում է նա թաղվել, անհայտ է:

---

[381] Տե՛ս **Ասողիկ**, էջ 808:

[382] Հետաքրքիր տեսակետ է հայտնել Ա. Մանուկ-Խալոյանը, ըստ որի՝ Անիում Սմբատ Բ-ի թաղվելու պատճառն այն էր, որ Հոռոմոսը պաշտպանված չէր և կարող էր ենթարկվել թշնամիների հարձակմանը, ինչպես եղավ 982 թ. (տե՛ս նույն տեղում, էջ 761): Մինչդեռ Անին՝ իր բարձրաբերձ ու ամրակուռ պարիսպներով, ապահով էր ողջերի ու մեռյալների համար: Տե՛ս **Manuk-Khaloyan A.**, In the cemetery of their ancestors: the royal burial tombs of the Bagratuni kings of Greater Armenia (890-1073/79), «Revue des études Arméniennes», 2013, tome 35, pp. 171-172:

# ՎԵՐՋԱԲԱՆ

Սմբատ Բ Տիեզերակալի գահակալության շրջանը Բագրատունյաց թագավորության պատմության խիստ հետաքրքրական և միևնույն ժամանակ հենքային փոփոխությունների ժամանակն էր:

Գահակալության սկզբում տիրող համեմատաբար կայուն խաղաղության պայմաններում Սմբատ Բ-ն զբաղվել է խաղաղ շինարարությամբ: Այդ ժամանակ մայրաքաղաք Անին մեծապես ընդարձակվել էր, և անհրաժեշտություն էր առաջացել նոր՝ ավելի ընդարձակ պարսպի կառուցման: Գահ բարձրանալուց անմիջապես հետո Սմբատ Բ-ն ձեռնամուխ եղավ նոր պարիսպների և հարակից պաշտպանական համակարգերի վիթխարի նախագծի իրականացման աշխատանքներին, որոնք տևեցին շուրջ 10 տարի:

